

ՀԱՆՐԻԿ ՅՈՎՐԱՆԻՍՅԱՆ

## ՄԻՋԱԴԱՐՅԱՆ ԲԵՄ

ԹԱՏՐՈՆ - ԵԿԵՂԵՑԻ

ԿԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՅ

ՀՈԳԵՎՈՐ ՈՐԱՄԱՆ

ԱՐԳԻՒ ԽԱՉԵՐՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԻԿ ՅՈՎՐԱՆԻՍՅԱՆ . ՄԻՋԱԴԱՐՅԱՆ ԲԵՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԻԿ ՅՈՎՐԱՆԻՍՅԱՆ

ԴՐԱՆԴՐԱՆ

ԱՐԵՎԱՏՅԱՆ ԹԱՐԱԿԱՆ ԱՐԵՎԱՏՅԱՆ ԹԱՐԱԿԱՆ  
ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ

Էսթետիկա, արվեստի տեսություն

THEATRICAL DRAMATICS

THEATRICAL DRAMATICS

THEATRICAL DRAMATICS  
CORRELATION AND THEATRICAL DRAMATICS

THEATRICAL DRAMATICS



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA  
INSTITUTE OF ARTS

HENRIK HOVHANNISYAN

## THE MEDIEVAL STAGE

THE THEATRE – CHURCH

CORRELATION AND THE ARMENIAN

SPIRITUAL DRAMA

2004  
SARGIS KHACHENTS  
YEREVAN

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍԻՏՈՒՏԸ

ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

## ՄԻՋԱԿԱՐՅԱՆ ԲԵՄ

ԹԱՏՐՈՆ – ԵԿԵՂԵՑԻ


ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ

ՀՈԳԵՎՈՐ ԴՐԱՍԱՆ

2004  
ՍԱՐԳԻՍ ԽԱՇԵՆՏԸ  
ԵՐԵՎԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՅՈՒԹՅԱՄԲ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ  
ԱՐՎԵՍՏԻ ԽՆՍԻՏՈՒՏԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ



ISBN 99930 - 59 - 38 - 2

© Հ. Հովհաննիսյան, 2004

© Սարգիս Խաչենց Հրատարակչություն, 2004

Ասեն՝ թէ պարտ է գրեթէ յամենայն իրողութիւնս զչորս զայսոսիկ խնդրել զգլուխս. եթէ է՞, և զի՞նչ է, և որպիսի՞ ինչ է, և վասն է՞ր է:

Դաւիթ Անյաղի,  
Սահմանք իմաստասիրութեան

## ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ

Բեմը, որպես հրապարակային ներկայության պայման, առնչություն չունի միշնադարյան աշխարհիկ թատրոնի այն պատկերացման հետ, որ հայտնի է գրականությունից, և որին հետևել ենք մեր նախորդ ուսումնասիրություններում: Դա այն չէ, ինչ վկայված է թատր, թէատրոն կամ տեսլարան բառերով ու մերժված քրիստոնեական դարերի պաշտօնական գաղափարախոսությամբ: Միշնադարյան բեմը թատրոնին չի պատկանում, պատկանում է սակայն դրամային՝ «ոչ ինչ տեսանելի, այլ իմանալի» (Հովհանն Մանդակունի):

Այս է մեր քննության առարկան, և մեր խորագիրն էլ պայմանական է, ինչպես պայմանական է միշնադարյան դրամա հասկացությունը՝ թատրոնից ելնող ու թատրոնը մերժող:

Խնդիրը հետեւյան է:

Ի՞նչ է տեղի ունեցել անտիկ դրամայի հետ քրիստոնեության արշալույսին, ինչպես է ընկալվել դրաման

վաղ միջնադարյան դպրոցում, ի՞նչ է տպել եկեղեցական ծիսակարգին և ի՞նչ է փոխանցել հետագա ժամանակների դրամատիկական արվեստին։ Սա պատմականորեն երկարատև մի ընթացք՝՝ անտիկ դրամայի, որպես թատերական երևույթի, աստիճանական ինքնասպառումն իր սոցիալ-հասարակական հողի վլուզման հետ (III-I դդ.), ապա նրա փոխաձեռությունն ու տարրալուծումը մի կողմից եկեղեցական ծիսակարգի ու լիթուրգիական (պատարագային) դրամայի, մյուս կողմից գրքի ու դպրության մեջ, որպես քերականական մեկնությունների, բարոյա-գեղագիտական դատողությունների և ճարտասանության նյութ<sup>2</sup>: Այսպես է սկզբնավորվում հոգեորդրաման քրիստոնեական աշխարհում, և նրա հիմքերի հիմքում Բարսեղ Կեսարացու խորհրդատետրն է՝ Պատարագը (IV դար), որ ճառագում է մինչև Շեքսպիր և նոր ժամանակներ։

Լեզվական փաստերն ու դատողությունները հիմնական քերականական գրքերում (Դիոնիսիոս Թրակացի, Թեոն Ալեքսանդրացի, Ափթոնիոս), հատկապես անտիկ թատերագիրների անունները, շփոթեցնում են, եթե բառերի մակերեսն ենք տեսնում։ Եվ իսկապես շփոթեցրել են, մղել պատմական հիմքից զուրկ և տրամաբանությունից դուրս վճիռների, թե իբր Եվրիպիդեսի ողբերգություններն ու Մենանդրոսի կատակերգությունները ներկայացվել են V-VII դարերի Հայաստանում, Հայոց լեզվով, և դրա գեմ ճառել է Հայոց հայրապետը<sup>3</sup>: Մոլոր և մոլորեցնող կարծիք, որ գալիս է դրամայի պատմությունը չիմանալուց, թե՝ միջնադարյան մշակույթի տրամաբանությունը չըմբռնելուց։ Գիտության հետ կապ չունեցող զրույցները քննության դնելն իհարկե լուրջ չէ։ Բայց վերապահելի է նաև այն տեսակետը, թե միջնադարի հոգեորդ աշխարհն անջրակետված է նախորդ ժամանակների մտքից ու արվեստից, և դրաման վերադառնում է էպիկական նյութին<sup>4</sup>: Կապերն անուղղակի

են, միջնորդավորված, ինչպես և անուղղակի են մատենագրական վկայությունները։ Հարկ է, ուրեմն, նախ ճշտել հարցադրման համատեքստը։ Այս կերպով լեզվական վկայություններն էլ ճիշտ կխոսեն, և ի հայտ կդաերևույթի պատմական տրամաբանությունը՝ դրամայի խոսոր ու անտեսանելի ճանապարհը «միջին» կոչված դարերի նեղ արահետով գեպի մեր պատկերացրած բեմը։

Արևմտաեվրոպական թատրոնի պատմության շարադրանքներում մութ է մի մեծ ժամանակահատված՝ Հռոմի անկումից մինչև եվրոպական ազգային թագովորությունների կազմավորումը (V-X դդ.): Դա վաղ միջնադարն է հունա-ասորա-հայկական շրջագոտում։ Դրամայով ու թատրոնով հարուստ չի երևում այս աշխարհը (թատրոնը գրական անդրադարձ չունի), բայց դատարկ էլ չէ։ Այս առումով հարուստ չէ նաև լատինա-կելտագերմանական Արևմտատքը՝ մինչև Վերածնություն։ Զի եղել դրամա, այս հասկացության լիարժեք իմաստով, ու չէր կարող լինել։ Զկար դրա հասարակական հողը՝ առևտրա-արհետավորական քաղաք։ Զենք էլ փնտրում ոչ այդ, ոչ էլ անտիկ թէտարոնը կամ ուշ ունեսանյան օթյակային սրահը։ Ուսումնասիրողիս խնդիրն այլ է. ինչպես է ստեղծվել հոգեորդ դրաման քրիստոնեական միջնադարում, ի՞նչ հողում և ի՞նչ մղումով, մինչև որ հող կգտներ արևմտաեվրոպական իրականության մեջ, միստերիալ թատրոնի տեսքով (XIV-XVI դդ.): Մեզ հետաքրքրողը բեմի գաղափարն է, որ ծեսից անցնում է դրականություն, և դրամայի վերադարձը թատրոն։ Հույս ունենք շարժելու ընթերցողի հետաքրքրությունը, շրջանառության մղելով թատրոնի պատմաբաններին անծանոթ որոշ տվյալներ՝ մեկ-երկու լապտեր խավար անկյուններ լուսավորող։ Հարց ենք առաջադրում, ոչ թե վճիռներ տալիս։ Նյութն առանձնապես շատ չէ, և շղթայի օղակները պակաս են, բայց եթե պատմականո-

րեն միմյանցից հեռու վկայություններն են ձայնակցում, սա արդեն հիմք է որոշ եղբահանգման:

Փաստերի տրամաբանությունն արտաքուստ հակասական է: Նկատի ունենք մեզ ընձեռված նեգատիվ նյութը՝ վաղ քրիստոնեական դարերից սկիզբ առնող և մինչև ուշ միջնադար շարունակվող, ասես միմյանց կրկնող, ճառերն «ընդդէմ թատերաց», մեզանում և Արևմուտքում, դրանց հետ պողիտիվ նյութը՝ կրկեսային խաղարկուների ու նվազագուների պատկերները ձեռագիր ավետարանների էջերում, եկեղեցիների պատերին, կամ անտիկ խորանի (սկինե) մոտավոր, հավանաբար գրքային ճանապարհով փոխանցված, պատկերները բյուզանդական և հայկական որոշ ձեռագրերում՝ պատկերագրական տարրեր ու սիմվոլներ, ըստ իս՝ վերջնական մեկնություն չգտած: Սրանք ինչ-որ անկապ, ցաքուցրիվ, պատահական փաստեր չեն, ենթագրում են որոշակի կապեր՝ ներքին մի համակարգ, որ կարոտ է մեկնության: Եվ այստեղ մեկնահիմք ենք ընտրում գրական վկայություններն ու ուղղակի տվյալները: Քննում ենք երեսոյթը գեղագիտական ու արտագեղագիտական շերտերում: Այս տարահայց մոտեցումն անխուսափելի է թատերագիտության մեջ: Թատրոնն ինքնին «մաքուր» արվեստ չէ ու չի եղել, պայմանավորված է հաճախ իրենից գուրս գործոններով, պատմական ակունքներում՝ ամենից ավելի կրոնական: Բեմն այստեղ ընդհանրական (ունիվերսալ) մի պայմանաձև է, լինի առարկայական, թե երեակայական, մտածված, թե ոչ: Հարցն այստեղից է սկիզբ առնում և այստեղ վերադառնում: Նկատի ունենք մարդուս ներկայությանն ու խոսքին ձեւ տվող իրական կամ ներհայեցվող շրջանակը: Դա, միջնադարյան առումով, խորանի գաղափարն է, որ մարդս կրում է որպես առւրա, որտեղ նա տեղափորվում է իր մտածվող կամ գրվող ու արտաբերվող խոսքի եղանակով:

Բեմը մեր հարցադրման պայմանն է, ոչ թե ուսումնասիրության առարկան:

Բառը ծագումով հայերեն չէ, հունարեն է՝ βῆμα, նշանակում է բարձրություն, աստիճան, ամբիոն և, որպես թատերական հասկացություն, ընդունված է միայն հայերենում ու հնից չի գալիս: Եվրոպական լեզուներն ընդունել են հունարեն սկինե (σκηνή) բառը լատինական տառագալրձումով՝ սցենա, և դա սոսկ տառադրագում չէ, իմաստափոխությունն է: Կամը հունարենի հետ գրային-անվանական է, ոչ առարկայական, իսկ արտասանությունը (կ-ից ց) ավելի է հեռացնում նախնական իմաստից: Լատիներեն բառը հայոց լեզու չի մտել, քանզի առարկայական նշանակյալ չի ունեցել այստեղ: Հայերեն է թարգմանվել ոչ թե սցենան, այլ հունարենը՝ սկինեն, ըստ բառարանային նշանակության՝ տաղաւար, ծիսական իմաստով՝ խորան<sup>5</sup>: Ուշագրավ է, որ այս բառի հետ միասին մեզանում առանց թարգմանվելու ընդունվել է հունարեն բեմա բառը բեմ և բեմը հնչմամբ: Այստեղ թատերական իմաստ չէր կարող ենթագրվել, այլ՝ «ատեան բարձր տեղի, աթոռ դատողական, վերնահարկ տաճարի, ի վեր, քան զդասն, որոշեալ վասն պատարգագող քահանայի և սարկաւագաց, տեղի սրբոյ սեղանոյ, լայնաբար՝ խորան, սեղան»<sup>6</sup> (ընդգծումն իմն է – Հ.Հ.): Թվում է՝ ատտիկյան սկինեն բերել էր ինչ-որ հուշ ծիսական հին խորհրդից, ուստի և գտնում էր իր լեզվական համարժեքը հայերենում, գուցե ոչ միայն լեզվական: Այս է, որ մտածել է տալիս մեզ: Տարբեր է, իհարկե, թէատրոն բառի իմաստը: Այս էլ վերցվել է նույնությամբ՝ առանց թարգմանվելու (նաև՝ ասորերենի միջոցով՝ *tattra* թատր), վերագրվելով անդամ ոչ հունական, այլ հայ հնագույն «առասպեկտօն» կոչվող նավասարդյան ծեսին<sup>7</sup>: Այս բառը բերում էր սակայն տարբեր հիշողություններ, թելազրում հակասական իմաստ ու վերաբերմունք: Զկար ատտիկյան պարերգական (խորա-

յին) դրաման, իսկ Հռոմում թատրոնները դարձել էին պատժավայրեր, իրական զոհերի բեմ, որտեղից էլ սկսվել էր քրիստոնեական հեղափոխությունը։ Այս էր լինելու միջնադարյան պատարագային բեմի խորհուրդը, նաև գաղափարական ելակետը թատրոնի մերժման։

Թատրոնի ու եկեղեցու հարաբերությունը լավ չէ ուսումնասիրված։ Մակերեսային բացատրություններ են տրվել իննդրին, հաճախ ուղղակիորեն սխալ, գաղափարական կեղծ նկատառումների դիրքից<sup>8</sup>։ Նույնքան մերժելի է արտաքին նմանություններից ելնելը։ Կապերը խորքում են, ոչ ուղղակի, ոչ տեսանելի։ Բեմը բարդ սիմվոլ է։ Այս հիմքով է կառուցված ոչ միայն եկեղեցին, այլև միջնադարյան դպրոցը, որ անցյալի գրական ժառանգությունն ընդունել է որպես ճարտասանություն, այս հասկացության ամենաբազմակողմանի առումով։ Այս հիմքով են մտածվել ոչ միայն պատարագը և լիթուրգիական դրաման, այլև միրակլը և մորալիտեն, տրամախոսական բնույթի զրույցները, չափածո տրամախոսությունները և այլն։ Սա միջնադարյան դպրությունն է, սերտորեն կապված եկեղեցու հետ, բնույթով ծիսային-ցուցադրական, որ հետագայում ուսումնասիրողները կոչել են եկեղեցա-դպրոցական դրամա և կապել, հայտնի չէ՝ ինչու, ուշ միջնադարի հետ (XV-XVII դդ.): Գրական փաստերի, մասնավորապես հայ մատենագրության ընձեռած տվյալների, քննությունը մեզ մտածել է տալիս, որ եկեղեցա-դպրոցական դրամայի արմատները հին են՝ գալիս են վաղ միջնադարից։ Այս երեսույթը հետագայում է անցել Արևմուտք, առնչվել կաթոլիկական, հիմնականում ճիզվիտական, դպրոցներին, ապա բողոքականությանը, իտալական «ուսումնական կատակերգությանը» (commedia erudita), գերմանական համալսարաններին, Ստրադֆորդի քերականական դպրոցին ու Շեքսպիրին, նիդեռլանդական ռեգերայկերների (ընթերցող դպիրներ) թատրոնին, որ կոչվել է

կամերա-օրատորիում (ճարտամանական խորան), և այսպես դարձյալ ի հայս. «Մարտիրոսութիւն սրբոյն Հռիփսիմէի» Լվովի հայոց կաթոլիկական դպրոցում (1668), ապա՝ Վենետիկի Միխիթարյան վանք (1730)<sup>9</sup> սրբախոսական պիեսներից դեպի պատմաբարոյախոսական դրամա։ Գործ ունենք շատ տարբեր, ոչ համեմատելի գեղարվեստական արժեքների հետ։ Այդ չէ կարևորը, այլ՝ որ պատմական թիկունքում վաղ միջնադարյան վերծանական քերթութիւնն է, հոգեւոր ուղեցույցը՝ քրիստոնեական պատարագը, որպես հնագույն ծիսական օրինատրիկայի և խորային դրամայի փոխաձեռությունը։ Միջնադարյան դպրոցի ու բեմի կապն է սա, որի տեսական հիմնավորումը քերականական մեկնություններում է՝ հույն-բյուզանդական և հայ, Արևմուտքում՝ լատինացված։

Դիոնիսիոս Թրակացու «Արվեստ քերականության» երկի մեկնությունները, որ միջնադարի գրականագիտությունն են նաև, իրենց մասնակի կողմով զբաղեցրել են լեզվաբաններին, որոշ չափով՝ գեղագիտական մտքի պատմությունն ուսումնասիրողներին<sup>10</sup>։ Թատերագիտական գրականության մեջ այս նյութը չի շրջանառվել։ Չի երեսում դրա հետքը որևէ մատենագիտության մեջ կամ բառարանում։ Մեկ-երկու անուն է տրվում հարեւանցիորեն, իսկ նյութը հայտնի չէ։ Հայ մեկնությունները կարող էին հայտնի չլինել, բայց հայտնի չեն նաև հույն-բյուզանդական մեկնությունները, որ հրապարակվել է, լեզվաբան-բանասերների սեղանին է արդեն հարություր տարի<sup>11</sup>, և որտեղ են թատրոնի պատմաբանները։

Այս թեման վաղուց է զբաղեցրել տողերիս հեղինակին։ Ինչ-ինչ ինդիբներ քննվել են տարբեր համատեքստերում, հոգվածների ու զեկուցումների տեսքով և առանձին աշխատություններում<sup>12</sup>, հարցադրումը սակայն չի ամբողջացվել։ Եզրակացություններում զգուշավոր եմ եղել։ Ուստի անխուսափելի են այժմ լրացումներն ու ծգրտումները, որոշ դեպքերում՝ ամբողջական

Հատվածների կրկնությունը։ Դիմում եմ նոր հարցադրման նոր համատեքստում։

Ծնորհակալությունս եմ հայտնում ազնվախոհ բարեկամիս՝ Սերգեյ Խաչիկօղլյանին, որ ներշնչվեց իմ բանավոր զրույցներով և տրամադրեց ինձ ավարտի հասցնելու տարիներ առաջ սկսած ու կիսատ թողած այս աշխատությունը։

### ԳԼՈՒԽ Առաջին

## ՀՐԱՊԱՐԱԿԻՑ ԲԵՄ ԵՎ «ԸՆԴԴԵՄ ԹԱՏԵՐԱՑ»

Դրաման, որպես թատրոնական երկույթ, մեռնում է, եթե խարիսխում է նրա հասարակական հողը։ Այդպես էլ պատմությունից հեռացել է ատտիկյան դասական ողբերգությունը, պողիսային գեմոկրատիայի հետ, և մեր թվականության սկզբում այլևս տեղ չուներ թատրոնում, վերածվել էր գրադարանային արժեքի։ Դրամայի անկումն սկսվել էր ափելի վաղ՝ Ալեքսանդրի դարաշրջանում, և Արիստոտելը դասական շրջանի մասին խոսում է անցյալ ժամանակով։ Հելլենիզմը (III-I դդ.) փոխել էր քաղաքային կյանքի բովանդակությունը, դրանով էլ սասանել թատրոնը որպես հասարակական հաստատություն, քաղաքացիական գդացմունքների կենտրոն։ Դրաման դառնում էր ընթերցանության նյութ քերականների ու ճարտասանների համար, և այստեղ մերձենում էին բանասերը, դերասանն ու հռետորը, ծնունդ տալով մի արվեստի, որ բեմական ու թատերային լինելով, թատրոնական չէր՝ դուրս էր հասարակական հրապարակից։ Ալեքսանդրյան մատենադարանի ավանդապահը՝ Արիստորքոս Սամոթրակացին (մոտ. 217-145) զբաղվել է ոչ միայն բնագրերի քննությամբ, այլև անգիր արտասանու-

թյամբ, բայց ոչ դիմակով ու զգեստով և ոչ թատրոնում: Իսկ թենոն Ալեքսանդրացին (մ.թ. I դ.) հիշատակում է Պովլոս դերասանին Հռետորական արվեստի ձեռնարկում: Սա անտիկ թատրոնի վերջն է: Դրամային փոխարինում էին միմուը (որպես ժամանակակից) և բացահայտ էրոտիկան, իսկ աստիկիզմը դրսեւրպում էր դպրության ու գրական շարժման ձևով: Թատրոնի վերասերումը բնականորեն հանգեցնում էր այդ արվեստի բացահայտ մերժմանը<sup>1</sup>, թեպետ միմուն ու էրուը շատ անմեղ բաներ էին այն արյունալի տեսարանների առջեւ, որ ներկայացվում էին Հռոմում: Դասական ողբերգության բոլոր հերոսներին գալիս էր փոխարինելու «մի մեծ կամավոր զոհ» (Ֆր. Էնգելս), և այդ խորհրդով էր իմաստավորվելու եկեղեցու բնմը:

Եկեղեցու հայրերը կրթվել էին հելլենիստական դպրոցում և միաժամանակ ներշնչված էին Հիսուսի հարության գաղափարով:

### ԹԱՏՐՈՆԸ ԴԱՏԱՍՏԱՆԻ ՀԱՆԴԻՍԱՎԱՅՐ

Գրական ավանդությունը, գալով Եփսեբիոս Կեսարացուց, ամբողջապես ներոնի ուսերին է ծանրացնում տիեզերական մեղքը՝ առաջին քրիստոնյաների մահապատճեները թատրոնում: Հայտնի է դրա գեղարվեստական անդրադարձը գրականության մեջ: Տրամաբանությունը պարզ է: Վկաները պետք է մոտ լինեին առաքելոց դարին: Բայց, ինչպես պարզվել է Պլինիուս Կրտսերի (62 – մոտ. 113) նամակներից, քրիստոնյաներին հալածելու առաջին և մասնակի փաստերը վերաբերում են Տրայանոսի ժամանակին (98–117): Պլինիուսն ինքը կայսեր հանձնարարությամբ հարցաքննել է կասկածյալներին ու զարմացել նրանց «անչափ անմիտ սնահավատության» վրա<sup>2</sup>: Սեփական «հանճարի» (genius) պաշտամունքն,

իհարկե, Ներոնից էր գալիս, բայց սա ուրիշ հանճարացավ էր՝ գերասանական: Միապեսի աստվածացման գաղափարը նոր չէր, բայց առաջինը Տրայանոսն էր, որ կանգնեցրել էր իր պատկերն ընդդեմ Խաչի ու զարմացել, թե ինչպես... Դիմադրությունը, ըստ Պլինիուսի վկայության, մեծ չի եղել, և բանը չի հասել ծանր պատիժների ու խաչելության: Դա սկզբել է հետո՝ Ներոնի մահից 110, Տրայանոսից 60 տարի անց: Առաջին վկաները տանջվել ու խաչվել են Մարկոս Ավրելիոսի (121–180) վերջին տարիներին: Սա Լիոնի եպիսկոպոսի՝ Իրենեոսի գործունեության սկզբնական շրջանն է, մոտավորապես 177–178 թթ.: Որևէ առնչություն չի երևում նրանց միջև: Իր վիլիսության դատողություններում Մարկոս Ավրելիոսը, թվում է, հետու չի Սենեկայից, և մի քայլ է մնում մինչ ի Քրիստոս: Բայց դա նրան վիճակված չէր: Քրիստոնյաների վարքագիծը նա ընդունել է, եթե իր խոսքերին նայենք, ոչ լուրջ՝ անհիմն ու անխոհեմ պահվածք, «հակառակվելու պարզունակ զգացմունք»: Եվ, այնուամենայնիվ, իր բանագնացն է ուղարկել Լիոն՝ դարձի բերելու նրանց, ովքեր անտարբեր էին աստվածների և իր՝ կայսեր հանճեպ:

Գրականության մեջ հիշատակվում է Լիոնի թատրոնը, որպես Հռոմեա-գալլական աստվածություններին զոհեր մատուցելիս և տոնին չմասնակցող քրիստոնյաներին պատմելու վայր: Ամեն ինչ սկզբել է ամբոխային ծալը ու ծանակով, ճիշ ու հայհոյանքով, քարեր նետելով, որից հետո կասկածյալներին բանտերն են լցրել, շղթայել ու գանահարել, գործադրել խոշտանգման բոլոր հայտնի միջոցները և արյունաշաղախ դուրս բերել ի տեսլարան: Եվ հրապարակային վիճակը ներշնչել է, հերոսացրել մարդկանց: Ավանդությունն ասում է, որ առավել տոկուն ու հպարտ են իրենց պահել դերասանները, հատկապես գլադիատորները: Հրապարակային պատիժը նրանք ընդունել են որպես պատիվ, և նրանց

արիությունը ներշնչել է թույլերին. սրանք հետ են կանգնել իրենց կեղծ խոստովանություններից ու կրկնել «ես քրիստոնյա եմ» խոսքը: Պատմությունը պահել է անուններ, որոնց մի մասը պայմանական է, օրինակ՝ Սանկտուս, որ նշանակում է սուրբ, Բյանդինա, որ նշանակում է քնքուշ, սիրալիր: Այդպես էլ սիրալիր է նայել իրեն շիկացած երկաթով տանջողներին փոյուղիացի աղջիկը՝ Բյանդինա անունով: Նահատակության պատրաստ աղջիկը ամեն մի հարգածին պատասխանել է աղոթքով՝ «փառք քեզ, Տեր, ընդունիր ազախնուդ...»: Նրան մերկացրել են ու մերկությունը «ծածկել» բարակ ժապավենով, ինչպես մի թէատրիկոնի՝ միմական խաղերի դերասանուհու, և գամել սյունին: Աղջիկը դա ընդունել է ինչպես Քրիստոսի խաչը և հոգարակամ ավանդել է Հոգին՝ հայացքը գեպի արևելք, բլրի բարձունքը, ուր հետագայում տաճար էր կանգնեցվելու՝ սուրբ իրենեսոսի տաճարը<sup>4</sup>:

Սրբերի վարք-վկայաբանությունները երեսում են չափազանցված, բայց դրանք պատմականորեն ստույգ են. իսկապես եղել են պատրիմն ու խոշտանգումն արիությամբ կրողներ, և նրանցով է հաստատվել եկեղեցին: Այն, որ նրանց մեջ եղել են նաև միմուներ, որ ծաղրելով քրիստոնեական ծեսերը, իրենք իսկ ակամա դարձի են եկել, պատմական ճշմարտություն է, և այստեղից է սկսվում թատրոնի ու եկեղեցու ներքին, ըստ էության չբացահայտված կապը: Պատմությունը պահել է մի քանի անուն. սուրբ Պորփյուրոս՝ «ծնեալ եւ սնեալ յեփեսոս քաղաքի, ճարտար գուսան ի դիւական թատերս», սուրբ Գենեղիոս՝ նահատակված 286 թվին, սուրբ Արդալիոն, որի նահատակության մասին զրույցը մտել է «Յայսմաւուրք»: Մեր խնդրի տեսակետից սա ամենաքնութագրականն է: Թվում է՝ հորինված դեմք է, ինչ-որ ծրագրված մի սիմվոլ, բայց, ըստ Վոնդելի, պատմական դեմք է. նահատակվել է 309 թվին, և «Յայսմաւուրքը»

ճիշտ է նշում նրա ոչ միայն ժամանակը, այլև տարեթիվը՝ Մաքսիմիանոսի շրջան (մինչև 310 թ.)<sup>5</sup>:

Կարդանք սուրբ Արդալիոնի վկայաբանության հայերեն թարգմանությունը, որ մեզ հայտնի է և տպագիր, և ձեռագիր օրինակներով:

Մարտիրոսն Քրիստոսի Արդալոն կատակողն յիմար՝ առաջի Մաքսիմիանոսի ամբարիշտ արքային եւ մեծամեծաց նորին: Եվ էր յոյժ սիրելի ամենեցուն՝ կատակելովն. զի ի մեծ խրախութեան պահեր զնոսա: Տեսանէր զսուրբ վկայան ի չարչարանսն. ի միտ առնոյր զպատասխանիս նոցա:

Սա այն միմուներից է, որոնք ընդօրինակելով ծաղրում էին խոշտանգվող ու խաչվող քրիստոնյաներին և զվարճացնում տեսարանամոլ ամբոփին, ողբերգականը դարձնում իրրե թե կատակերգական, վերածում այդ մի նոր թեմայի՝ «խաղի և ծաղու»: Եվ մի պատրիկ կանչում է միմուն՝ ներկայացնելու խաչելությունը որպես կոմեգիա:

<...> նստաւ իշխանն ի թէատրոնն եւ բազում ամբոխ ընդ նմա ի հրապարակին: Եւ մտեալ Արդալոն ի մէջ նոցա. նստոյց զմի յընկերաց իւրոց յաթոռն որպէս գատաւոր. ինքն եղեւ որպէս քրիստոնեայ: Եւ այնպէս ծաղը առնէին եւ այպանէին զքրիստոնեայս: Եվ ասէր դադր առնէին եւ այպանէին զքրիստոնեայս:

— Զո՞վ պաշտես:

Ասաց Արդալոն.

— ԶՅիսուս Քրիստոս զորդին Աստուծոյ:

Ասաց դատաւորն.

— Ուրացիր զՔրիստոս եւ զոհեա կոոց մերոց, եւ բազում բարեաց հանդիպիս:

Ասաց Արդալոն.

— Ես քրիստոնեայ եմ եւ կորց ոչ զոհեմ, զի դեւք են:

Եւ յօգուտ ժամս ծիծաղելով վիճէին ընդ միմնասու: Մերկացուցին զնա. եւ պրտով ծեծէին թեթեւ: Կախեցին զփայտէ եւ որպէս թէ երկաթի ճանկօք քերէին զմարմին. եւ հրապարակն ամեն ծիծաղէին խրախանօք:

Տեղի է ունենում կատակային-պայմանական դատ, և մարդուն պատժում են «որպէս թէ»: Բայց ամեն մի «որպէս թէ» իմաստ ունի թատրոնում և կրոնական արարողության մեջ: Քրիստոնեական պատարագում չկա ոչ մի առարկայական վիճակ, ոչ մի իրային տեսանելի պատկեր, և ճշմարիտ է ամեն ինչ որպես խորհուրդ՝ «իմանալի գորութիւն» (Հովհ. Մանդակունի): Այդպես էլ ահա ճշմարիտ է դառնում խորհուրդը միմոսի համար, և նրա հոգում ծնվում է Քրիստոս:

Շագեաց զլոյս մարդասիրութեան ի սիրտս նորա: Եւ ասաց ժողովրդեանն.

— Լոել:

Եւ նոքա լրեցին՝ կարծելով թէ նոր խաղ ինչ կամի առնել: Եւ նա ասաց ընդ իշխանն մեծաւ բարբառով.

— Գիտածիք ամենեքեան՝ որ ես ճշմարիտ քրիստոնեայ եղի: Այսուհետեւ ոչ խաբանօք եւ կամ ընդ խաղս խոսիմ ընդ ձեզ. զի չնորհքն Քրիստոսի ծագեաց ի սրտի իմում: Այսուհետեւ ճշմարիտ անարդեմ եւ թքանեմ ի կուռան ձեր եւ այպանեմ զերկրպագուս եւ զպաշտօնեայս. զի ստոյդ դիւապաշտ եք դուք:

Հանդիսականը, որ սիրում է Արդալիոն կատակերգակին, չի ուզում, որ նա պատժվի, ու խնդրում է նրան

Հետ կանգնել իր մտքից: Պարզվում է, որ նա անդրդվելի է, պատրաստ է կրելու Տիրոջ չարչարանքները

<...> եւ ասաց նոցա.

— Արդ գնացեալ պատուեցի զչաստուածսն ձեր՝ այլ զինչ հրամայէք զի արարից ձեզ:

<...> եւ ողոքանօք խօսեցան ընդ նմա: Եւ բազում պարզեւս խոստացան ի բաց կալ ի Քրիստոսէ: Եւ նա ամենեւին ոչ հաւանեցաւ. այլ դարձաւ յարեւելս եւ աղօթեաց առ Աստուած:

Գրական աղբյուրը միջնադարյան է, և ձեռագիր տարբերակներում, որ թերեւս արդյունք են բանահյուսական խմբագրման և ժողովրդական-հրապարակային խաղի ազդեցության, միմոսի դարձը ներկայացվում է անպարկեցտ ձևերով ու գոեհկաբանությամբ: Զվարճացող ամբոխին նա դիմում է ինչպե՞ս... որովայնային աղմուկով:

— Տեսեք, թէ որպէս պատուեմ զչաստուածսն ձեր:

Եւ խոնարհեցուցեալ զձեռս յերկիր՝ սկսաւ հանել ի փորոյն փուքս մեծաձայնս եւ միոյ միոյ ասէր.

— Այս քեզ Ապողոն, այս քեզ Յեփեսոս:<sup>6</sup>

Գոեհկությունը, որպես կատակ և կատակային տեսարան, բացատրվում է միջնադարյան շուկայական-կառնավալային զվարճության հոգեբանությամբ ու ավանդներով<sup>6</sup>, բայց իրականում դա շատ ավելի հին բան է՝ գալիս է ուշ անտիկ, առավելապես հոռմեական կատակերգությունից ու միմական տեսարաններից: Բնական է, որ զրույցն այս որակով չէր կարելի պահել «Յայսմառուք» գրքում: Դարձի դաղափարը պետք էր վեհացնել,

կամագոր զոհին տալ սրբությանը վայել կեցվածք. Խաչ և ողջակիդում: Մեզ համար կարևոր է զրույցի կրոնափիլխառական իմաստը. կյանքը որպես ծայրաշեղությունների հաշտեցում, ուր մի քայլ է ստորից մինչև վեհը և կատակերգությունից ողբերգություն:

Պատմական փաստը վերաբերում է Դիոկլետիանոսի և Սաքսիմիանոս Դայայի շրջանին (306), երբ Հռոմից ճերմակ աղավնիներ էին նետվել՝ հոփիսումյան կույսներն ի Հայու (Քրիստություն - նետվել), և Լուսավորչի տեսիլքն իրականացվել էր. «Եթիմաւք եւ թիատրոնաւք» ներկայացվող «առասպել տօնի» ու նավասարդյան խորհրդի տեղում հաստատվել էր «տօն սուրբ Կարապետին եւ Մկրտչին Յովհաննու, զի սուտն եւ առասպելն խափանեսցի եւ սուրբն եւ ճշմարիտն հաստատեսցի»<sup>7</sup>:

Եկեղեցու հայրերի ճառերն «ընդդէմ թատերաց» (որոնց ակունքը II-III դարերում է) հետագայում կարծիք են ստեղծել, թե «Հավատի նահատակների արյունով հեղված թատրոնները քրիստոնեության հաղթանակից հետո անխնա ավերվել են, վերածվել քարակույտերի, և...»: Տրամաբանական է, բայց ո՞ր առումով է ճշմարիտ: Այս խոսքի շարունակությունն է կարենոր. «...քարերն օգտագործվել են եկեղեցիների ու վանքերի շինություններում»<sup>8</sup>: Հրաշալի տեղեկություն, որ արժե մեկնաբանել: Թատրոնների քարերն օգտագործվել են եկեղեցական շինություններում, քանզի օծված էին մարտիրոսների արյունով: Թատրոնի պատմաբանի համար XX դարասկզբին շատ բան դեռ պարզ չէր: Թատրոնական շենքերի մի զգալի մասը դեռ հողի տակ էր, և կարելի էր ասել՝ «ո օօծենոյ յատոկություն են բարձրացած»:

այստեղ էլ առկա է էական մի կապ՝ զոհը: Բայց նայած՝ ինչ զոհ: Այստեղ մի փոխակերպում կա, որով և տարբեր է, ինչպես կտեսնենք, քավության (կաթարիստ) քրիստոնեական բովանդակությունը:

Քրիստոնեության արշալույսին հռոմեական թատրոնները, դառնալով պատժավայրեր, իմաստավորվեցին որպես վկայարաններ, հետեւաբար նաև՝ քրիստոնյաների հավաքատեղիներ, համախմբման վայրեր, և այստեղից էլ եկեղեցի (Հուն. ԷԿԿԼԵՍԻԱ – ժողովարան) անվանումը: Ուշագրավ է, որ Սիդերի թատրոնում կառուցվել է երկու մատուռ<sup>9</sup>: Իսկ Ալեքսանդրիայի թատրոնը (պեղվել է 1964 թվին, լեհ ՀՆԱԳԵՏՆԵՐԻ ձեռքով) վաղ շրջանի եկեղեցիներից մեկն է: Այդ են վկայում մարմարե խոյակներին քանդակված խաչերը: Այս թատրոնը քրիստոնեության նախակարապետի՝ Հովհաննես Մկրտչի եկեղեցին է եղել<sup>10</sup>: Թվում է՝ մի աղերս կա այս իրողության և ավետարանական վկայության միջև. «Կաքաւեաց գուստըն Հերովդեայ ի մէջ բազմականին... տուր ինձ ասէ այսր՝ ի վերայ սկտեղ զգրուխն Յովհաննու Մկրտչի» (Մաթթ., ԺԴ, 7-9): Սա նույնպես թատրոնն է որպես պատմավայր մեր թվականության I դարում: Գալով Հայաստան, տեսնում ենք, որ ժողովրդական-հրապարակային թատրոնի կենտրոնական դեմքը՝ Լարախաղացը ներկայանում է որպես Կարապետի ուխտավոր և հովանավորյալ՝ «Կարապետական շնորհաց եւ վեհագոյն աթոռոյ արժանի», տիեզերքի մեծագույն ճշմարտության՝ հավասարակշռության սիմվոլացումը, վեհի ու ներդաշնակության անձնավորումը, աղոթքով առ Աստված, թիկունքին խաչը, կրծքին, շապիկի տակ «թուղթ ու գիր»՝ խոսքեր ժամագրքից կամ նարեկացու «Մատյանից», ինքը կենտրոնացած, միակողմանիորեն լուրջ, իսկ իր ծաղրածու ծառան տարակենտրոն, անլուրջ ու կատակաբան: Սա իրականության ամբիվալենտ պատկերացումն է, ենթագիտակցական խաղային մի

**պայման:** Իր պատճական խորքում, ինչպես ցույց է տալիս Արդարիոնի վկայաբանությունը, այս պայմանը մեկ անձի մեջ է, որպես ներքին հակասություն կամ անցում երկրային վիճակից երկնայինի գիտակցմանը:

Թատրոնի, որպես վկայարանի, և խաղարկուների սրբանալու հուշը միջնադարյան արվեստում ի հայտ է գալիս տարբեր արտահայտություններով։ Խաղարկուների պատկերները հայտնվել են ավետարանների լուսանցազարդերում ու գլխազարդերում, խորանների կողքին։ Մի տեղ՝ «կաքաւս կայթից եւ ցոյցս վազից» (Նարեկ. ԻԱ), խաղարկուի ճակատին խաչ, այլ տեղում՝ Քրիստոսի ծանակումը որպես հրապարակային խաղ՝ ծնծղազարդող, փող փչող երաժիշտներ և միմուն<sup>11</sup>։ Նման պատկերների հանդիպում ենք XIII-XIV դարերի գոթական ձեռագրերում<sup>12</sup>, նաև ուշ միջնադարյան եվրոպական գրավյուրներում։ Այս երեսույթը դեռ իր վերջնական մեկնությունը չի ստացել, բայց պատմական հիմքերը մեզ հայտնի են, ինչպես և հայտնի է, որ միջնադարի աշխարհկ-հրապարակային թատրոնը երեմն ներկայանում է ուղղակի խորհրդապաշտական իմաստով, ինչպես, օրինակ, լարախաղացությունը և ոչ միայն այդ։ Նարեկացու «Մատյանում» կա դրա պարզ ակնարկը.

Հայտնի է նաև Ժուանվիլ անունով ֆրանսիացի խաչակիր ասպետի պատմածը Երուսաղեմ ուխտ գնացող հայ խաղարկուների մասին (1248): Խնդիրը կրկեսային գործողության պատկերը չէ, այլ՝ որ դա տեղի էր ունենում ուխտագնացության ճանապարհին, և եկեղեցու

Հայրերից մերժված խաղարկուն չէր մոռանում խաչակն-քել գլխաղարձ թռիչքի պահին<sup>14</sup>:

Թէատրոն բառը, որ հունարեն է և գործածելի հայմատենագրության մեջ, ուշ միջնադարյան բառարաններում բացատրված է՝ տեսլարան (արմատը՝ թէ՛ռ՝ տեսսիլ), «խաղալու տեղ», «տեսիլ հանդիսի խաղուց»<sup>15</sup>, բայց ոչ վկայարան: Բայց ի՞նչ է ասված Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմության» այն էջում, ուր նկարագրվում է Բյուրական ամրոցի գրավումը (922): Արաբոստիկան Նըսըրի զինվորները դատաստան են տեսնում մարդկանց հետ, և ի՞նչ է անվանում պատմիչն այս տեսարանը. «Հանեալ զիւրաքանչիւր զնոսա ի թէատրոն անդր ճարակ անողորմ հրոյ տային»<sup>16</sup>:

Զեռագրերում էլ երքեմն տեսնում ենք անտիկ ողբերգության խորանը՝ սկենեն, Քրիստոսի կամ ավետարանիչ ների թիկունքում: Ի՞նչ սիմվոլ է սա, որ նոր չէ նկատվում և, այնուամենայնիվ, մենքնաբանված չէ: Պատկերագրական այս ատրիբուտը մի խորհուրդ ունի, որ ընթերցվելու է իր պատմական կոնտեքստում: Հուշարձաններն ու ձեռագրերը մեզ ինչ-որ պատահական ու կամայական նշաններ չեն մատուցում. այստեղ ամեն ինչ պատմականորեն իմաստավորված է: Հին ատտիկյան դրաման իր նախնական ձևերում (գեմետրեական և դիոնիսոսյան ծեսեր) պատարագային էր և այժմ վերադառնում էր իր ծիսային վիճակին նոր հիմքի վրա: Ի՞նչ է վկայում Հովհաննես Մկրտչի առաջին եկեղեցիներից մեկը՝ Ալեքսանդրիայի հունա-հռոմեական տիպի թէատրոնը: Ի՞նչ նախահրմաքեր ենք փնտրելու քրիստոնեական պատարագի վաղ միջնադարյան ձևում, կամ որտե՞ղ կարող էր մատուցվել «Առաքելոց պատարագը», որ նախնականներից է:

Քրիստոնյաները չընդունեցին կայսրերի «Հանճարը», զոհ չմատուցեցին նրանց, որպես աստվածների, և իրենք դարձան զոհ հանուն իրենց մեծագույն կամավոր զոհի, և սա նոր դրամայի հիմքն էր:

## ՄԻՍՏԻԿԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ

<...> ոչ տեսանելի է ահաւորութիւն  
սուրբ Խորհրդոյն, այլ իմանալի զօրու-  
թիւնն:

Յովհան Մանուկունի

Եթե բոլոր զոհերի ընդհանրացումը Որդին էր, որպես  
կամավոր զոհ, և բոլոր ողբերգությունները հանգել էին  
մեկ խորհրդի, հնարավոր չէր այլևս կրկնել անտիկ դրա-  
ման գործող անձերի և մարդկային զգացմունքների կոն-  
կրետությամբ: Խորհրդակերպվում էր մի գաղափար՝  
որպես թե անձնավորված, բայց ոչ անձ կամ բնափորու-  
թյուն (արխատոտելյան չթօշ-ը), այլ անդրանցական  
(տրանսցենդենտ) իմաստ: Ի՞նչ կերպով ու եղանակով էր  
ներկայացվելու այդ ոչ իբրև մարդկային բնություն և  
ոչ այլևս «ի թէատրոն»: Դրամայի դասական տիպն  
սպառել էր իրեն, չէր պատկերացվում տեսարանակարգը  
(ծալւէ), և թէատրոնը չէր կարող տեղացվորել Խաչվածի  
տիեզերական միստերիան: Մերժվում էր իրականության  
առարկայական ընկալումն ու առարկայամետ վերարտա-  
դրությունը (միմեսիս) ի հաստատումն հոգու հիշողու-  
թյան (անամնեսիս): Չէր գործելու դրամայում անհա-  
տականության սկզբունքը որպես իրավունք (հմմտ.  
Սոֆոլես՝ «Անտիգոն»), այլ՝ համընդհանուր գաղափա-  
րը որպես օրենք: Բնությունն ու պատմությունն իմաս-  
տավորվում էին ոչ այլևս կրկնելի պարբերության մեջ,  
պարերգային սիմվոլացումով, այլ որպես ուղղածիգ,  
վերընթաց, անվերադարձ ճանապարհ, որով շարժվում է  
մարդկության նավը գեպի վերին ծշմարտություն և վեր-  
ջին դատաստան: Խաչվել էր Որդին մեկ անգամ, հառնել  
էր մեկ անգամ, գալու և դատելու էր «զմեռեալս եւ  
զկենդանիս» վերջնականապես: Այս գաղափարը չէր կա-  
րող երկրորդվել, չէր կարող ներկայացվել որպես մարդ-

կային վիճակ, թեկուղ և այն պայմանականությամբ, որ  
հուշում էր ատտիկյան դրաման: Այն, ինչ լինելու էր,  
եղել էր, և կամավոր զոհերը հաստատել էին Որդու  
ծշմարտությունը: Կրկնությունն «ի թէատրոն» կնշանա-  
կեր գաղափարի վարկաբեկում: Կրկնվել կարող էր ոչ  
թե գեպքը (եվրիպիդեսյան տύղղ-ն), այլ խորհուրդը,  
բայց երբեք «ի տեսիլ խաղու»: Խորհուրդը չէր  
ենթադրում ոչ տեղ (τόπος), ոչ տարածություն՝ խորա  
(χώρα), ոչ իրադրություն, առավել ևս՝ անձի ներկայու-  
թյուն ներկա պահի մեջ: Զկար ոչ անցյալ, ոչ ներկա,  
չկար ժամանակ, այլ՝ հավերժական ու անփոփոխ վիճակ  
և Աստծո ներկայությունն իր խորանում:

Սա նոր դրամա էր կամ անտիդրամա և տիեզերական  
թէատրոն՝ «ոչ ինչ տեսանելի, այլ իմանալի», ինչպես  
բնութագրել էր ժամանակին հայոց հայրապետը:

Հին ատտիկյան դրամայի քերականական-ճարտասա-  
նական յուրացումով և թատրոնի ու թատերայնության  
մերժումով ստեղծվում էր մի նոր դրամա՝ «խորհուրդ  
մեծ և սքանչելի»՝ misterium magnum, և եկեղեցին հիմն-  
վում էր որպես պլատոնյան կոսմոսի սիմվոլացումը  
տիեզերքի ոգեխոսական դետերմինանոր: Այդպես էր  
տեսնվում տիեզերքը՝ «խորանարդ գմբեթաձեւ, ըստ բա-  
նին մարդարէի» և քրիստոնեական պատարագի հանճա-  
րեղ հեղինակ Բարսեղ Կեսարացու (մոտ. 380–379):

Պատարագը կրում է հնագույն պարերգական բանա-  
ստեղծության բոլոր գծերը՝ մենախոսական, խմբերգային,  
տրամախոսական, և հակած ենք բացատրելու այս ծի-  
սային ունիվերսումը հին ատտիկյան դրամայի լույսով և  
ընդունելու որպես նրա փոխաձեւումը (տրանսֆորմա-  
ցիա): Փորձել ենք այս մեկնությունը<sup>17</sup>, գուցե անխոհե-  
մաբա՞ր, եթե ենելու ենք կրոնահայեցության շահերից:  
Գուցե և արմատապես վիճելի է մեր մոտեցումը: Ուղ-  
ղակի վկայություն չունենք. որևէ տեղ որևէ բան դրված  
չէ: Բայց, հարցը տրամաբանության հողին դնելով,

բավարար հիմք ենք ընդունում հետեւյալ երեք հանդա-  
մանքները.

ա) Քրիստոսի չարչարանքների կրկնությունը թատ-  
րոններում, և որոշ թատերաշենքերի վերածումը վկայա-  
րանների,

բ) ողբերգական զոհի գաղափարը պատարագում և  
Կեսարացու տեքստի պարերգական-արամախոսական  
կառուցվածքը,

գ) անտիկ դրամայի ճարտասանական յուրացումն ու  
մեկնությունները քրիստոնեական վարդապետարաննե-  
րում՝ համաձայն հելլենիստ դրամատիկոսների, որոնց  
կանդրադառնանք:

Կեսարացին կրթվել էր հույն դասական դրականու-  
թյամբ և հելլենիստական ճարտասանությամբ. կարդա-  
ցել էր հույն ողբերգակների երկերը համաձայն Դիոնի-  
սիոս Թրակացու (մոտ. 170–90) «Գերծանական քերթու-  
թեան» և Թեոն Ալեքսանդրացու կանոնների, ժամանա-  
կակիցն էր Ապոլինար Լաոդիկեցու (մոտ. 310–390), որը  
փորձում էր քրիստոնեական գաղափարներն արտահայ-  
տել անտիկ դրամայի ձևում: Այս ամենի հետ նա իր  
ձեռքին ուներ առաքելական խորհրդատետրերը (գա  
գրիքոր Լուսավորիչն էլ ուներ), տեղյակ էր այլևայլ  
ծիսակարգերի, ներառյալ էլեսինյան միստերիաները,  
գուցե և Արդվիսուրա-Անահիտին նվիրված հիմներգու-  
թյունները, որոնց տիպարանական որոշ նշաններ նկա-  
տելի են իր պատարագամատույցում: Այստեղ ծիսական  
տարբեր հոսանքների խաչաձևում կա, որ առանձին  
ուսումնասիրության նյութ է՝ մեր խնդրից գուրա: Զենք  
փորձում ակունքները պեղել, չենք էլ կարող: Տիպարա-  
նական քննությամբ կարող ենք նշմարել ինչ-ինչ գծեր:  
Նախորդ խորհրդատետրերում, ասենք՝ ս. Աղդեի և ս.  
Մարիսի Պատարագում, չկա դրամատուրգիական կա-  
ռուցման այն հստակությունը և միստիկական զգաց-  
մունքի այն հասունացումը, ինչ տեսնում ենք այստեղ և

հետագա մշակումներում: Տրամադրողը սոսկ արտաքին  
տրամախոսական ձևը չէ, այլև ներքին պաթուսը, որ  
հասնում է էսթետիկական ներշնչման, աճելով աճում  
մինչև հուզական բարձրակետը, երբ լուսթյան մեջ  
հնչում է Որդու ձայնը՝ «այս է արիւն իմ...»: Քավու-  
թյունը, հոգեբանական և կրօնական լինելով, նաև էսթե-  
տիկական է, որ վկայում է կապը աշխարհիկ բանա-  
ստեղծության և դրամայի հետ: Իսկ դրաման տեսանելի  
է իր փոխաձեռության մեջ՝ մասերի խախտումով ու  
շրջվածությամբ: Զկա սյուժետային ընթացք, որին սպա-  
սում է անտեղյակ «Հանդիսականը», չկա գործողության  
որևէ ակնարկ: Սա վիճակ է և միստիկական ինտենցիա,  
որ ավելին է, քան կրօնական նպատակը. արվեստ է և  
վեր է մարդկայինից կամ անդրանցումն է մարդկայինի:  
Եթե զրություն ենք փնտրելու, իմանալու ենք, որ ամեն  
ինչ եղել է, ինչ լինելու էր երկրում, հիմա կանգնած ենք  
երկնքի դռների առջև, և մեզ ճանապարհ է ցույց տալիս  
երկրային միջնորդը՝ պատարագիչ քահանան, ինքն էլ մի  
խնդրարկու իր «Ողջույնի աղոթքով»:

Քահանայն. Տէր աստուած, արարիչ մեր, որ  
արարեր զամենայն յոչնչէ, եւ ածեր զմեզ յայս կեն-  
դանութիւն, եւ ցուցեր զմեզ ճանապարհ կենաց եւ  
փրկութեան եւ արժանաւորս արարեր զմեզ յայտ-  
նութեան երկաւոր եւ ահաւոր Խորհրդոյս ...  
արժանի արարեր զմեզ մերձենալ առ սուրբ սեղան  
քո, եւ մատուցեալ պատարագ օրհնութեան զիկն-  
դանի եւ զբանաւոր պաշտամս մեր:

Ի ձայն. Եւ առաքեա ի մեզ զնորհս բարերար  
սուրբ Հոգոյդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-  
տենից:

Ժողովուրդ. Ամէն:

Մարկաւագն. Ողջոյն տուք միմեանց ի համբոյր

սրբութեան: Ա.Հիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարւոք կացցուք եւ նայեցարուք զգուշութեամբ: Ժողովուրդն. Առ քեզ Աստուած:՝<sup>18</sup>

Արիստոտելյան տեսարանակարգը կամ ծփւչ-ը չի երևում ոչ այն պատճառով, որ չկա, այլ՝ որ ուրիշ հարթության վրա է, իրականության ֆիզիկական սահմաններից դուրս: Գործողությունը տեղի է ունենում մետաֆիզիկական անսահմանության մեջ: Մեր մոտեցումը պարզունակ ու կոպիտ կարող է լինել, եթե պատարագը դիտենք որպես թատերական ներկայացում, փնտրենք այնտեղ գործողություն և իրականության վերաբարդության որևէ նշան: Անտիկ դրամայից պահված է այնտեղ միթոսի (Փաբուլա) գաղափարը, բայց չեղոքացված է միթոսը որպես պատճառահետևանքային ընթացք և պահերի այն դասավորությունը, որ անվանում ենք սյուժե: Եթե բացառվում են միթոսը և ակտուսը (լատ. *actus*-գործողություն), բացառվում է նաև էթոսը՝ մարդկային տեսակը, տիպը, բնավորությունը: Խորհրդապաշտությունը բացառում է որևէ զգայական նշան, որն ունենա իր նշանակյալը երկրային իրականության մեջ: Եթե դա խոսքն է (Արիստոտելի ասած լեզւց-ը), ապա դա բանաստեղծականացված է ու դրված երաժշտական համատեքստում. լեքսիսը ենթարկված է մելոպոյային՝ երաժշտական նյութին: Ասել է, թե մեր առջև օպերայի արխակի նախատիպն է առանց տեսարանակարգի: Եթե սա չկա, բացառվում են ինչպես հունական օրինատրան, այնպես էլ հոռմեական սցենան: Իսկ եկեղեցու բեմը չի փոխարինում դրանցից ոչ մեկին՝ տեսանելի գործության վերջին ընթրիքի սեղանը կամ Գողգոթան: Եվ ինչ է մնում հին հունական օրինատրիկ թէտրոնից, եթե ոչ խորանը՝ իր դերով համարժեք սքենեին, դերով, ոչ երբեք արտաքին տեսքով: Եթե սքենեի

կենտրոնական դռնից դուրս էր գալիս նախամրցորդ (պրոտագոնիստ) զերասանը (հիպոկրիտես), ապա այստեղ դուռը գաղափար է ու խորհրդանիշ, որ ուղղված է գեղի արևելք: Այստեղ նաչն է կամ Աստվածամոր պատկերը, և բոլորի հայացքը՝ այնտեղ, ի՞նչ տեսնելու... «...ոչ տեսանելի է ահաւորութիւն սուրբ Խորհրդոյն, այլ իմանալի զօրութիւնն. քանզի ոչ ինչ տեսանելի աւանդեաց մեզ Քրիստոս ի խորհուրդն եւ ի մկրտութիւնն, այլ իմանալի»,— դրել է Հովհան Մանդակունին<sup>19</sup>: Ամեն ինչ ուղղված է հոգու տեսողությանն ու հավատին, և դա միջնադարյան քրիստոնեական արվեստի գլխավոր սկզբունքն է. «անդ ուր հոգին է կինդանատար, ձեք եւ նիւթք մարմնականք նմա առ ի՞նչ պիտոյանամ»,— ավելի ուշ ասել է Ներսէս Լամբրոնացին<sup>20</sup>:

Այսքանից հետո՝ ի՞նչ միամտություն, երբ մարդը կանգնում է եկեղեցում և բեմն ընդունում որպես խաղավայր, թատրոն փնտրում, ինչպես անգլիացի ճանապարհորդ Լինչը 1893 թվին: Օտար մի հայացք հորինել է բաներ, որ չկան ու չպետք է լինեն այնտեղ՝ «քահանան բաց գլխով և բորիկ ոտքերով աղոթող ամբոխի աչքերում ներկայացնում է տանջվող մարդկության ձգտումը դեպի ճշմարտության ու գեղեցկի աղբյուրը»<sup>21</sup>: Ընկալելով իմաստը հոգու տեսողությամբ, այս մարդը հորինել է տեսանելի մի պատկեր, որ ենթարկելի է, բայց ոչ զգայելի: Նրա, որպես հանդիսականի, ոչ թե աղոթողի, երեակայած իրականությունը բացատրելի է, ունի օբյեկտիվ պատճառ: Բարսեղյան պատարագը կրում է անտիկ տեսարանակարգի գաղափարը. արտածված է տեսարանակարգից նույն այդ տեսարանակարգի չեղոքացումով: Պատարագը տեսիլք է ստեղծում ոչ միայն հավատացյալի, այլև անհավատի երեակայության մեջ, եթե անհավատն ունի երեակայություն: Տեսարանակարգի գաղափարն արդյունք է դրամատուրգիական մտածողության, որ գալիս է իսկապես անտիկ դրամա-

**յից:** Դա անդրանցումային գործողության պարերգական բնույթն է արտահայտված խմբի ու պատարագիչի պայմանական տրամախոսությամբ, պատարագիչի ու ընթերցող դպիրների փոխասությամբ։ Անտիկ դրամայի ստրոֆե-անտիստրոֆե-ստասիմ փոխարարերությունը արտաքին կառուցվածքային գիծ է և պայմանափորված է գործողության պարերգական (օրինստրիկ) ընույթով։ Պատարագում պահված է օրինստրիկայի սկզբունքը, բայց ոչ օրինստրան, որպես տարածական պայմանաձև։ Տարածությունը, որպես տեսանելի ֆիզիկական կոնկրետություն, պատարագում չի գործում ու չի կարող գործել, քանզի այն, ինչ տեղի է ունենում որպես դրամա, մետաֆիզիկական անսահմանության մեջ է, չի խնդրում որևէ տարածական սահման ու սահմանափակում։ Պարերգական տրամախոսությունն է տալիս օրինստրիկայի գաղափարը։ Նկատենք, որ բնագրում տրված չօրօն բառը հայերեն թարգմանված է ժողովուրդն, և տրամախոսությունը տեղի է ունենում մի դեպքում պատարագիչ քահանայի ու սարկավագի, մյուս դեպքում սարկավագի ու դպիրների խմբի, ապա քահանայի ու խմբի միջն։ Սա նման է անտիկ դրամայի օրինստրիկ պտույտին։ Իսկ զոհաբերությունը տեղի է ունենում բացարձակ խորհրդանշային ձևով՝ հացի և գինու սիմվոլներով։ Անտիկ դրամայում էլ դա խորհրդանշային էր՝ նոխազի զոհաբերում ներկայացման սկզբում, և վերջում հերոսի մահվան լուրը, երբեք՝ մահվան տեսարան։

Պատարագում չկա «դերի» ու «դերակատարի» ոչ անձնականացում, ոչ էլ միասնականացում։ Այդպես է եղել նաև անտիկ դրամայում։ Դերերը բաժանվել են ոչ ըստ դեմքերի, այլ ըստ խոսքային հատվածների, և պրոտագոնիստը ներկայացրել է ընդարձակ հատվածները և մեկ, և մյուս դերի, երկու դեպքում էլ նույն քրմական դգեստով ու դիմակով։ Ուշ շրջանում (III դարից սկսած) շատ բաներ փոխվել են, ավելի ուշ՝ I դարում դիմակ էլ

չի եղել։ Էսքիլոսյան դրաման ժամանակի ընթացքում վերասերվել է, հեռացել պաշտամունքային-ծիսական դերից, կորցրել ծիսային հատկանիշները։ Մեր համեմատականը դրամայի հնագույն տիպն է։ Նրա կառուցվածքն ընթերցվում է էսքիլոսի ողբերգություններում և բացարձակ համաչափությամբ ու ներդաշնակությամբ դրսելու վածք է Սոփոկլեսի ողբերգություններում։ Դերի ու գերակատարի միասնականացման խնդիր վաղ շրջանում չի եղել։ Պատարագը տիպաբանորեն համախոս է վաղ շրջանի դրամայի ներքին ձևին։ Պատարագիչը հանդես է գալիս և զոհաբերությունն իրականացնողի ու միջնորդի, և զոհաբերվող աստվածության դիրքից։ Զկա այստեղ դեմքի ու դիմակի, դերի ու անձի խնդիր, կան տեքստային ու երգային հատվածներ և խորային ընդմիջարկումներ։

Այնուամենայնիվ, որտե՞ղ է չեղոքացված ֆարութայի հետքը կամ, միթոսի նշանը։ Քահանայի խոսքում առկա է «Հավատո հանգանակի» մի հատված, ուր համառոտակնարկվում է Քրիստոսի ծնունդը, սքանչելագործությունները, զոհվելն ու հարությունը։ Սա դրամայի միստերիալ հանդուցակետն է։ Իսկ շարունակության մեջ հնչում է ամենազրամատիկական խոսքը։

Ի ձայն. Առէք կերայք ի սմանէ ամենեքեան. այս է մարմին իմ՝ որ վասն ձեր եւ բազմաց բեկեալ բաշխի ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց։

Դպիրն. Ամէն։

Քահանայն. Սոյնպէս եւ զբաժակն յետ ընթրեաց ի ծննդենէ որթոյ առեալ խառնեաց, աւրհնեաց, գոհացաւ, ետ իւրոց ընտրեալ աշակերտացն եւ առաքելոց ասելով՝

Ի ձայն. Առէք արբեք ի սմանէ ամենեքեան. այս է արիւն իմ նորոյ ուխտի՝ որ վասն ձեր եւ բազմաց հեռու ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց։

Չայնը մնում է ձայն, ոչ մի դեմք չի հայտնվում ու չպետք է հայտնվի: Գործողության ու վիճակի անդրանցական բնույթը չպետք է խախտվի, հերոսը պետք է մնա տրանսցենզում, չպետք է լինի անձնավորման որևէ նշան: Պատարագն անձի դրամա չէ, այլ տիեզերական խորհուրդ: Խորհստիսների երգին հաջորդող լռության մեջ հնչող խոսքի հուզական-էսթետիկական լիցքն ավելին է, քան կարող է տալ անձի ու դեմքի երեսությը: Համաշխարհային դրաման չի տվել ավելի զորեղ խոսք, քան պատարագի վերջին ջայնը:

Ի ձայն. Այս է իմ մարմին եւ արիւն, զայս արարէք առ իմոյ յիշատակի, քանիցս անդամ թէ ուտիցէք զհացս եւ գրաժակս ըմպիցեք, զմահ իմ պատմիցէք մինչեւ եկից ես:<sup>22</sup>

Շատ ավելի զորեղ պատվիրան է սա, քան այն, ինչ լսում ենք Շեքսպիրի «Համլետի» վերջին տեսարանում, ուր դարձյալ թեածում է տիեզերական զոհի գաղափարը:

Համլետ. Հորացիո, մեռա, բայց դու ապրում ես. Պատմիր իմ դատը և գլխիս անցքը անտեղյակ-ներին:<sup>23</sup>

Շեքսպիրի ողբերգության մի շարք կետերում ակնհայտ են խորհրդապաշտության նշանները, որ գալիս են հեղինակի հոգեոր կրթությունից (քերականական դպրոց) ու քրիստոնեական աշխարհայցքից, գուցե և ուղղակիորեն Բարսեղ Կեսարացու պատարագից, որ ընդունված է եղել արևմտյան բոլոր եկեղեցիներում: Աստվածաբանական համալսարանից եկող գանիսական արքայագնի հմայքը շատ առումներով պայմանավորված է նրա խորհրդապաշտ նկարագրով և ոգեխոսական մղումներով:

Պատարագի խորհրդանիշերի մեկնություններում ատտիկյան դրաման նկատի չի առնված, ինչպես նկատեցինք, վկայություն չլինելու պատճառով: Կա մի վկայություն սակայն, որ դուրս է մեր զննումների ճանապարհից և չի կարող նկատի չառնվել: Դա տիեզերական նավի խորհրդանիշն է՝ տրված իր իսկ ժամանակին, «Առաքելոց սահմանադրութեանց» 2-րդ գրքում:

Յորժամ ժողովեսցես (եպիսկոպոսդ) զեկեղեցին Աստուծոյ. իբրև մեծի իրիք նաւու՝ բազում իմաստութեամբ Հրաման տացես ժողովոցն, ազդ առնելով սարկաւագացն իբրեւ նաւավարաց՝ սահմանել տեղիս եղբարցն իբրեւ նաւամտից՝ բազում հոգաբարձութեամբ եւ պարկեշտութեամբ: Եւ նախ, տաճարն լիցի երկայնաձեւ ընդ արեւելս, եւ ունիցի յերկուց կողմանց՝ կահուց տունս կամ սրսկապանս՝ ընդ արեւելս, եւ նաւու նման լիցէ: Կացցէ ի միջի աթոռ եպիսկոպոսին, եւ յաջմէ եւ յահեկէ նստցի քահանայութիւն, եւ սարկաւագունք առընթեր կացցեն զգաստք եւ թեթեւ զգեցեալք, զի նմանին նաւազաց եւ որոց թիավարեն:<sup>24</sup>

Կանոնը IV դարից է (VI դարում թարգմանվել է հայերեն), խորհրդանիշը գալիս է միթոլոգիական շատ հին պայմանաձենից՝ անհամեմատ հին, քան ատտիկյան դրամայի օպսիսը: Մի բան է ատտիկյան դրամայի փոխակերպումը և այլ բան հին խորհուրդը՝ դրված «Առաքելոց» և «Առաքելական» խորհրդատերերի բովանդակային հիմքում: Այդպես էլ լինելու էր: Դրամայի ծիսական գետերմինանտը քրիստոնեական-պաշտօնական կանոնում չէր կարող մեկնություն ստանալ. պատարագը դրամայի փոխաձեռումը լինելով, նաև մերժումն էր, ըստ էության: Իսկ նավը մեկնողական համեմատական է և նշանային դրսերում չի խնդրում: Այսուամենայնիվ,

երկուսն էլ, մեկը որպես ձեային կողմնորոշիչ, մյուսը միթողոգիական պայմանաձև, գործում են պատարագում: Ծովը մոլորության ու վտանգի, նավը հույսի ու փրկության խորհրդանիշն է քրիստոնեական տեսիլքներում: Կարդանք Մաշտոցին վերագրվող շարականը.

Ծով կենցաղոյս հանապազ զիս ալեկոծէ,  
Մըրկեալ ալիք թշնամին ինձ հարուցանէ.  
Նաւապետ բարի, լեր անձին իմոյ ապաւէն...<sup>25</sup>

Նավն ու նավաբեկյալը, թվում է, իրային պատկերներ են նարեկացու աղոթագրքում, բայց դրանք հույսի ու տագնապի խորհրդակերպումն են տեսիլքային պայմանաձեռւմ: Երկրային կյանքը պատկերանում է որպես մոլորությունների ծով, և հոգին՝ ծով դուրս եկած, խորտակման ենթակա նավակում.

Այն զի ծով է ինձ ծփանաց  
Կենցաղոյս բերմունք յոյժ նմանագոյն,  
Յորում կոհակօք բազմօք անթիւ դիմեցմանց  
Տատանեալ հոգիս ի յայսմ աշխարհի՝  
Մարմնոյս շինուածով իբր ի նաւակի:<sup>26</sup>

Ծովն ու նավը ամենահին սիմվոլներն են մարդկության գիտակցության մեջ: Միթողոգիական մի պայմանաձև է Գիլգամեշի նավարկությունը դեպի մահվան անխուսափելիություն, այլ պայմանաձև Ողիսևսի ծովային ճանապարհը՝ վերադարձ ելման կետին, կյանքի վերսկսման գաղափարին: Իսկ նոյն տապանը լողում է դեպի մարդկային ցեղի նորոգման կետը: Քրիստոնեությունը մահվանը տվել էր անմահության իմաստ և պատարագի նավն ուղղում էր դեպի հավերժություն: Այստեղ մի հին խորհրդանիշ էլ կա՝ ուղեկից աստղը, որ գալիս է հին արևելյան գրականությունից.

Ճանապարհները բաց են,  
Փո ուղեկիցն է մայր աստվածուհին՝  
Կյանքի ստեղծողը...<sup>27</sup>

Պատարագում ուղեկից աստղը Աստվածամայրն է՝ առաջին բարեխոսը երկնքում, որի պատկերին ուղղված է նավապետի, նավագների ու փրկություն որոնող մարդկության հայացքը: Սա ավետարանից եկող միջանցիկ գաղափար է. «ո՞ւր է որ ծնաւ արքայն հրէից. զի տեսաք զատղն նորա յարեելս» (Մատթ., Բ, 2): Այս գաղափարն ի հայտ է գալիս նաև Դանտեի տեսիլքում երկակի իմաստով. Սուրբ կույսի պրոյեկցիան՝ Բեատրիչե, և կանտիկաներն ավարտող մեկ բառ՝ stelle, որ դարձյալ արևելքից ծագող աստղն է: Իսկ եթե գալու ենք նոր ժամանակներ, կանգ առնենք Այվազովսկու տիեզերական փոթորկի առջե: Երկնքի ու երկրի միջև տարուրելիքող նավը խորհրդանիշը չէ՝ արդյոք տագնապող հոգու, և մթին ամպերի տակից թափանցող արեգակի թույլ շողբը՝ փրկագործության ու հույսի նշան:

Սա պայմանական հասկացությունն է թատերագիտության մեջ: «Դրամա» բառը միջնադարյան մատենագրությամբ ավանդված չէ և ծիսական գրականությանն էլ օտար է: Արևմտաեվրոպական թատրոնի պատմաբաններն են հորինել այս հասկացությունը, նկատի ունենալով Ծննդյան ու Զատկական տոների որոշ արարողություններ պատարագից տարբեր, նաև եկեղեցու բեմից դուրս: Ավետարանական թեմաների բեմականացման այս եղանակը դրամայի պատմության մեջ դիտվում է մասսամբ եկեղեցական և մասամբ թատերական մշակույթի դրսերում: «Լիթուրգիական» բառը, որ գալիս

Է հունարեն լեւուրցիւ-ից, նշանակում է տուրք, ծառայություն, պարհակ, դեր (գործառույթ), պարտք: Պատարագամատույցի ուսումնասիրողը՝ Հ. Գաթրճյանը թարգմանում է ծիսական: Թերևս ճիշտ կղիներ ասել պատարագյին, լեզվական համարժեքության առումով, բայց երեսութիւն փունկցիոնալ համարժեքությունն այլ է՝ պատարագից դուրս: Դուրս, բայց ոչ ազատ, այլ ծիսական օրացույցում:

Արևմտաելքրոպական թատրոնի պատմաբանները դրամայի այս տեսակի սկզբնավորումը տեսնում են IX-X դարերում: Այս տեսակետն արձանագրված է բոլոր դասագրքերում ու հանրագիտարաններում: Գրական վկայությունները հին չեն՝ դալիս են ելքրոպական ազգային թագավորությունների կազմավորման շրջանից: Առաջին սյուժեն Զատկական ցիկլից է, առնված է Մատթեոսի ավետարանի 28-րդ (ի՛լ) և Մարկոսի ավետարանի 16-րդ (ԺԶ) գլխից: Հիսուսի մահվան երրորդ օրն առավոտյան Մարիամ Մագդաղենացին, Հակոբի մայր Մարիամը և Զերեղեսոսի մայր Սողոմեն այցի են գնում Հիսուսի գերեզմանին, և նրանց առջեւ հայտնվում է Տիրոջ Հրեշտակը «իբրեւ զփայլակն, և համերձ նորա սպիտակ իբրեւ զծիւն»: Այս հատվածը հարց ու պատասխանի է վերածվել: Հարց է տալիս ճերմակազգեստը, պատասխանում են կանայք, թե փնտրում են Հիսուս Նազուրեցուն: «Ձէ աստ. քանզի յարեաւ՝ որպէս ասացն, — պատասխանում է ճերմակազգեստը:— Եկայք տեսեք զտեղին, ուր կայը: Եւ վաղվաղակի երթայք ասացէք աշակերտացն նորա, թէ յարեաւ: Եւ ահա՝ յառաջանայ քան զձեզ ի Գալիլեա. անդ տեսանիցէք զնա»: Այս խոսքերին հետեւում է խմբերգը: Երգում են Հարության շարականը:

Պատարագի սկզբունքներից մեկն այսեղ խախտվել է. դերակատարները խոսում են ենթագրվող պերսոնաժների անունից, ստեղծվել է տեսարանի ու հանդիսակա-

նի վիճակ, իսկ խմբերգը հուշում է նավի ու նավազների այլաբանական ներկայությունը: Տեսարանը սակայն դիտվում է պատարագի լույսով, և իսկապես հարմար է պատարագային դրամա անվանումը: Կերպավորումն այստեղ էլ բացառված է. գործող անձանց անունից խոսող դերակատարները ներկայանում են առանց կերպավորիման. կանանց խոսքերն արտասանում են սարկավագները: Իսկ այն, որ Մարկոսի ավետարանում հրեշտակի անուն տրված չէ, ասված է «երիտասարդ մի <...> զգեցիալ պատմուճան սպիտակ», մտածել է տալիս, թե այս խոսքը հետագայում չէ՝ գրված, ծեսի տպավորությամբ: Ենթագրում ենք, թերևս ոչ անհիմն, եթե նկատի առնենք ճարտասանական արվեստը քրիստոնեական կրթության հունական միջավայրում IV-V դարերում և ընթերցման արվեստի (վերծանական քերթութիւն) տեսությունը գրական փաստերի հիման վրա՝ հին դասական և նոր քրիստոնեական: Այս նյութին, որ մեր հիմնական կողմնորոշչին է, կանդրադառնենք իր տեղում:

Այսպիսով, ծեսի դրամատիկական-թատերային եղանակն արդյո՞ք IX դարում է հորինվել: Հետագա վկայությունները մեզ այլ բան են ասում: Հայտնի է, որ Եփրեմ Ասորին IV դարում արդեն գրել էր «Կանոն մեծի հինգչարաթուն Ունլուայի» ծիսական տեքստը, ըստ Հովհաննու ավետարանի 13-րդ (ԺԳ) գլխի: Հայտնի է նաև, որ XI դարում դա հայերեն է թարգմանել Գրիգոր Վկայասերը: Բայց դժվար է վճռել՝ «Ունլուան» ա՞յս շրջանում է մուտք գործել հայ եկեղեցի, ինչպես ենթադրում է Գալեզին Լեռնյանը<sup>28</sup>, թե՞ ավելի վաղ: Կարևոր է մի հանգամանք. արարողությունը կատարվել է ոչ թե եկեղեցու բեմում, այլ գավթում: Լեռնյանը վկայաբերում է «Ժամագրքի» ցուցումը. «յերեկոյի Ժ ժամուն ժողովեսցին ի գաւիթ եկեղեցւոյն, կատարեսցին զկարգ ուսնլուային»: Սա նշանակում է, որ արարողությունը պաշտոնական չի համարվել և հետագայում է գավթից

անցել բեմ: Բեմը խորհրդանշում է «Վերջին ընթրիքի» սեղանը, և համաձայն ավետարանի, «Ոտնլուան» տեղի է ունեցել Հիսուսի կանխասացության օրը:

Արևմտաեվրոպական թատրոնի պատմության ուսումնասիրություններում շեշտվում է այս ծիսակարգի աշխարհիկացման խնդիրը, որպես թե լիթուրգիական դրաման ձևավորվել է եկեղեցու բեմում, ապա անցել գավիթ, գավթից հրապարակ, և այս ճանապարհով վերածվել թատրոնի: Կեզծ տեսակետ է: Լիթուրգիական դրամայի ազատ մշակումները եղել են արևմտյան եկեղեցիներում, և դրանք մոտեցել են իսկապես թատերական ներկայացման: Սա միրակլների և միստերիաների սկզբնավորման շրջանն է (XII-XV դարեր) և կապ չունի լիթուրգիական դրամայի բեմից գավիթ իջնելու հետ: Աշխարհիկացումն այլ կերպ պետք է հասկանալ, ոչ այդքան պարզունակ: Լիթուրգիական դրաման սկզբնավորվել է բեմից դուրս: Դրա վկայությունը «Ժամագիրքն» է:

«Ոտնլուան» սկզբնապես մշակվել է վանական միջավայրում, ոչ թե հասարակության առջև: Երեկոյան ժամը 10-ին վանականները հավաքվել են գավթում (ժողովուրդը որտեղ՝ էր այդ ժամին) վերապրելու նախազատկի գիշերային խորհուրդը: «Եւ էր գիշեր...» (Յովհ., ժԳ. 30): Ծեսն սկսվում է խմբերգով. դպիրները երգում են «Ոտնլուայի» շարականը. «Աղբիւր լուսոյ եւ ճառագայթ անշիջանելի լոյս...»:

Երգեցողության ընթացքում Քրիստոսի խոսքերով ներկայացող բարձրաստիճան վանականը, հանդիսավոր զգեստավորումով, պատարագի թագը գլխին, սրբիչը մեջքին կապած, ինչպես զրված է ավետարանում, ձեռքին ջրի կոնք, մեկ առ մեկ լվանում է գավթում նստած վանականների ոտքերը, ոչ պայմանաբար, այլ իրապես: Գործողության խմաստը խորհրդապաշտական է, և նպատակը բնավ թատերային չէ: Վանականները կրկնում են Ավետարանով ավանդված ծեսը՝ վերստեղծում Քրիստոս

և աշակերտներ հարաբերությունը, իրենց իսկ գնելով նույն վիճակի մեջ՝ արժանանալու համար նույն փառքին: Զկա այստեղ կերպավորում, բայց կա վիճակ, որ իրական է, և պայմանականությունը վերածված է առարկայականության: Պայմանական է ավետարանական պերսոնամների անունից խոսելը, և իրական է այն, որ բարձրաստիճան անձը ծառայում է ցածրաստիճան անձանց ի հաստատումն այն խոսքի, թե «ոչ է ծառայ մեծ, քան գտէր իւր» (Յովհ., ժԳ. 16): Խմաստը պարզ է. նվաստանալը հիշեցումն է մեծության: Խմաստը մի պահ վիճարկվում է.

**Ղետրոս.** Տէր, դո՞ւ զիմ զոտս լուանաս:

**Յիսուս.** Զոր ինչ ես գործեմ, դու զայդ ոչ գիտես, բայց յապայ գիտասջիս:

**Ղետրոս.** Ոչ լուասցես զոտս իմ յաւիտեան:

**Յիսուս.** Եթէ ոչ լուասցից զքեղ, ոչ ունիս ընդ իս մասն:

**Ղետրոս.** Տէր, մի միայն զոտս իմ, այլ եւ զձեռս եւ զգլուխս:

**Յիսուս.** Լուասցելոյն չէ ինչ պիտոյ, բայց զի զոտն լուանայցէ:<sup>29</sup>

Բարոյական խմաստը հետո է ակնարկվում, ինչպես և ավետարանում է: Բայց ահա հաջորդ դրվագը, որ արդեն իսկապես դրամատիկական է ու բազմախորհուրդ, հայ եկեղեցու ծիսակարգում չենք տեսնում: Դա Հիսուսի կանխասացությունն է՝ «ոմն ի ձենց մատնելոց է զիս», և Պետրոսի հարցը՝ «ո՞վ իցէ» (Յովհ., ժԳ. 22, 25): Շարունակությունը հուշում է կատարյալ դրամատիկական վիճակ, մի մեծ ողբերգության սկիզբ, բայց ծիսակարգում դա չկա: Միսակարգը մշակվել է ոչ որպես թատրոն, այլ թատրոնի մերժում: Ավետարանը գրողները, նաև ծիսակարգի հեղինակը, գիտեին հույն գասական ողբերգու-

թյունը. դա ցայտում է նրանց տողերի արանքից, բայց նրանք զբաղված էին ոչ թե դրամայի ընդօրինակումով, այլ ծրագրված փոխաձևումով։ Բոլոր վիճակները նրանք վերածել են խորհրդանիշերի, մարեցրել կրքերի աշխարհը, ամեն ինչ տեղափոխել ոգու իրականություն։

«Ունլուան» առաջին պատարագային դրաման է և կողմնորոշիչ ըմբռնելու համար զատկական ցիկլի մնացած բոլոր սյուժեների բեմականացման սկզբունքն ու իմաստը։ Իսկ այն, ինչը թատրոնի պատմաբանները կոչում են սեկուլյարիզացիա կամ աշխարհիկացում, պարզունակ ընթացք չէ բեմից գավիթ, ոչ էլ զարգացման արդյունք։ Սեկուլյարիզացիան արտահայտվել է տեքստային ազատ մշակումներում՝ մի բան, որ ակնհայտ է արևմտյան եկեղեցիներում, նաև XVI–XVII դարերի սլավոնական եկեղեցում։ Օրինակ՝ «Դանելիան», որ ուշ միջնադարում մշակվել է որպես եկեղեցա-դպրոցական դրամա, վերածվել կատարյալ ներկայացման, կարճ տրամախոսություններով, կատակերգական տարրերով, խարույկի պատկերով ու բեմական էֆեկտներով, ի վերջո հանվել է եկեղեցական ծիսակարգից, և ծիսակարգում թողնվել է պարզ ընթերցանությունը։ Հայ եկեղեցական ավանդությունը նոր ժամանակներ է հասցըել նարուգործությունից և երեք մանկանց հրեական առասպելի ոչ թե խաղային, այլ ծիսային-ընթերցողական պատկերը։ Սա թերևս պետք է համարել հին, մոնոֆիզիտ եկեղեցու ավանդությունը։ Դրամայի օպսիսը կամ տեսանելի աշխարհը պատարագային արարողության օրենքով թողնված է հանդիսատեսի հոգու տեսողությանը։ Փակ վարագույրի առջև կանգնում են սպիտակ ժամաշապիկներ հագած երեք պատանիներ՝ ճեմարանականներ։ Երեքը՝ Սեղրաք, Միսաք և Հաբեթնագով։ Ոչ ինչ պիտոյ է վասն բանիդ այդորիկ տալ քեզ պատասխանի։ Զի է մեր Աստուած յերկինս զոր մեք պաշտեմք, կարող է փրկել զմեզ ի հնոցէ հրոյն բորբոքելոյ, եւ ի ձեռաց քոց…<sup>30</sup>

ցարձակ պայմանականություն է. կատարողները հավասար վիճակում են, դերերը բաժանված են ոչ ըստ հոգեւոր աստիճանի։

Դանիէլ. Յամին ութեւտասաներորդի Նաբուգուգոնոսորայ արքայի արար պատկեր ոսկի՝ բարձրութիւն նորա վաթսուն կանգուն եւ լայնութիւն նորա կանգուն վեց, եւ կանգնեաց զնա...

Նույն դերակատարը կարդում է նաև այն չարախոսների խոսքը, ովքեր գալիս հայտնում են, թե «աստ արք Հրեայք Սեղրաք, Միսաք և Հաբեթնագով ոչ հնապանդեցան հրամանի քում եւ զդիս ոչ պաշտեն և պատկերիդ ոսկւոյ զոր կամպնեցեր երկիր ոչ պագանեն»։ Դերակատարը շարունակում է ընթերցումը Նաբուգուգոնոսորի անունից, որ հրամայում է երեք պատանիներին նետել «ի հնոցն հրոյն բորբոքելոյ»։ Նրան պատասխանում են երեքը միասին ի մի ձայն։

Սեղրաք, Միսաք, Հաբեթնագով. Ոչ ինչ պիտոյ է վասն բանիդ այդորիկ տալ քեզ պատասխանի։ Զի է մեր Աստուած յերկինս զոր մեք պաշտեմք, կարող է փրկել զմեզ ի հնոցէ հրոյն բորբոքելոյ, եւ ի ձեռաց քոց…<sup>30</sup>

Համանման եղանակով է ներկայացվել տասը կույսերի առակը Մատթեոսի ավետարանի 25-րդ (իե) գլխից։ Մեկ ընթերցող ներկայացնում է ամբողջ առաջին հատվածը, տրամախոսությունները կարդում է մենակ։ Ընթերցողի աջ և ահյակ կողմերում տասը սարկավագներ (մոնթեր)՝ հինգը մեկ կողմում՝ ձեռքներին վառվող մոմեր, հինգը մյուս կողմում՝ ձեռքներին հանգած մոմեր։ Խումբը երգում է շարականը.

Իմաստուն կուսանքն պատրաստեալ իւղ լապտե-  
րաց  
Ելին ընդառաջ երկնաւոր փեսային վառեալ լապ-  
տերօք,  
Խոկ յիմարաց կուսիցն ունայնացեալ յիւղոյ  
Անպատրաստ դտան դպաստեամ փեսային շիջեալ  
լապտերօք:<sup>31</sup>

Թվում է, հին դիխորեայի (երկպար) և տրիխորեայի (եռապար) հիշողությունն է, որ պարերգական դրամայից անցել է եկեղեցուն: Տեսանելի պատկերը պայմանական է, նույնիսկ ձևական, բայց արարողության բնույթը թա-  
տերային է կերպավորման թեկուղ շատ հեռավոր, ծայ-  
րահեղ սխեմատիկ ըմբռնումով:

Դրամատիկական արտաքին ձեզ համեմատաբար ավելի խոսուն է «Վերջին դատաստան» լիթուրգիական դրա-  
մայում, որը հայ եկեղեցում ստացել է յուրահատուկ ժողովրդական անվանում՝ «Դոնքացեք» կամ «Դուանբա-  
ցեք»: Արարողությունը կատարվել է Ծաղկազարդի կիրա-  
կի երեկոյան, եկեղեցու փակ վարագույրի առջև, իսկ ավելի փաղ շըջանում՝ եկեղեցու փակ դռան առջե: Ինչ-  
պես մեր ներկայացրած նախորդ ծիսային տեսարաննե-  
րում, այնպես էլ այստեղ դրված է երկրորդ՝ կյանքի գա-  
ղափարը, անցումը մարմնականից հոգեռոր վիճակի: Սահ-  
մանը խորհրդանշված է դրախտի փակ դռան պատկերով,  
որի պայմանանիշը մի դեպքում եկեղեցու դռուն է, այլ  
դեպքում վարագույրը՝ սահմանը երկնքի ու երկրի միջև:  
Եվ ահա ծիսական շուրջառով ու պատարագի թագով  
զարդարված քահանան փրկադործման հույսով ներշնչ-  
ված հավատացյալ հոտին առաջնորդում է դեպի բոլոր  
հույսերի հանգրվանը: Նա թակում է դրախտի փակ  
դռուը.

Քահանայ. Բաց մեզ, Տէր, բաց մեզ, Տէր, բաց  
մեզ զդուռն ողորմութեան, որ ողբալով կարդամք  
առ քեզ:

Վարդապետ (ներսից). Ո՞վ են սոքա, զի բացից,  
զի այս դուռն Տեառն է, եւ արդարք մտանեն ընդ  
այս:

Քահանա. Ոչ միայն արդարք մտանեն, այլ եւ  
մեղաւորք խոստովանութեամբ եւ ապաշխարու-  
թեամբ արդարացեալք մտանեն ընդ այս:

Վարդապետ. Զի սա է դուռն երկնից <...> ար-  
դարոց հանդիսատ, մեղաւորաց քաւարան, հրեշտա-  
կաց բնակարան, սրբոց ժողովարան, տեղի ապաւէնի  
եւ տուն Աստուծոյ:

Քահանա. Արժան եւ ճշմարիտ են այդոքիկ զորս  
ասեսդ վասն սրբոյ եկեղեցւոյս. քանզի սա է մեզ  
մայր անարատ եւ սա է մեզ յոյս կենաց եւ սա է  
մեզ ճանապարհ արդարութեան...

Դափիրների խումբը (երգում է դրսից).

Շնորհեա մեզ, Տէր, արթնութիւն

Ընդ իմաստուն կուսանացն...

Վարդապետ. Փողն ահաւորին աստուծոյ՝ ահա-  
գին ձայնիւ գոչէ ասելով. ահա փեսայ գայ, արիք  
ընդառաջ նորա:

Քահանա. Ահա ես եւ մանկուք իմ զոր ետ ինձ  
աստուած, կամք ամենեքեան եւ ակն ունիմք  
տեսոյն Քրիստոսի եւ լսելոյն զերանաւետ բարբառ  
նորա:

Վարդապետ. Եկայք օրհնեալք հօր իմոյ,  
ժառանգեցէք պատրաստեալ ձեզ արքայութիւնն ի  
սկզբանէ աշխարհի:

Քահանա. Բաց ինձ զդրունս արքայութեան. զի  
մտից ընդ այն...<sup>32</sup>

Այս արարողությունը, որ հետագայում է մշակվել, այնքանով է դրամատիկական, որ վիճակի փոփոխություն կա. սկսվում է ողբացին աղերսանքով, ավարտվում երկնային փառաբանության հիմնով. արարողության սկիզբը երկրում է՝ մեղքի ու ապաշխարության վայրում, ավարտը երկնքում՝ երախտահատուցման վայրում: Երկրային կրքեր չկան, և դրամատիկական գդացմունքը կրոնական էքստազի մեջ է:

Դրամատիկական գդացմունքների տեսակետից ամենատպավորիչը «Զարչարանքի գիշերն» է, որ կոչվում է նաև «Սգո գիշեր» կամ «Խավարում», երեմն՝ «Խավարման գիշեր»: Լիթուրգիական դրամայի սեկուլյարիզացիան պյտեղ ենք տեսնում: Աստվածամոր ողբը բացարձակորեն մարդկայնացված է և կրում է ժողովրդական աշխարհայցքի կնիքը: Արարողությունը տեղի է ունենում ավագ հինգչաքթի, գիշերը: Մուլթ է: Խաչելության առջև վառվում են մի քանի մոմեր: Խավարի մեջ ընթերցվում են ավետարանի ամենաողբերգական հատվածները: Հիսուսը խաչվում է «Էլի, Էլի, լամա սաբաքթանի» խոսքերով (Մարկոս, ԺԵ. 34): Ավետարանի 15-րդ զլիսի ամեն մի հատվածի վերջում հանգցվում է մեկ մոմ, ապա տիրում է խավար, և խավարում երկու գլիխներ երգում են ժողովրդական բանաստեղծության վերածված Մարիամի և Հիսուսի եղերական զրույցը:

Մայր. Յիսուս, որդեակ իմ միածին,  
Է՞ր վասն ի խաչ բեւեռեցար,  
Այ իմ որդեակ, այ իմ քաղցրիկ,  
Վասն է՞ր եղեր արեամբ ներկեալ:  
Որդի. Մի լար, սուրբ կոյս աղերսալի,  
Փոխան իմոյ աշա քեզ որդի.  
Մի լար, ով մայր իմ ցանկալի,  
Զի մի մնասցես առանց որդի:  
Մայր. Այ իմ միածին որդի, որպէս մատնեցար,

Այ իմ ցանկալի որդի, որպէս ձաղեցար,  
Այ իմ լուսատես որդի, որպէս ապտակեցար,  
Այ իմ համասփիւր ծաղիկ, որպէս թառամեցար,  
Այ իմ կենդանի աղբիւր, որպէս ծարաւեցար:  
Որդի. Մի լար, մայր իմ, այնպէս սգալի,  
Ահա ցաւ իմ ինձ կսկծալի,  
Մի լար, մայր իմ, դառն ու արտասուալի,  
Ապա որդի քո իմ սիրելի,  
Մի լար, մի լար, մայր իմ ցանկալի...<sup>33</sup>

Սա իհարկե վաղ միջնադարի լիթուրգիական դրաման է: Ժողովրդական կրոնասիրությունը մարդկայնացրել է ծեսը, խաչելության իմաստը միստիկական լավատեսությունից փոխել էլեգիական ողբերգության: Այսեղ և խոսքն է պոետական, և արարողության միջնորդուն է թատերային. Խաչվածի և Մոր զրույցը խավարի մեջ՝ մարդկային տառապանքի ճշմարիտ գույներով:

Լիթուրգիական ցիկլի ամենաողբերգական թեմայի այս ուշ մշակումը՝ ժողովրդական ողբի երանգներով, մեզ կարող էր այսքան չհետաքրքրել, եթե նրա գեղագիտությունը հիմքեր չունենար վաղ միջնադարի վերծանական քերթության կանոններում: Ողբերգականի էլեգիական իմաստավորումը և քավության գաղափարի քրիստոնեացումը տեսել ենք «Պիտոյից գրքում».

<...> խառնելով եւս զքաղցը նուագերգութիւն ձայնիցն, եւ զյաջողակ խրատուցն կարգաւորութիւնս յարմարական. որով սփոփեալ զբնաւ վշտացեալ սգաւորացն մխիթարելով անձինս:<sup>34</sup>

Առիթ ունեցել ենք քննելու ողբերգութիւն և թրողածիա (թւենողիա. թրողնօս – ողբ, քծի – երգ) բառերի սերտ կապը, որ արտահայտված է Մտեփանոս Մյունեցու քերականական մեկնությունում («ողբերգութիւն զմխի-

թարական ասէ, զորս ի վերայ մեռելոց եւ կամ այլ ինչ թշուառութիւն կրելոց առնեն») և ողբերգութիւն բառի ճարտասանական բացատրությունում՝ «ընդ ողբսն յուսոյն նուազն խառնեալ»<sup>35</sup>: Նիկողայոս Աղոնցը ժամանակին նկատել է, որ հույն մեկնիչ Մելամպոդոսի՝ էլեքփիային վերաբերող խոսքը («էլեքփիաներն ասվում են ի միիթարություն...») Սյունեցին վերագրել է ողբերգությանը<sup>36</sup>: Դա ոչ պատահականություն է, ոչ էլ շփոթմունք. դրա հիմքում ողբ և ողբերգութիւն միջնադարյան գրական ու բանահյուսական երևույթների համանմանությունը կամ նույնությունն է: Դա հայ միջնադարյան բանաստեղծությանը հատուկ մի գիծ է, որ անցնում է վաղ միջնադարից մինչև ուշ միջնադարի վերջը: Ժարտասանական կանոնի և վաղ միջնադարյան նորմատիվ գեղագիտության արտահյատությունը Աստվածածնի ողբի անգամ ուշ շրջանի մշակման մեջ պատահական չէ:

Լիթուրգիական ցիկլի սկզբում, որպես հնագույն ավանդություն, դրեցինք «Ոտոնվան», մասամբ ընդգծելու համար այս թատերային ծիսակարգի ասորական ծագումը: Թատերագիտական գրականության մեջ անտեսված կամ չիմացության է տրված լիթուրգիական դրամայի, որպես քրիստոնեական միստերիալ թատրոնի հիմքի, հնությունը և արևելյան եկեղեցական ավանդություն լինելը:

Անտիկ թատերական ավանդությունը դասականության վերապրուկներով և հելլենիստական գծերով արմատավորվել էր Առաջավոր Ասիայում, մասնավորապես Ասորիքում: Աշխարհագրական այս տարածքում հայտնաբերված տասնութ թատերական շենքերը հռոմեական տիպի են: Բայց թատերական ավանդությունն այստեղ սկիզբ է առել հռոմեական պրինցիպատից առաջ՝ Սելեկյանների շրջանում (II դար մ.թ.ա.): Անտիոքը, Ապամեան, Գագան, Զեբելը թատերական մշակույթի կենտ-

րոններ մնացին նաև հռոմեական տիրապետության շրջանում (I-III դդ.): Սա նաև քրիստոնեության աստիճանական արմատավորման շրջանն է, երբ Ասորիքը դառնում է առաքելության կենտրոն: Ասորիքից Հայաստան եկող քարողիչներն Աստծո միամիտ ծառաներ չեն, այլ որոշակի ծրագրով գործող գաղափարական միսիոներներ: Նրանք ինչ ասես չգիտենին՝ էլ մեհենական պատմություն, էլ հին ու նոր ծիսակարգեր, էլ առասպելավարժություն ու ճարտասանություն, չհաշված լեզուները՝ հունարեն, արամեերեն, հայերեն, եբրայերեն: Եկեղեցական ծիսակարգերի հաստատման մեջ ասորական եպիսկոպոսությունների իրավունքներն ո՞վ կարող էր կասկածի առնել: Մաշտոցը հայոց գրերը կարող էր ստեղծել և հայոց հողում (գուցե այդպիս էլ եղել է), բայց ո՞վ կընդուներ ազգային առաքյալին, եթե նա չգնար առաքելության միջազգային կենտրոն և չգար ասորական և հունական եպիսկոպոսությունների համաձայնությամբ հաստատված թղթերով: Եղեսիայից Սամոսատ և Սամոսատից Եղեսիա գնալ-գալով, Մաշտոցը, ինչպես նկատվել է, զբաղված էր իր գյուտի իրավական վավերացման խնդրով<sup>37</sup>:

Առաքելության կենտրոնից էին բերվում հայոց գրերը, Աստվածաշնչի թարգմանության և Քրիստոսի ավետարանը հայոց լեզվով քարողելու իրավունքը, Առաքելական խորհրդատերերը, լիթուրգիական դրաման, ինչպես նաև վանական եղբայրանոցների, ուսումնական կենտրոնների կազմակերպման սկզբունքները:

Ծիսակարգային օպսիսը բեմական ընդհանուր մի դեմքը մինանատ էր՝ հաստատված Առաքելական և Բարսեղյան խորհրդատերերով: Այդ տեսարանային կարգն ստեղծողներին շատ բան էր հայտնի՝ և քրիստոնյաների մահապատիճները թատրոնների հրապարակներում ու խորաններում, և անտիկ դրամայի դպրոցական-ճարտասանական վերաիմաստավորումը: Դժվար է այս ամենից

անկախ պատկերացնել վաղ միջնադարի ծիսային գրականությունը: Հայտնի է, օրինակ, որ հունական, հետագայում լատինական եկեղեցում Հովհաննու ավետարանի «Քրիստոս և Պիուատոս» հատվածը ներկայացվել է երգային տրամախոսությամբ: Դա եղել է ավելի վաղ, և դրա վկայությանը կհանդիպենք Դիոնիսիոս Թրակացու հույն-բյուզանդական մեկնություններում: Այս կոնտեքստում է XI դարում գրված եփստաֆիոսի «Հեփոկրիսիսի մասին» տրակտատը, որի նշանակությունը միայն տեսական չէր: Հելլենիզմի գարաշրջանի գերասանական արվեստը եփստաֆիոսը վկայաբերում է որպես գրքային հիշողություն, բայց բյուզանդական դպրոցներում ընթերցում ու մեկնում էին Սոֆոկլեսի ու Եվրիպիդեսի ողբերգությունները: Մերժելով թատերական կերպարավորումը, եփստաֆիոսը չի կորցնում դրամատիզմի գաղափարը: Որոսառության (պրոսոպոպիա) ասվածը, որ հայերեն թարգմանվել է դիմանութիւն («Ճևացուցանելն զդէմս այլոց, ձև խօսելոյ ի դիմաց անխօսից»), նշանակում էր ոչ միայն երկու անձի փոխհարաբերություն, այլև հակադրության օբյեկտի ենթադրական ներկայություն, մտացածին դեմք ճարտասանի համար: Փաստորեն թատերայինը մերժող եփստաֆիոսը չի մերժում դրամատիզմը: Պրոսոպոպիան խոսքի արվեստ էր՝ ճարտասանության մի ձև, որ չէր նույնացվում միմեսիսի հետ<sup>38</sup>: Այսպիսով, բացառվում էին արտաքին կերպավորումն ու խաղային տարերքը որպես դրության արտահայտություն, գործողությունը պատկերացվում էր անդրանցական իրականության մեջ, և դրաման դառնում էր դպրոցական վերծանական քերթութեան նյութ: Իսկ այն, ինչ ստեղծել էին ատտիկյան օրիստրամ և ուշ հռոմեական սցենար, սկզբունքորեն մերժվելու էր: Փոխված էր ծիսային թատերակարգը՝ տեսանելի աշխարհին փոխարինում էր մտահայեցվող աշխարհը, և հասարակական հաղորդակցման կենտրոնը եկեղեցին էր:

## «ԸՆԴՀԵՄ ԹԱՏԵՐԱՅ»

Հայ թատրոնի պատմաբանները գժվար են հաշտվում այն մտքի հետ, որ հայ եկեղեցին մերժելով մերժել է թատրոնը, և միջնադարի բոլոր հեղինակները, ուղղակի, թե անուղղակի, պաշտպանել են եկեղեցու վերաբերմունքը: Թատերագետը կուգենար, որ այդպես չլիներ, բայց այդպես պետք է լիներ, ոչ այլ կերպ: Սա ոչ եկեղեցու մեղքն է, ոչ էլ պատմության. այդպես է երևույթի տրամաբանությունը: Այն, որ անտիկ թատրոնի փլատակներից բարձրացող եկեղեցին հիմնվել է որպես թատրոնը մերժող հաստատություն, և թատրոնամերժ ճառերը մշակվել են վաղ քրիստոնյա հեղինակների՝ Տերտուլիանոսի, Կիպրիանոսի և Կիլմենտ Ալեքսանդրացու ճառերի հիման վրա, ճշմարիտ է: Շշմարիտ է և այն, որ մեր թվականության I-II դարերում թատրոնը հեռացել էր դասական ակունքից, խղել կապը գրականության հետ, վերասերվել, ինքնասպառվել, և թատրոնի դեմ եկեղեցու հայրերից առաջ ճառել են հեթանոս հեղինակները: Վերաբերմունքը, նույնիսկ բառերն ու խոսելակերպն այստեղից են բերում եկեղեցու հայրերը: Փոքրասիացի հույն հռետոր Էլիաս Արիստիդեսի (129–189) «Այն մասին, որ կատակերգություններ չպետք է խաղալ թատրոնում» ճառը ներկայացնում է բոլոր հիմնական կանխադրույթները, որոնցից ենում են քրիստոնյա հեղինակները՝ սկսած լատին աստվածաբաններից, ասորական ու բյուզանդական եկեղեցու հայրերից մինչև Հովհան Մայրավանեցին (VII դ.), Սիմեոն Աղձնյաց եպիսկոպոսը (VIII–IX դդ.), Ինոկենտիոս պապը (XIII դ.) և Իգնատիոս Կամմարդոն (Խոպանիա, XVII դ.): Ավելին, անգլիական պուրիտաններն էլ նույն ելակետն ունեն: Սրանք էլ գալիս են Հովհան Ուկերերանից ու Օգոստինոս Երանելուց: Միայն մեկ հեղինակ՝ ասորի Խոռիկիոսը (VI դ.) այլ կերպ է մտածում: Նա միմական թատրոնի ջատագովն է

Գաղայում և հեռավոր բանավեճի մեջ է Ոսկեբերանի հետ<sup>39</sup>:

Արդ, ո՞ր տիպի թատրոնի դեմ է ճառում էլիաս Արխատիդեսը, որ հեթանոսական բարոյականության դիրքերից է գատապարտում Դիոնիսիոսի տոնակատարության ժամանակ խաղացվող միմական ներկայացումները և երդում է Զեսի ու Աֆրոդիտեի անունով: «Մենք պետք է գինի հեղենք, զոհեր մատուցենք, ներբողյաններ երգենք, ծաղկեպսակներով զարդարվենք», – ասում է նա, ավելորդ ու անթույլատրելի համարելով կրոնական տոնակատարությունն ուղեկցող «ծաղրածուական ու խեղկատակային ելույթները»: Արխստիդեսը բերում է իր ժամանակներում հայտնի ասացվածքը. «ի՞նչ մեղք ունի այստեղ Դիոնիսոսը»<sup>40</sup>: Պարզ է, որ Արխստիդեսը ապօլոյան մշակույթի մարդն է և հակառակ է բաքոյան տարերգին: Արխստիդեսի ժամանակ դասական թատրոնը գրքային հիշողություն էր, և դրա ջատագովները՝ գրքի մարդիկ: Եվ Արխստիդեսի, և հետագայում հույն և լատին աստվածաբանների ճառերը վերաբերում են անկման շրջանի հունական կատակերգությանը: Դա կոչվում էր միմու և ներկայացնում էր միթոլոգիական թեմաների ու առօրյա կենցաղային սյուժեների ծաղրական վերաբարդություն, անպարկեցության հասնող տեսարաններով: Այս էր, որ ժառանգել էին Բյուզանդիան և Ասորիքը: Այս մասին էին նաև եփրեմ Ասորու, Բարսեղ Կեսարացու և Հովհան Ոսկեբերանի ճառերը:

Թատրոնի վերասերումը մերժման պատճառներից մեկն է, առաջինը և սկզբնապատճառը, բայց ոչ միակը և գլխավորը: Քրիստոնեական պատարագը, որ իր մեկ շերտում անդրադարձնում է ատտիկյան դրաման, կամ նրա փոխածեռումն է, մղում է պարզունակ մի հարցի. ի՞նչ էին մտածելու եկեղեցու հայրերը, եթե դրական նյութի հետ միասին պահպանված լիներ (անհնարին

բան) թատրոնի դասական տիպը. ընդունելո՞ւ էին...

Փորձենք, ուրեմն, ըմբռնել թատրոնի մերժման փիլիսոփայական և բարոյա-փիլիսոփայական հիմքերը:

Թատրոնի պատմաբաններին այս հարցը չի զբաղեցրել, հայ թատրոնի պատմաբաններին՝ առավել ևս: Եթե զբաղեցրել է, հանգեցրել է պարզունակ ու կոպիտ վճիռների, այն է՝ թատրոնի մերժումը «Հետադիմական» շարժում: Լուրջ չէ, բանավեճն էլ ավելորդ է:

Թատրոնը միջնադարում չի համարվել արվեստ:

Իսկ ի՞նչ ասել է արվեստ, ըստ միջնադարյան հայացքի:

Միջնադարի գեղարվեստական աշխարհացքը անջրպետված է նախորդ և հաջորդ դարաշրջաններից: Քրիստոնեական գաղափարախոսությունը իր ժամանակի արվեստին տվել է խիստ պայմանական, խորհրդանշային և ոգեխոսական բնույթ: Գիտությունների և արվեստների միջնադարյան ստորակարգումը ձևականորեն ենթում է հելլենիզմի դարաշրջանում կարգավորված ընդհանուր մի սկզբունքից: Ուշ անտիկայից ժառանգված, այսպես կոչված, աշխարհիկ գիտությունները միջնադարում ծառայել են ոչ միայն աշխարհիկ նպատակների: Գեղարվեստական աշխատանքի միջնադարյան ըմբռնումը հիմնական եղբերում անբաժանելի է նրա, որպես գիտածանաչողական և կրոնա-պաշտամունքային զբաղմունքի ըմբռնումից: «Փիլիսոփայությունը աստվածաբանության աղախինն է»: Հովհան Դամասկացու այս խոսքը, ընդհանուր մի իրողության հաստատումն է: Սկսած վաղ միջնադարից մարդու հոգեոր գործունեությունը դիտվել է որպես բարեպաշտության սխրանք. գիտությամբ ու ստեղծագործությամբ զբաղվելը անբաժանելի է համարվել ասկետական կենցաղից ու ինքնազրկումից, և մտքի ու երևակայության ամեն մի գործ կապվել է Աստծո գաղափարի հետ:

Ի՞նչ իմաստ ու նպատակ էր ունենալու հեթանոսու-

թյունից ժառանգված թատրոնը, եթե միջնադարյան արվեստում մարդը, բնությունը, աշխարհը չեն պատկերացվել Աստծուց և քրիստոնեական տիեզերաբանությունից դուրս, եթե գեղարվեստական գիտակցությունը դրսեորդվել է կրոնական ձգտումների հիմքի վրա:

Թատրոնը չէր կարող տեղափորվել միջնադարյան մտածողի հոգեկոր ձգտումների աշխարհում: Միջնադարը ստեղծել էր տիեզերքի անշարժ, համաչափ ու ներդաշնակ մի պատկերացում, որի ոչ մի տարրը կամ մասնիկը չէր կարելի փոխաձեւ, ընդօրինակել, մանավանդ վերստեղծել: Դա նշանակում էր խեղաթյուրել արարչի հորինած կատարյալ աշխարհի պատկերը, խախտել նրա ներդաշնակությունը: Թատրոնի մերժման տեսական-փիլիսոփայական հիմքն այս է: Կարդանք Բարսեղ Կեսարացու «Վեցորեայք»-ի «Ազգի տեսիլք մոլեզինք լինէին ի քաղաքս բազումս» խոսքերով սկսվող ճառը: Իրականության եղծված պատկերին, որ ներկայացնում էր թատրոնը, նա հակադրում է Աստծո ստեղծած աշխարհի անեղծ պատկերը.

Մենք ունիմք զտեսիլ մեծամեծաց սքամչելեացն աստուծոյ, եւ զարմանալի գործոցն նորա. և ամենենքեան հրաւիրեալք եմք գալ ի տեսիլ գործոց Արարչին: ...Եւ նախ հայեցեալ տեսցուք զերկինս, որ ձգեցան խորանարդ գմբեթաձեւ ըստ բանին մարդարէին. եւ ապա զերկի՞ լայնատարած եւ երկայնածիգ մեծութեամբ, որ ունի ինքն զինքն ի վեր, եւ հաստատեալ կայ անշարժ զաւրութեամբն...<sup>42</sup>

Եվ աշխարհի, ըստ միջնադարյան հայացքի, նույնն է, թե տիեզերքի կենարոնում, որպես աստվածային սկզբունքի իրականացում, զրված էր Արարչի ամենակատարյալ դործ՝ մարդը: Կարելի՞ չը նրան տալ ուրիշ կերպարանք, արվեստական ձևերով այլակերպել ու այլագունել մար-

դու դեմքն ու մարմինը: Սիմեոն Աղձնյաց եպիսկոպոսի (մոտ VIII–IX դդ.) պատկերավոր խոսքով՝ դա նշանակում էր սատանայի թույնով լվացվել, հոգին խավարով ծածկել՝ թաքցնել Աստծու լույսից:

Քեզ ինքնին դեւս յաւրինես, եւ գկերպարանն Աստուծոյ ի կերպարանս ագռաւուց ներկել ի գոյն սեւութեամ մրով եղածնես, այլագունես ի կերպարանն սատանա(յ)ի:<sup>42</sup>

Այս պարզունակ դատողությամբ Սիմեոն եպիսկոպոսը հաստատում է որոշակի բարոյա-գեղագիտական սկզբունք: Մարդու արտաքինը հոգու խորհրդանիշն է, և նրա ամենաճշգրիտ վերաբարպությունը չի կարող լինել ավելի կատարյալ, քան այդ արել է Աստված, ուրեմն ավելորդ է ու մերժելի: Պատոն-արիստոտելյան միմեսիսը կամ ընդօրինակումը, որպես գեղարվեստական արտահայտության սկզբունք, միջնադարում մերժված է: Եվ որտեղի՞ց են գալիս մարդկային կերպարանքների պայմանական դիրքերն ու արտահայտությունները հին որմնաքանդակներում ու մանրանկարներում: Եթե նկարը, ըստ Ներսես Լամբրոնացու «ոչ ճգրտութեան երանդոց կարօտի՝ առ ի հրատարակել զիւրն կենդանութիւն»<sup>43</sup>, առավել ևս անընդունելի էր լինելու մարդկային կենդանի վարքագծի հրապարակային ցուցագրումը՝ թատրոնը, որի հիմքը միմեսիսն է:

Արվեստի վաղ միջնադարյան ըմբռնումը ավելի պարզ պատկերացնելու համար, կարդանք Դիոնիսիոս Թրակացու «Քերականության»՝ Դավթի մեկնության սկիզբը:

Յերկուց իմն պատճառաց մարդոյս գոյացեալ հաստատեցալ բնութիւն՝ յոգւյ եւ ի մարմնոյ, եւ սոցա արուեստ որոշեալ առանձինն ըստ ինքեանց,

ոգւոյն՝ բանականն եւ մարմնոյն՝ գործնականն, բայց հաւասարութեամբ առ միմեանս կապակցեալք, մինն՝ մտածաւրէն առաջնորդելով եւ միւսն զնոյն գործով կատարելով։ Եւ ձեւք երկոցունց ըստ երից որոշմանց՝ բարւոյ եւ չարի եւ միջակի։ Բանականին, որ է բարի՝ գիրք ինչ կամ երգք հոգեւորք, չարին թովչութիւնք եւ կախարդութիւնք, միջակին՝ մրմունջք եւ նմանք նոցին։ Իսկ գործնականին՝ աւգտակարք յարհեստիցն հիւսնութիւն եւ դարբնութիւն եւ նմանք սոցին, եւ չարին՝ դեղ մահաբերք եւ գործիք, իսկ միջակին՝ աղեղնաւորութիւնք եւ գեղապարելն։<sup>44</sup>

*Այսպիսով, արվեստը նախ ունակություն է՝ «գործնական» նպատակի իրականացումը «բանականի» (հոգեոր, տեսական) միջոցով՝ «առ պիտանացու ինչ կատարումն, որ ի կենցաղում»։ Կենսական կամ հոգեոր օգտակարություն չունեցող արվեստների համար, որոնք են «թովչութիւնք», «մրմունջք եւ նմանք նոցին» և «գեղապարելն», Դավիթ Անհաղթը գտնում է միջնադարյան հայացքների տեսակետից ավելի բնութագրական մի բառ՝ արհեստութիւն։ Այս բառը նաև թարրոնին է վերաբերում և, նույն տեսակետից, ստույգ է սահմանում նրա տեղը.*

Եւ են ընդունայն արհեստութիւնք՝ լարախաղացութիւն, ձողախաղացութիւն, որք ոչ օդտեցուցանեն զկենցաղս եւ ոչ վնասեն։<sup>45</sup>

*Մարդկային գործունեության բնագավառների նման ստորակարգումը գալիս է ուշ անտիկ դարաշրջանից։ Բայց այստեղ էլ էական մի տարբերություն կա։ Ուշ անտիկ մտածողները հստակ տարբերություն են դնում եթե ոչ արվեստի ու արհեստի, ապա գիտության ու*

արվեստի, մանավանդ նրանց գեղարվեստական և ոչ գեղարվեստական ֆունկցիաների միջև։ «Բարու», «չարի» և «միջակի» սահմանները Դավիթ Անհաղթի որոշարկումով գրեթե նույնն են, ինչ օգտակարի, անօգտակարի և չեղոքի սահմանները անտիկ մտածողների համար։ Բայց այն սկզբունքը, որ «ամեն մի իրական գիտություն և արվեստ ընկալվում է նրանում ի հայտ եկող գեղարվեստական և ոչ գեղարվեստական ֆունկցիաների հիման վրա»<sup>46</sup>, խորթ է միջնադարյան, անգամ վաղ միջնադարյան մտածողների համար։ Ալեքսանդրյան ակադեմիայում կրթված, արիստոտելյան դիրքերից սկեպտիկների հետ վիճող հայ փիլիսոփան անտեղյա՞կ էր այս և նման մտքերին։ Դավիթ Անհաղթը հանդես էր գալիս որպես անտիկ մտածողներին երկրորդող։ Նա քրիստոնյա էր՝ իրականության միասկզբունք ըմբռնման ջատագովը, ուստի գիտության և արվեստի, բանականության դատողական և երևակայական սահմանների որոշարկումը դուրս էր նրա նպատակներից։ Գիտության և արվեստի մյուս որոշիչ տարբերություններից մեկը, համաձայն Դավիթ Անհաղթի, առաջինի՝ իր օբյեկտի հանդեպ անսխալ լինելու և երկրորդի՝ ինքն իրենում անսխալ և օբյեկտի հանդեպ հարաբերականորեն սխալ լինելու մեջ։ Գիտություն և արվեստ հասկացություններն այստեղ արտահայտված են մակացութիւններն այստեղ արտահայտված են արհեստ բառերով։

*Մակացութիւն եւ ենթակայն իւր անսխալք են, որպէս երկիր եւ երկրաշափութիւն, աստեղագիտութիւն եւ աստեղք. քանզի եւ աստեղագիտութիւն անսխալ է, եւ ենթակայն նորին, այսինքն աստեղք։ Իսկ արհեստ ըստ իւրում բանին անսխալ է. իսկ ըստ ենթակային, վասն զի հոսանուտ է, թուի սխալական գոլ. որպէս հիւսնութիւն եւ փայտ՝ նորին ենթակայ։ Արդ հիւսնութիւն ըստ իւրում բանին անսխալ է. իսկ փայտն, վասն զի ապականացու է*

եւ հոսանուտ, յառնել հիւսան աթոռ կամ այլ ինչ յանկարծօրէն բեկանի եւ սխալեցուցանէ դարուեստն:<sup>47</sup>

Ո՞ւր կարող է տանել «ըստ ենթակային սխալական» լինելու տեսակետը, եթե դա տարածենք այն արվեստների վրա, «որք ոչ ունին պիտանի կատարումն ի կենցաղումս»։ Նկատի ունենք թատրոնը և թատերային երեույթները։ Ո՞րն է նրանց նյութը և օբյեկտը («ենթակայն»)։ Դավիթ Անհաղթը դրանք համարում է «ընդունայն արհեստութիւնք»<sup>48</sup>։ «Ընդունայնը», հավանաբար, այն է, որ չունի «ենթակայն»։ Իսկ ի՞նչը կարող էր համարվել պարի, մրմունջի, լարախաղացության, ձողախաղացության նյութը կամ օբյեկտը։ Մենք նկատեցինք, որ միջնադարի մտածողները թատրոնը մերժում են աշխարհի և մարդու պատկերը եղծելու համար։ Ուրեմն, թատրոնի նյութը և օբյեկտը, ինչպես բոլոր ժամանակներում, այնպես էլ միջնադարում կենդանի մարդն է՝ «զկերպարանն Աստուծոյ»։ Թատրոնի սուբյեկտը նույնպես մարդն է և այն էլ, ըստ միջնադարյան հայացքի, խեղաթյուրված տեսքով։ Հետեւաբար, թատրոնը, որպես արվեստ, բոլոր հիմքերով սխալական է՝ և «ըստ իւրումքանին», և «ըստ ենթակային»։

Արվեստը որպես մարդկային գործունեության անշահոլորտ միջնադարում անըմբոնելի է։ Միջնադարի լեզվամտածողության մեջ իսկ չկա գեղարվեստական զբաղմունքի տեսակները կամ ձևերը միավորող, ընդհանրացնող հասկացություն և միասնականացված եզր։ Արուեստ բառը նշանակել է հմտություն, իսկ հմտության արդյունքը... Դավիթ Անհաղթը գործածում է մի բառ՝ կարգ (τάξις), որը միասնականացված եզր է անտիկ մտածողների համար և կարող է թարգմանվել կազմակերպվածք, նաև ձև։ Իսկ գեղարվեստական զբաղմունքին (ոչ անկախ գործնականից ու բանականից) համե-

րաշխ է երեակայութիւն բառը։ Այսպիսով, ըստ Դավիթ Անհաղթի, կա «ունակութիւն ճանապարհորդեալ հանդերձ երեւակայութեամբ», և կա ունակություն, որ «ճանապարհորդէ». այսինքն զամենայն ինչ ըստ կարգի առնէ»<sup>49</sup>։ Հետեւաբար, «ընդունայն արհեստութիւն» ասվածը, որքան էլ արդյունք լիներ երեակայության՝ «լարախաղացութիւն», ձողախաղացութիւն», թե «ամենայն մրմունջք եւ երգք գուսանութեան», գուրս էր Արարչի սահմանած կարգից և մերժելի։ Այս էր թատրոնի մերժման փիլիսոփայական ելակետը, եթե նկատի առնենք այս համատեքստում նաև Բարսեղ Կեսարացու «Վեցօրէից» բերված հատվածը։

Թատրոնի մերժումն ուներ նաև իր կրոնա-քաղաքական արդարացումը։ Թատրոնը, ինչպիսին էլ լիներ, դասականության հուշը, թե անկման շրջանի միմուը, հեթանոսական ժառանգություն էր, ուրեմն և մերժելի «եկեղեցական-քաղաքական մաքառման» (Մ. Արեգյան) շրջանում։ Եթե եկեղեցին ու ա. Գիրքը ծառայելու էին հավատի ամրապնդմանը, և եկեղեցին լինելու էր մարդկային հաղորդակցման կենտրոնը, ո՞րն էր լինելու երկրորդ կենտրոնի դերը, եթե ոչ կարգի խախտումը։ Որոնել այստեղ ինչ-որ հետադիմական շարժում, նշանակում է չհասկանալ հայոց քաղաքական և հոգեոր պատմության տրամաբանությունը, չըմբռնել ժամանակը, բռնադատել պատմությունը, մղվել ակամա նենդափոխումների, որից չի կարողացել խուսափել լեզվին ու նյութին չտիրապեսող պրոֆեսորը։

Թատրոնը մերժող ճառերն ու խոսքերը եղել են մեր հիմնական աղբյուրը՝ որպես նեգատիվ նյութ պողիստիվ եղբակացությունների համար։ Այդ նյութը չէր կարող ամեն դեպքում ճիշտ եղբակացությունների հանգեցնել հետեւյալ պատճառով։ Մեզ հասած հայերեն առաջին գրական փաստաթուղթը թարգմանական է։ «Ճառ ընդդէմ որոց թողեալ գեկեղեցի դիմեցին ի ձիլնթացս եւ ի

թատերս»: Թարգմանվել է V դարում Հովհան Ոսկեբերանից և որոշ հասկացություններ հայացվել են՝ հարմարեցվել միջավայրին հատուկ երեսութների: Օրինակ՝ միմու բառը թարգմանվել է գուսան, որ նշանակում էր խաղարկու, պարող, լարխաղաց, աճպարար: Լեզվական համարժեքությունների ստեղծումն ամեն դեպքում հիմք չի տալիս թատերական նույն երևույթները որոնելու հայաստանում: Ոսկեբերանի ճառը սակայն իր ազդեցությունն է ունեցել: Նույն ոգով ու նման ոճով է գրված «Վասն անօրէն թատերաց դիւականաց» ճառը, որ թարգմանության տպագրություն է թողնում կամ, ինչպես ենթադրում է Ս. Պալասանյանը, «հետեւողություն է հունաց սուրբ Հարց»<sup>50</sup>: Այստեղ խոսքեր կան, որ ուղղակիորեն ակնարկում են հունական միմական թեմաները:

<...> անտի յորդորին կուսանք ի պոռնկութիւնս, ամուսնաւորք ի չնութիւնս. անտի լինին կանայք ատելի արանց, եւ արք կանանց արհամարհելի. անտի որդիք ի հարանց թշնամնին, եւ ծառայք ի տէրանց. անտի ծերոց անհամութիւն եւ երիտասարդաց վաւաշուտութիւն, անտի է պառաւանց լիտութիւն, եւ կանանց կատաղութիւն. անտի են մարդելուզութիւնք եւ կանանց կատաղութիւն. անտի են մանկասպանութիւնք եւ այլ զբկութիւնք յաղագս զարդուցն պաճուճանաց:<sup>51</sup>

Այստեղ ակնարկվում է նաև հունական թէատրոնը «ելեալ ի վեր ի դիւակ տեղիս նստին» բառերով, որ չի ապացուցվում այլ վկայություններով: Հետեւողությունն ակնհայտ է: Բնական է, իհարկե, որ հայոց միջավայրում լուրջ պատճառներ եղել են նման ճառեր թարգմանելու կամ գրելու համար, ոչ անպայման հունական միմական թատրոնը, բայց նման կամ նույն վերաբերմունքին արժանի երեսութներ: Ի դեպ, այս ճառը V դարի

փաստաթուղթ չէ և պատկանում է ոչ թե կաթողիկոս Հովհան Մանդակունուն (՝-490), այլ Հովհան Մայրավանեցուն (572-650) և, թվում է, գրված է 640 թ. Դվինի ժողովի որոշումների ազգեցությամբ<sup>52</sup>:

Աշխարհիկ զվարճալիքների ու թատերախաղերի դեմ գրված երկրորդ ճառի հեղինակն է Սիմեոն Աղձնյաց եպիսկոպոսը (VIII-IX դդ.): Այստեղ տրվում է Ոսկեբերանի անունը, բայց չկա նմանության որևէ հետք: Նման է խոսելաձևն ու տոնը, և՝ ոչ մի թեկուզ անուղղակի ակնարկ միմական ներկայացման և «ի վեր ի դիւակ տեղիս» նստելու մասին: Ճառը վերնագրված է «Վասն գինոյ խմողաց, որ արբենան, եւ վասն գուսանեաց եւ վասն պոռնիկ կանանց եւ կաքաւչաց»: Նկատենք, որ թատր և թէատրոն բառերը գործածված չեն այստեղ: Տոնը սակայն տենդագին է ու տագնապալից, ինչպես իր նախորդներինը.

Աւա՛ղ վտանկիս, որ կալաւ ահ զանց արարեալ զերախտեաւքն Քրիստոսի, որ յառաջագէտն է, եւ որպէս կատարեալ չուն ի բողանոցս եւ ի խաղս գուսանաց եւ ի ձայն դիւացն առձգին:<sup>53</sup>

Նույն տոնով է խոսում կիլիկյան հեղինակ Գրիգոր Մարաշեցին (XII դ.):

Վա՛յ ձեզ լսելիք իմ զի լուայք զձայն լիտի երգոց դիւական, եւ ընդունեցայք զբանս խարեւթեան եւ ստութեան:<sup>54</sup>

Նույնն է նրանց նախորդը՝ Մայրավանեցին.

Եւ ես լի ամենայն յանցանօք միշտ դդոյն հառաչեմ եւ սգամ. զի ի զաղրելի անօրէնութեանց ձերոց յամենայն ժամ թատերք սատանայականք ցնծան խայտալով եւ եկեղեցիք Քրիստոսի միշտ ողբան դառնապէ:<sup>55</sup>

Այս և նման խոսքերից թատրոնի պատմաբաններն այն տպավորությունն են ստացել, թե միջնադարյան մարդու կենցաղն ամբողջապես իմաստավորվել է թատրոնով, և Հայաստանում եկեղեցիներն իսկապես դատարկ են եղել, իսկ թատրոնները «յամենայն ժամ» խուռն ամբոխով լեցուն: Բայց հայոց աշխարհը ծածկված է վանքերի, եկեղեցիների ու մատուռների ավերակ ու կանգուն շինություններով, և մինչև այժմ չենք գտել թատրոնական շենքի որևէ հետք: Սա, իհարկե, հակառակն ապացուցող փաստարկ չէ: Բայց Մայրավանեցու չափազանցումներն էլ թող մեղ չմոլորեցնեն: Եկեղեցու հայրերի տագնապալից խոսքերը ոչ այնքան նրանց ժխտման պաթոսով պետք է բացատրել, որքան ոճի առանձնահատկությամբ: Այդ պաթոսին համարժեք վերաբերմունք չենք տեսնում միջնադարյան կանոնագրքերում ու դատաստանագրքերում:

Հայտնի է, որ հայ եկեղեցին հետևողական պայքար է մղել հեթանոսությունից ժառանգած երևույթների դեմ, դատապարտել է հեթանոսական կենցաղի ու աշխարհայացքի դրսերումները, որոշ ծիսային վերապրուկներ, հատկապես գուսանական ողբասացությունը: Հայտնի է, թե ինչ սուր բնույթ են ունեցել դավանաբանական վեճերը, ինչպես են դատապարտվել աղանդները, ինչ թղթեր են գրվել թոնդրակեցիների դեմ: Թատրոնի մերժումը ոչ այնքան արվեստի, որքան կենցաղի մերժումն է, կյանքի ծիսային կարգավորումը խախտող երևույթի դատապարտումը, որ, մեղ հայտնի տվյալներով, բարոյական պարսավանքներից հեռուն չի գնացել: Եթե անդամ էսքիլոսյան ժամանակների թատրոնը լիներ եկեղեցու հայրերի առջև, դարձալ մերժվելու էր: Զէր կարող պատարագային տիպի մի երևույթ, ինչպիսին ատտիկյան դրաման էր, ընդունելի լիներ քրիստոնեական պատարագի կողքին:

## ՏԱՂԱՎԱՐ ԵՎ ԽՈՐԱՆ

Միջնադարյան աշխարհիկ թատրոնը մեզ պատկերանում է շրջանակենտրոն-հրապարակային, խաղարկուները թափառաշրջիկ, խաղավայրը շուկա և փողոց: Այդպես է ըստ մատենագրական վկայությունների և ըստ կենդանի ավանդությունների: Այդպես է և Արևմուտքում, և Արևելքում: Դա շարունակվում է այնքան, քանի գեռ շփում տեղի չի ունեցել եկեղեցականի ու աշխարհիկի միջև: Եկեղեցու հայրերը ջանացել են, որ դա չլինի, իսկ երբ եղել է, փորձել են կանխել կամ սահմանափակել ու կանոնակարգել: Բայց տվյալներ ունենք, որ վկայում են կրոնական ու աշխարհիկ հանդեսների մերձությունը: Գրիգոր Մագիստրոսի «Պամպարակիայլ կացրդական տօնախմբութիւնք» խոսքը<sup>56</sup> այս առումով կարիք ունի մեկնության: Կրոնական տոները, ինչպես ցույց են տալիս նոր ժամանակներ հասած ավանդները, հայոց աշխարհում ուղեկցվել են հեթանոսություննից եկող ժողովրդական խրախճանքներով, աշխարհիկ երգ ու պարով, ժողովրդական խաղերով: Լարախաղացությունն ինքնին աշխարհիկ թատրոնի փաստ է, բայց իր սիմվոլիկայով միտում է ժողովրդական կրոնասիրության և վերածվում այնպիսի այլաբանության (երկնային ու երկրային, վեհ ու ստոր, հերոսական ու կատակերգական), որ կարելի է անվանել ժողովրդական ժորալիտե:

Նարեկացու ակնարկը՝ «առ թատերս տեսարանաց», «խառնիճաղանջ բաղմութեանց», մեզ տանում է միջնադարյան քաղաք, հեռավոր կերպով հաղորդակից դարձնում նրա թատերական-կառնավալային միջնոլորտին: Մոտենում ենք ելքոպական գրականություննից ստացած մեր տպագորություններին, բայց եվրոպական ուշ միջնադարյան կառնավալը հայաստան տեղափոխելու անցրաժեշտություն չունենք: Դա մեղ համար կողմնորոշիչ

չէ։ Կարեռը երկույթն է, որ ուրիշ տեսք է ունեցել, և Նարեկացու վկայությունը, որի հետ պետք է հաշվի նստել։

Իսկ որտե՞ղ է բեմը, որպես դրամատիկական վիճակի կամ գործողության վայր։ Խաղավայրի հնագույն տիպը՝ տիեզերքի դետերմինանտը շրջանակինտրոն հրապարակն էր, որը միջնադար հասցրեց պայմանական զոհի գաղափարը, եկեղեցու խորանարդ-գնդաձեւ («գմբեթաձեւ») տարածության մեջ (հիշենք Պլատոնի տիեզերքը)։ Այս ամենի հետ միասին անտիկ թատրոնի միստերիալ՝ պաշտամունքային-ծիսական ծագում ունեցող համակարգը հատկանշող շենքից միջնադար է հասել մի շատ էական ատրիբուտ, որի նշանակությունը հանգամանորեն բացահայտված չէ։ Դա սկենե (ԾԿՀՆ) կոչվող տաճարատիպ, խաղի միստերիալ գաղտնիքը թաքցնող կամ արարողությանը խորհուրդ տվող կամարակապ ֆրոնտոնն է՝ քրմի աղոթավայրը և Աստծո կուռքը պահպանող վրանը, որի անունը հայերեն թարգմանվել է խորան և տաղաւար։ Լեզվական այս համանշանակություններին անդրադարձել ենք առանց խորանալու խնդրի էության մեջ։

Ի՞նչ է, ուրեմն, տաղաւարը, որ առկա է և անտիկ թատրոնի շենքում, և քրիստոնեական եկեղեցում, և միջնադարյան ժողովրդական տոնախմբություններում։

Եկեղեցու ուղղանկյուն կամ քառակուսի հատակագիծը կրում է նաև բոլորակ շրջանի՝ տիեզերքի անաքսագործառնության պատկերացման գաղափարը, որը գմբեթն է։ Բայց այս դետերմինանտն անխորհուրդ է առանց Աստծո գաղափարը կամ աստվածային Բանը տաղավարող խորանի։ Շրջանի կենտրոնից դուրս է գալիս դեպի երկինք ուղղված մի գիծ և ավարտվում խաչով։ Էջմիածնի Մայր տաճարի կենտրոնում առկա է այդ ելման կետը, որտեղ, ըստ ժողովրդական ավանդության, զարկվել է Քրիստոսի ոսկե մուրճը։ Դա իջման սեղանն է, որ ունի իր նախատիպ խորհրդանիշը՝ անալիկ թատրոնի օրինատ-

րայի կենտրոնում, որպես զոհասեղան՝ թիմելի (ԹՎԱՀՀՆ)։ Քրիստոնեական տաճարում իջման սեղանը սոսկ հուշ է, հավանաբար ծիսային հին համակարգի նշանը։ Միսային նոր համակարգի համար կա խորանը։ Վարագույրն այս-տեղ հիշեցնում է նվիրապետական սահմանի գոյությունը մարմնավոր և անմարմին հոգիների միջև, առանձնացնում արարողապետի (կամ «քրմի») գաղտնի աղոթքը։ Վարագույրի բացվելով պատարագիչ քահանան նորից դառնում է աղոթքողների բազմությանն առաջնորդող նավապետ ու միջնորդ։ Սա անտիկ թատրոնի արարողական իրադրության արտաքին փոխակերպումն է։ Այստեղ էլ առաջին գերասանը (պրոտագոնիստ) քրմական զգեստով դուրս էր գալիս սկենեի կենտրոնական մուտքից (հավանաբար այնտեղ աղոթելուց հետո), իսկ ողերգության վերջին հատվածներում Աստծո բանները, որպես հանգույցը լուծող, պերիպետիային սկիզբ զնող գործող անձ, վերամբարձ մեքենայից՝ էորեմայից իջնում էր սկենե։

Այսպիսով, խորանի իմաստը քրիստոնեական ծիսակարգում դուրս է բերված զեթանոսական ծեսից և այս ծեսով իմաստավորված անտիկ թատրոնից։ Մտա՞վ արդյոք այդ գաղափարը միջնադարյան թատրոն, որպես հայելակամար բեմի կամ պորտալի նախատիպ։ Պարզվում է, որ այս Դրա լեզվական վկայությունը սկենե բառի հայերեն երկրորդ հոմանիշն է՝ տաղաւար։

Այս բառը հայ միջնադարյան մատենագրության մեջ ունի և կրոնական («տօն տաղաւարաց»), և խաղային իմաստ։ Կրոնական իմաստը, ինչպես նշում է Օրմանյանը. «վճռական կերպով հայտնի չէ»<sup>57</sup>։ Ահա երկու կարծես տարամետ սկզբունքների համատեղման նշաններից մեկը։ «Ենք տեսարանի խաղուց»։ սա բառի երկրորդ աշխարհիկ իմաստն է<sup>58</sup>։ «Ի տաղաւարս խաղալով», «Ի տաղաւարս խաղան»։ Կարգում ենք Ուկերերանի ճառերում։ Կրոնական իմաստով, մարդու մարմինը հոգու տաղափարն է, խորանը՝ աստվածային Բանի տաղափարը։

Եթե Նարեկացին ասում է «առ թատերս տեսարանաց <...> ոչ ես մոռացեալ», պետք է կարծել (եթե ելնում ենք հեղինակի միստիկական հայացքից), որ նկատի ունի աստվածային Բանի՝ լոգոսի անուղղակի, հավատի հաստատությունից դուրս գիտակցումը: Խոսքը գուցե այսպիս պետք է մեկնել և միստերիա կամ միստերիալ պահ փնտրել «առ թատերս տեսարանաց» խոսքում: Նարեկացին նկատի ունի միայն ժողովրդական-հրապարակային խա՞զը (կամ մեր իմացած լարախաղացության սիմվոլիկան), որի կրոնասիրական նշանները միջնադարում առավել ակներե են եղել, թե՝ տաղավարային տեսարանը: Թերեւ ավելորդ չէ նրա խոսքի առարկայական իմաստի մեկնությունը: Նարեկացու մեկնիչներից մեկը գրում է. «ի թատերս, որ է հանգամանք խաղաղողաց»<sup>59</sup>: Նույն բացատրությունը տրված է նաև թէատրոն բառին ուշ միջնադարյան մի ձեռագիր բառարանում<sup>60</sup>: Բոլոր տվյալներն ասում են, որ թատր բառով տրված է խաղի ու պայմանական գործողության գաղափարը, տեսարան բառով («տեղի տեսանելոյ զհանդէս»)՝ խաղափայրի, որպես նյութական հանգամանքների, ուեալ շրջանակի գաղափարը: Նարեկացին տալիս է այս երկուսի միասնական, ընդհանրացված ըմբռնումը, եթե ելնում ենք նրա աշխարհայացքից և «Ողբերգության մատյանի» կոնտեքստից, ոչ թե սոսկ մի խոսքի բառարանային բացատրությունից:

Այսուամենայնիվ, տաղաւարը պետք է փնտրենք, որպես «շենք տեսարանի խաղուց»: Նարեկացու ժամանակից մոտ երկու հարյուր տարով այս կողմ պետք է դանք: Դա նշանակություն չունի, քանի որ «ի տաղաւարս խաղան» խոսքը վկայված է V դարից:

Առիթ է եղել դիմելու XII դարի կիլիկյան հեղինակ Գրիգոր Մարաշեցու թանկ ու հայտնի մի վկայությանը, որ երկմտության տեղ չի թողնում այլեւ: Այս է միջնադարյան թատրոնն իր տաղավարով:

Նա թէ բան իցէ, կամ խորհրդոց անպատշաճոց, յետ գիշերոյն, յետ խաղուց անցանելոյ, յետ կերպարանելոյն յաչս տեսողացն՝ յետ տաղաւարին ապաքակտին դիմակքն եւ երեւի ճշմարտութիւն, ապա իւրաքանչիւր մեղքն ցուցանին:<sup>61</sup>

Միջնադարյան աշխարհիկ բեմի իմաստը ներկայացնող ու մեկնող ավելի պերճախոս փաստ դժվար թե գտնենք: Տաղաւարը ոչ միայն կուլիսն է, թատերական կերպավորման «գաղտնիքը» թաքցնողը (հանդիսատեսի համար առ այսօր խորհրդավոր ներփակություն), այլև բուն խաղավայրը, տեսիլքի հայելին, տոնավաճառային հանդեսի սայլը կամ ժամանակավոր բեմատուփը: Օրմանյանը ենթադրում է «որ իրոք տաղավարների հաստատմամբ տոնավաճառի նման հանդեսներ էին կազմակերպվում մեծ տերունիների օրերին»<sup>62</sup>: Սրանք հնագույն միստերիաները չե՞ն արդյոք, որոնցից հիշատակ է մնացել տաղաւար անվանումն իր երկակի իմաստով:

Գրիգոր Մարաշեցու խոսքը դիշերային հանդեսի մասն է, որը պետք է լիներ իսկապես «զամպարամփայլ կացրդական»: Ոչ անպայման հակառակ կրոնականին, բայց թերեւ նրանից տարբեր: Ինչո՞ւ և ինչպես: Մարդը թատերական տաղավարում բեմական ներփակ աշխարհում գործում է ոչ որպես ինքը, այլ իրեն վերագրված նշանակությամբ՝ դիմակավորված, ուղղակի կամ փոխարերական իմաստով, «դիմակաւը կեղծաւորելի», «դիմակս դիմակս կերպից կերպ», «առ երեսս բանիւք մատչելի»: Բայց «յետ խաղուցն անցանելոյ, յետ տաղաւարին» նա հայտնվում է Աստծո տեսողությանն իր ճշմարիտ պատկերով ու անսքողելի մեղքերով: Մարաշեցին դիմում է իմաստուն համեմատության: Այս է դերասանը ոչ միայն «երկակի դիմաւք», այլև երկատված հոգով, իր ինքնությունը կորցրած, շփոթված ու եղծված բնավորությամբ:

Վկայողի բարոյա-փիլիսոփայական հայացքը՝ արվեստի, որպես երկրորդված իրականության, մերժումը պարզ է և միջնադարյան մտածողությանը ներդաշնակ: Տաղաւարը եկեղեցու խորանը չէ, այլ թերևս եկեղեցուն նախորդած և եկեղեցուց գուրս մի խորան: Դա պայմանականորեն գործելու մեկ ուրիշ միջավայր է՝ երրորդ աշխարհ՝ երկնքից ու երկրից դուրս, ըստ թատրոնամերժ ճառերի՝ մի տեղ կացրդական կամ «դիւական»: Աղոթքը եկեղեցու խորանում, կամ խոստովանությունը մարդկային էության երկրորդում չէ, այլ անխաղաց զրույց Աստծո հետ և ճանապարհ գեպի վերին ճշմարտություն: Ինչպես մարմինը տաղավարում է հոգին, խորանը՝ աստվածային Բանը (այդ իմաստն ունեն նաև ձեռագիր ավետարանների խորանները), այնպես էլ թատերական տաղավարը, ըստ քրիստոնեական-աստվածաբանական հայացքի, ներփակումն է և լուսամուտը, եղծված իրականության, անմաքուր մի ապակի՝ ծուռ հայելի «գործի երևեցուցիչ դիմաց հայեցողին»: Տաղաւար և խորան բառերը եթե որոշ գեպքերում տրվում են որպես հոմանիշներ, ապա դրա հիմքը կրոնականի ու գեղարվեստականի, եկեղեցականի ու թատերականի համատեղումը կամ եղերումն է՝ կրոնականը գեղարվեստական ձեռում արտահայտելու, և գեղարվեստականը կրոնականին ծառայեցնելու իրողությունը, մի բան, որ հասկանալի ու պատճառաբանված է միջնադարյան մշակույթի ընդհանուր համակարգում, թերևս ավելի շատ ժողովրդական կրոնասիրության, քան պաշտոնական գաղափարախոսության ոլորտում: Տաղաւար բառը աշխարհիկ թատրոնի և հոգեսոր դրամայի շփման լեզվական հետքն է: Շփումը, ինչպես ճարտասանական կանոններն են վկայում, տեղի է ունեցել դպրոցական բեմբասացության մեջ, քանզի դրա առարկայական հետքերը չեն երեսում եկեղեցում: Իսկ ժողովրդական խաղահրապարակում դատեսնում ենք լարախաղացության, որպես էքսցենտրիկ

միրակլ-մորալիտեի, օրինակով: Մյուս փաստը գրքային է: Ավետարանների խորանները շատ հաճախ զարդարվել են աշխարհիկ զարդամոտիվներով, նվազածուների, կաքավիչների, դիմակավոր կամ անդիմակ գուսանների պատկերներով: Քրիստոսի և կատակերգակի թատերական զուգագրման պատմական իրողությունը, կատակերգակի, որպես քրիստոնյա նահատակվողի կերպարը, ինչպես նկատեցինք, հին հիշողությունն է: Ժողովրդական կրոնասիրությունն այդ հիշողությանը տվել է պատկերային մեկնությունն, և թվում է՝ այդ է արտահայտված ուշ միջնադարյան խորանների որոշ զարդամոտիվներում:

Այս երեսույթը (դիմում ենք կողմնակի էքսկուրսի) մեզ երեացել է առեղծվածային ու անտրամաբան: Գրապատկերային նյութի ուսումնասիրողները (Ա. Մշացականյան, Էմ. Պետրոսյան) ներկայացրել են ակներև փաստեր հեռանալու ակներևությունից, չփորձելով գտնել դրանց մեկնահիմքը: Այդ մեկնահիմքը չի երեսում նաև եվրոպական ու ուսուական նյութի ուսումնասիրություններում: Ուստի, ջանացել ենք չնկատել, կամ քննադատորն ենք ընդունել նյութը ներկայացնողների հապճեալ ու մակերեսային եղբակացությունները, ելնելով միջնադարյան գոգմատիկայից և թատրոնի ու եկեղեցու հակամարտության երեսույթից: Բայց փաստը մնում է փաստ: Ժողովրդական կրոնասիրությունը, ելնելով ինչինչ ափանդություններից կամ վկայաբանական հին զրույցների անուղղակի հիշողությամբ, համատեղել է տաղավարի ու խորանի գաղափարները և տվել դրանց պատկերային մեկնություն: Պաշտոնական աշխարհայացքի կրողները, որ թվում է, պետք է կանխեին այդ, մեծաթիվ չին և նստած չին ամեն մի գրչության կենտրոնում որպես գրաքննիչներ: Դրանք գիտնական-աստվածաբաններն ու ուսումնականներն էին՝ զբաղված իրենց սխոլաստիկայով: Իսկ ձեռագիր օրինակող գրիչ-

ներն ու ծաղկողները, նաև պատվիրատուները, կարո՞ղ էին հասու լինել պաշտոնական աշխարհայացքի նրբություններին ու խորքերին: Թատերական մոտիվներով զարդարված ձեռագրերը մեծավ մասամբ ուշ շրջանի են (XV–XVII դդ.): Քրիստոնեական դոգմատիկան այլևս այն գերը չուներ, ինչ վաղ միջնադարի դավանաբանական պայքարում: Դժվար է ասել, թե գրիչների գլխին գաղափարական հսկողություն կար ուշ միջնադարում: Տաղավարի և խորանի իմաստային և ֆունկցիոնալ տարերության, ինչպես և նմանության գիտակցումը ժամանակին եղել է: Գրիգոր Վկայասերի «Ճաշոցը» տալիս է այդ. «փոխանակ տաղաւարական խորանին՝ խորան զեկեղեցի քո շինելով»<sup>63</sup>:

Տաղաւարը միջնադարյան բեմն է և որպես առարկայական իրողություն, և մտահայեցական գաղափար: Դա պայմանական ներփակություն է և տիեզերքի դուռ, թատերական խաղավայր և աղոթքի խորան, աշխարհ և մենության խուց, դասասենյակ և վարդապետարանի գրուցարան-ճեմարան, գավիթ և սեղանատուն: Տաղաւարը մարդու և մարդկայինի շրջափակումն է տիեզերքի կամարակապ անվերջությամբ և իր նեղ սենյակում՝ մտքի ուղեղային ամփոփումով: Միջնադարում միտքը և աղոթքը չեն պատկերացվում առանց այդ առւրայի: Խոսքն արտասանվում է կամարի տակ, կամարն է երկնքի տակ, երկնքում Աստված, կամարի տակ մարդը՝ Աստծո պատկերով և Աստծուն ձգտող: Դարձյալ հիշենք Նարեկացու պատկերը: Ճգնավորի «խորհրդակիր սենեակը» խորանը կրում է երկնային լույսը, իսկ ճգնավորը կանգնած է այնտեղ աղոթամատյանը ձեռքին ու նայում է մեզ, ինչպես թատերաբեմից, ճառախոսի դիրքով: Խորանը, որպես երկնքի դուռ, տաղավարածե, և սուրբը խորանում: Հիշենք, որ նկարիչը՝ Գրիգոր Միհեցին սա նկարել է ներսես Լամբրոնացու համար: Կամարը, որպես երկնքի դուռ կայուն գետերմինանտ է և գեղանկարչու-

թյան, և գրականության մեջ: Այնտեղ դրված է մարմնի և հոգու, որպես երկու նախասկզբունքի միասնության գաղափարը: Այդ իմաստն անուղղակիորեն սահմանված է կոստանդին երգնկացու հնտևյալ ու տողերում:

Թէ դուռը կայ երկնից՝ պարզեատու մի  
Աստուծուն,  
Ի ծագել արեգական ի մեզ բացվի դուռը  
բարոյն:<sup>64</sup>

Մարդը դրված է երկնքի դռան առջե. «անխաղաց, առանց ուրուք դիմակի» (Հովհաննես երգնկացի), և տաղավարում՝ «դիմակաւք կեղծաւորելի» (Նարեկացի): «Դուանրացեք» արարողության մեջ դուռը նույնանում է խորանի հետ, Գրիգոր Վկայասերի խոսքում՝ խորանը տաղաւարի հետ, Մարաշեցու խոսքում՝ տաղաւարը թատրոնի հետ:

Որպեսզի ավելի պարզ լինի միասնության ու տարբերության այս անտինոմիան, վերագառնանք Բարսեղ Կեսարացու ճառին, ուր տրվում է տիեզերական խորանի գաղափարը՝ «խորանարդ գմբեթածեւ ըստ բանին մարդաբէին» և դրա հետ՝ երկրի, որպես Աստծո հաստատած բեմի գաղափարը՝

լայնատարած եւ երկայնածիգ մեծութեամբ, որ ունի  
ինքն զինքն ի վեր, եւ հաստատեալ կայ անշարժ  
զաւրութեամբ, որ եղ ի հաստատութեան զհիմունս  
նորա:<sup>65</sup>

Կեսարացին իրականությունը, որպես տիեզերաբանական օբյեկտ, հակադրում է նրա սուբյեկտիվորեն եղծված պատկերին՝ թատրոնին («իրք առականաց են անդ») և կոչ է անում հանդիսատեսին հեռացնել հայացքը կեղծ տեսիլքից, նայել երկնքի խորանին:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԴՐԱՄԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՍՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

### «ՅԱՂԱԳՍ ՎԵՐԾԱՆՈՒԹԵԱՆ»

Ինչի՞ց պետք էր սկսել, եթե «ի սկզբանէ էր Բանն...»։ Պետք էր վերծանել զբանն, այն է վերաճանաչել գրվածը՝ գրամման (յրօպու) ի հայտ բերել որպես գնոնն (յնախող՝ միտք, վճիռ, լինել գրամմատիկոս՝ քերական, որ նշանակում էր գրականագետ ամենալայն առումով՝ լեզվաբան, ճարտասահն, մեկնիչ։ Ալեքսանդրյան բանասերները դրանով էին զբաղված, և Դիոնիսիոս Թրակացու (մոտ. 170–90) քերականությունն այդտեղից էլ սկսում էր։

Վ դարի հայ թարգմանիչն ստեղծել է վերծանութիւն բառը, որպես իմաստային-կառուցվածքային պատճենում և համարժեք հունարեն անագնոսիս բառի (ձառ՝ վեր, յնախող՝ միտք)։ Մյուս բառն է հիպոկրիտիս (նուռարություն), որ թարգմանվել է հնիթաղատութիւն (դատ, վճիռ, ընտրություն, ելք, բեկման պահ և այլն)։ Բառի երկրորդ նշանակությունն է վիճակ, ձևացում, դրամատիկական լարում, և այստեղից է՝ հիպոկրիտես (նուռարություն)՝ դրությանը կամ խոսքին պատասխանող, դերասան։ Հին ատտիկյան թատրոնում խաղը չի գիտակցվել որպես գործողության սկզբունք, և դերասանի դիրքը հրա-

պարակում (օրինեսուրա) չի համարվել խաղ, այլ պատասխան, վեճ, շեղում։ Որոշակի է շփման եզրը հոեսուրության հետ, ուստի և հելլենիստ քերականներն ընդունելու էին այդ որպես դատողություն՝ անագնոսիսի դրսերումը, թերևս ամենաչական առումով, և հայ հունարան քերականներն էլ թարգմանելու էին այդ բառը համաձայն տվյալ նշանակության՝ ենթադատութիւն։ Բայց հունարանությունն արդյո՞ք միայն լեզվական ոլորտում էր։ Հակված ենք ընդունելու այդ որպես մտքի ու մշակույթի շարժում, թիկունքում հելլենիզմը, և այդ համատեքսոտում էլ կարդում ենք Դիոնիսիոս Թրակացու երկն իր թարգմանությամբ ու մեկնություններով հանդերձ։ Վերծանական քերթութիւնն, այսպիսով, ենթադրում է իր արտալեզվական ոլորտը։ Դա արտահայտված է Թրակացու հետեւյալ կանոնում։

Եւ վերծանելի է ըստ ենթադատութեան, ըստ առոգանութեան, ըստ տրոհութեան, քանզի ենթադատութեանէն զարութիւնն, իսկ առոգանութեանէն զարուեսն, իսկ տրոհութեանէն զպարունակ միտսն տեսանեմք<sup>1</sup>։

Զարութիւն նշանակում է «կարողութիւն հոգւոյ եւ զգայութեանց եւ մտաւոր տեսութիւն, դիտաւորութիւն»<sup>2</sup>։ Համապատասխանում է, ըստ հետագա բացատրությունների, հունարեն ծննամուտ բառին։ Այստեղ է, որ վերծանության արվեստը մոտեցվում է դերասանականին, գրեթե նույնացվում։ Բայց «հոգւոյ և զգայութեանց» կարողությունը բնական տվյալ է, ոչ ստացական հմտություն՝ արուեստ (τέχνη), ըստ անտիկ և հելլենիստական, նաև վաղ միջնադարյան, ըմբոնման։ Իսկ առոգանութիւն ատվածը, համաձայն Թրակացու և նրա մեկնիչների, խոսքի տոնային կազմակերպվածքն է։

<...> բարեհարմարութիւն ձայնի ի վերծանութեան բառից եւ բանից եւս եւ վանկից այլ լեզուն՝ ըստ ելեւէջից շեշտելոյ եւ բթելոյ, եւ ըստ եղանակի առաջիկայ իմաստից:

Սա բացարձակորեն քերականության ոլորտն է, հնչման մեջ՝ ոիթմամեղեղայնությունը համաձայն շարահյուսական կառուցվածքի: «Հոգւոյ եւ զգայութեանց» կարողությունն այս ոլորտից դուրս է: Դա տրամադրությունն է ու տոնը՝ համաձայն արտաքին նյութի ու նպատակի, այն է վերաբարդության առարկայի ու վերաբարդողի (ննթաղատող) տրամադրվածության: Հարցը մոտենում է գրական տեսակին ու ոճին էսթետիկական առումով:

Ողբերգութիւն դիւցազնաբար վերծանեսցուք, իսկ կատակերգութիւն աշխարհաւրիչն: <sup>3</sup>

Սա ընդհանուր կանոն է, որ ենթադրում է ոչ այնքան գրական տեսակը կամ ժանրը, որքան արտաքին եղանակն ու ոճը, ըստ վեհի ու ստորի անտիկ ըմբռնման: Այս կանոնը հետագայում ենթարկվել է տարբեր բացարությունների ու մեկնությունների, որոնց կանդրադառնանք: Խնդիրն այն է, թե ինչ տեղ է ունեցել դերասանի արվեստը ուշ հելլենիստական և վաղ միջնադարյան քերականական դպրոցում, և ինչ փոխակերպման է ենթարկվել անտիկ ողբերգությունը, թէատրոնից ու օրինականից անցնելով փակ սրահ և բեմ: Այս ընթացքը դիտելու հնարավորությունը չունենք, բայց ունենք պատմական իրողությունն ապացուցող վկայություն ուշ հելլենիզմի շրջանից: Դա թեոն Ալեքսանդրացու (լ դ.) «Նախակրթությունների» 13-րդ գլուխն է, որ հունարեն բնագրում չկա, կորել է, կամ հանվել է հետագայում, և պահպանված է միայն V դարի հայերեն

թարգմանությամբ: Թեոն Ալեքսանդրացին թրակացուն հաջորդող հեղինակ է և նրա մեկնիչը չէ: Սա կարեւր հանգամանք է: «Յաղագս վերծանութեան» (περὶ ἀναγνώσεος) ասելով, նա ուղղակիորեն հասկանում է դերասանի արվեստ: Կարելի էր մտածել, թե Հիպոկրիսիսը, որպես թէատրոնից եկող հասկացություն, սոսկ լեզվական փաստ է թրակացու քերականության մեջ ու նրա մեկնություններում, եթե չլիներ դրա առարկայական հիմքը վկայող այս 13-րդ գլուխը, որպես եղբափակում և ավարտակետ: Հելլենիստ ճարտասանն այստեղ քերականությունն ու ուսումնական ընթերցումը հանգեցնում է անձի գեղարվեստական ինքնաստեղծմանը և համարում է այդ «կարի յառաջադրյան», քան զամենայն», այն է՝ ոչ օժանդակ միջոց կամ հնար, այլ նպատակ: Թեոն Ալեքսանդրացին ուղղակիորեն ճարտասանական լսարան է բերում իր ժամանակի թատերական գեղագիտությունը:

Եւ կարի յառաջադրյան, քան զամենայն ընդելացուցանելի է զնա վայելչականաւն ասացելոց ենթադրութեանցն եւ ըստ ձայնին, եւ ըստ մարմնոյն գեղեցկածեւ շարժման. քանզի սա է՝ որ բանին զներգեղեցկութիւն ցուցանէ. եւ նուազաւորագոյն ենթադրեսցուք յասողին զնսիր եւ զարդանաւորութիւն, եւ զհասակն, եւ զդիպուածն եւ զտեղին՝ յորում ասի, եւ զիրսն յաղագս որոյ բանք, որպէս զի կարողութիւն իցէ յաւէտ յաղագս փոխանակ մերոց իսկ անձանց զայն իբրու ճշմարտապէս լինել կարծեմք...<sup>4</sup>

Սա նույն շրջանի թարգմանություն է, ինչ թրակացու քերականությունը: Հետեւելով վերջինիս տերմինաբանությանը, կարծում ենք, որ ենթադրութիւն բառը սիսալ ընթերցման արդյունք է. պետք է լիներ ենթատութիւն, եթե նորութիւն -ի համարժեքն է: Հունարեն

բնագիրը չկա, չենք կարող պնդել։ Տրամաբանության հետեւելով, կարող ենք կարծել, որ զրչի շփոթմունքը գալիս է ենթադրեսցուք ձեից, որ նշանակում է կացուցանել, հաստատել, «ի ներքոյ դնել նախ ինչ մի որպէս հիմն բանից և իրաց»<sup>5</sup>։ Հնարավոր է, որ բնագրում լիներ նույնական ձեր (համապատասխան մեր երկրորդ ընդգծման)։ Թվում է՝ երկու բառ է գործածված այստեղ՝ ենթադատութիւն և ենթադրութիւն նույնական հունաբանության մեջ չկողմնորոշվող գրիչը նույնացրել է ըստ իր իմացածի։ Բնագիրը մեզ հուշում է, որ առաջին բառը կատարմանն է վերաբերում, երկրորդը՝ կատարողի ներքին պատկերացմանը։

Բացառիկ գրական փաստաթուղթ է սա, հեռահար լապտեր, որի լույսին դեռ կհանդիպենք։ Առայժմ նկատենք, որ ուշ հելենիզմի շրջանի դերասանական արվեստը վկայող ավելի պերճախոս փաստ հայտնի չէ գրականության մեջ, և ի՞նչ է հայտնի, գրեթե ոչինչ։ Հետդասական շրջանի իրապաշտական հայացքն է խոսում այստեղ և միմեսիսի նոր ու նրբացված մի ըմբռնում։ Խոսքի իմաստը՝ «ըստ ձայնին եւ ըստ մարմնոյն գեղեցկածե շարժման», և ըստ ներքին կշռի («յասողին զնսիր») կամ հիմքի, ապա՝ ներկայացվող անձի բնագործությունը (արժանաւորութիւն՝ արիստոտելյան չթօչ-ի նոր համարժեքը) ըստ իրադրության ու միջավայրի՝ «զդիպուածն և զտեղին»։ Առավել քան ուշագրավ է բացակա պարագաների գիտակցումը։ «զիրսն յաղագս որոյ բանք»։ Սա բեմական արվեստի ամենանուրբ ու խոր կետն է։ Խոսքից դուրս և խոսքի պատճառ հանդիսացող պայման՝ ենթադրելի հոգեկան բեռ՝ նսիր, ինչպես հետագայում է բացատրվել, «խնդիր ճարտասամական՝ որոշեալ պարագայիւք, ուր դրութիւն է ամորոշ առանց պարագայից»<sup>6</sup>։ Սա նշանակում է երեակայիցող վիճակ, կենդանի պայմանականություն, իսկապես բեմական խաղ։ Եվ դա պատկերացման է առարկայութեան, կոնկրետ կամ կարդացածն է պատմության մեջ անհայտ անուն, թվում է, հեռու չէ Արտաշատում ելույթ ունեցած Յասոն Տրալիանոսի ժամանակից, բայց այլ կերպ է երեսում՝ ծայրահեղ ճշմարտանման։

կան նախատիպի։ «փոխանակ մերոց իսկ անձանց զայն իբրու ճշմարտապէս լինել ճանաչեմք»։

Սա դասականությունը չէ, այլ իր ժամանակի նորագույնը էսթետիկական առումով և անկումայինը՝ դրամայի բարոյա-հասարակական գերի առումով։ Դրաման փոքր տեղ է ունեցել կամ բնակ տեղ չի ունեցել ուշ հելենիստական թէտրոնում, անցել է պալատական սրահներ (ինչպես եվրիպիդեսի «Բաքոսուհիներն» Արտաշատում, 53 թ. մ.թ.ա.)<sup>7</sup>, հետագայում՝ ուսումնական միջավայր։ Հայտնի են հռոմեական տիրապետության շրջանում կառուցված բաց թատրոնները, հատկապես մերձարևելքում (Անտիոք, Պերգամոն, Պալմիրա, Ապամեա, Սիրիոս, Բոսրա, Ջեբել և այլն), բայց ատտիկայան ավանդությունը տեղ չուներ այդտեղ։ Ատտիկիզմն ավանդում էր որպես գրական շարժում, ճառի ու պատմության կողքին, և նրա տեղը փակ սրահն էր։ Բնականաբար փոխվել է ներկայացման ոճը. խաղակումը (դեյկելոն) հանդել է հոգեբանական ճշմարտության, ավելորդ են դարձել պարերգն (χօρօց) ու դիմակը։ Դա երեսում է թեռն Աւեքսանդրացու բերած օրինակում։ Նա խոսում է Պովլոս անունով դերասանի մասին, որին ինքը չի տեսել, լսածը կամ կարդացածն է պատմում՝ «ասեն զնա», և դատում է ուշ հելենիզմի շրջանի թատերական գեղագիտության ու ճաշակի դիրքերից։ Այստեղ դասականության հետքն իսկ չի երեսում։ Պովլոսը, թատրոնի պատմության մեջ անհայտ անուն, թվում է, հեռու չէ Արտաշատում ելույթ ունեցած Յասոն Տրալիանոսի ժամանակից, բայց այլ կերպ է երեսում՝ ծայրահեղ ճշմարտանման։

<...> արդ զՊովլոս զողբերգութեան ենթադրողն (= ենթադրատողն) այնպէս քաջ արտաքերել, զորոց ի ձեռն առնոյր զդէմսն, մինչ զի ասեն զնա, ճշմարտապէս արտասուեալ ենթադրելով զոդականս։<sup>8</sup>

Հոգերանական նատուրալիզմը, ինչպես նկատում ենք, նոր բան չէ՝ հին է և արդյունքն է ատտիկյան դասականության անկման։ Դերասանն առանց դիմակի է այստեղ, դեմքն առնում է ափերի մեջ և արցունք թափում։ Դասական ժամանակներում այդպես չեն խաղացել. Հիպոկրիտեսը դիմակ է կրել ու քրմական զգեստ, ի՞նչ արցունք... Մեր իննորի տեսակետից էական է այն, որ այս օրինակը բերվում է ճարտասանական ձեռնարկում։ Դժվար է իմանալ՝ սա պարզ մի համեմատակա՞ն է ընդամենը, թե՞ թատերական արվեստն իր բոլոր էական հատկանիշներով անցել էր ուսումնական սրահ, և այստեղից է սկսվում դպրոցական դրամայի պատմությունը։ Հանդիսարանն ու հասարակական միջավայրն իհարկե բացառվում են այստեղ, բայց դերասանի արվեստը, որպես չափանիշ վերծանական քերթութեան, ակնհայտ է այս օրինակում։

Եթե Թեոն Ալեքսանդրացու «Նախակրթությունները» կիրառելի է եղել վաղ միջնադարյան դպրոցում, և նրա եզրափակիչ գլուխը մեզ հայտնի է V դարի հայերեն թարգմանությամբ, պարզ է մեր եզրակացությունը։ Հայոց վաղ միջնադարյան ուսումնական միջավայրում տեղյակ էին հելլենիստական թատերական ավանդությանը, թեկուզ և գրքային ճանապարհով։ Դասական շրջանից ավանդված տեքստերով (դրանց շարքում նաև դրաման) հունարեն են սովորել Աթենքում, Ալեքսանդրիայում, Կոստանդնուպոլսում, նաև մեզանում, սկսած Մաշտոցի ժամանակից։ Դասական հունարենի այլ աղբյուր չկար։ Եվ մինչ կթարգմանվեր Թրակացու քերականությունն ու հայերենը կհարմարեցվեր դրան, ընթերցվել են հունարեն տեքստերն «ըստ ձայնին եւ մարմնոյն գեղեցկաձեւ շարժման»։ Հարկ է նկատել, որ թատերայնությունը նպատակ չի եղել այստեղ, այլ միջոց։ Վերծանական կանոնում նկատի չի առնված դրամատիկականի և էպիկականի, որպես գրական սեռե-

րի, տարբերությունը՝ այն, ինչ հստակ է Արիստոտելի «Պետիկայում»։ Դրամայի հետ միասին հոետորական վերծանության նյութ է ծառայել նաև էպիկան՝ հոմերոսյան շարքը։ Հետեաբար՝ խոսքն այստեղ ընկալվել է ոչ որպես ընթացք, այլ ավարտված որակ։ Թեոնի տեքստի կորած մասում կա մի բառ, որ Հայերեն թարգմանված է առասպելաբանականք և բացատրված է այսպես. «յաղագս դիւցազանց եւ աստուածոց առասպելաբանեմք, որպէս են կտրածք այս Ասկլեպիադայցն ողբերգուածոցն»<sup>9</sup>։ Կարծում ենք՝ խոսքն այստեղ Ասկլեպիադես Միրլեացու (մոտ. 100 թ. մ.թ.ա.) մասին է՝ Դիոնիսիոս Թրակացու այն աշակերտի, որ զբաղվել է հոմերոսյան թեմաների ճարտասանական վերաշարադրանքով։ Ողբերգուածք բառն այստեղ, դժվար է սաել, արդյո՞ք տրաշաճիա-ի թարգմանությունն է, գուցե՛ թրηνածիա-ի (թրῆνος – ողբ, ածի – երդ)։ Ամենահավանականը՝ տրաշաճուուիա։ Սա դասական ողբերգությունների ճարտասանական վերաշարադրանքն է՝ վերածումը մենախոսության, որ ընդունված է եղել ուշ հելլենիզմի շրջանում և շարունակվել է հետաքայում իտալական հումանիստական դպրոցներում և գերմանական համալսարաններում։ Թեոն Ալեքսանդրացին և հետագայում Դիոնիսիոս Թրակացու հույնութական մեկնիչները մեզ բանալի են տալիս պարզելու ուշ շրջանում ի հայտ եկած որոշ երկույթներ։ Առայժմ պետք է նկատենք, որ քրիստոնեությունը պատրաստ էր գտել իր կրթական հողը, որ հելլենիստական դպրոցն էր գասական գիտություններով ու գրականությամբ, նաև՝ դրամայով։ Դրամատուրգիկական երկերն ընթերցվել են թիատրոնից դուրս, և ստեղծվել է տեքստի վերաբարության մի եղանակ, որ դժվար է սաել, ինչ չափով է անդրադարձրել ատտիկյան օրինական, թերևս այնքանով, որքանով հուշում է տեքստի արտաքին կազմակերպվածքը։ Քերականները չեն տեսել կամ, եթե գիտեն էլ, շրջանցում են դրամայի

տեսարանակարգային հիմքը (ծվուց՝ այն, ինչը, համաձայն Արիստոտելի, «նվազագույնս է հատուկ բանաստեղծությանը (ποίησις)»<sup>10</sup>: Սա թէատրոնին է պատկանում և քերականության սահմանում չէ: Քերականները թէատրոնից չէին դալիս և չէին էլ փնտրում այն: Նրանք ուսումնասիրում էին անտիկ դրաման որպես դրականություն, համաձայն իրենց խնդիրների՝ տառից ու վանկից մինչև իմաստ՝ «մտաւոր տեսութիւն» և արտաքին վերաբերություն: Սա ճարտասանության ոլորտն է, ուր թատերայնություն էլ կա, բայց նպատակը ոչ այնքան գեղագիտական, որքան բարոյագիտական է՝ «զյաջողակ խրատուցն կարգաւորութիւնս յարմարական»<sup>11</sup>:

Վաղ քրիստոնեական վարդապետարանում մշակվել է երկակի վերաբերմունք անտիկ դրամայի հանդեպ: Այդ լույսով ենք մոտենալու դրամայի փոխակերպման և թատրոնի մերժման խնդրին: Երկակի վերաբերմունքն առավել քան հստակ է IV դարի հռետորի՝ Ափթոնիոսի «Նախակըթություններում», որ հայերեն է թարգմանվել «Գիրք պիտոյից» վերնագրով: Քրիստոնյա հեղինակն ընդունել է անտիկ դրամայի լեզուն և պոետական արժեքը՝ «արդարեւ կարճառութեան չափովքն, եւ յարմարական ասացուածովքն», և՝ ոչ այն, ինչ «ի սկզբանէ մինչեւ ի ծայր ստութեամբ էր զանգեալ, եւ ամենեւին կախարդական պատրանօք»: Այսպես էլ երկակի է վերաբերմունքը Եվլիպիդեսի հանդեպ. մի դեպքում՝ «կորովագոյն իմն եւ գեղեցկայարմար», եթե արվեստին է վերաբերում խոսքը, մյուս դեպքում՝ «Եւրիպիդեայս ասացեալ եղեւ ոչնչաբանութիւն եւ ինքն ըստ ինքեան ստութեամբ լի...»<sup>12</sup>: Հետաքրքիր է և այսօր էլ ուսանելի, որ չեն շփոթվում արվեստայինն ու արտաարվեստայինը, արտահայտչական համակարգն ու վերարտադրության նյութը: Տեսարանակարգը չի երեռմ և չի կարող երևալ. թէատրոնն, իր դասական տեսքով, հաղիվ գրքա-

յին հիշողություն էր IV դարում: Հեղինակի ակնարկը՝ «գացէ ոք հրաշալի ողբերգականացն դաս», վերաբերում է շրջագայող խմբերին՝ սինոդուներին (σύνοδος), որոնք շատ էին առաջապորասիական ու մերձարեկլյան երկրներում: Սա ատտիկյան օրինեսարիկայի հեռավոր հուշն է կամ վերապրուկը, որ ունեցել է իր գերը քերականական ուսման հետեւղների համար: Այն, ինչ ակնարկում է «Պիտոյից գիրքը», ներկայացման դասական տիպը չէ, չի ենթադրում տեսարան, հիշեցնում է մելոդեկլամացիս:

<...> Նոքա մեծավերջական չափովքն զհնոցն երգելով պատմութիւնս, այնպիսի իմն ըստ նոցաքաջարութեանցն զուգահաւասար և զիւրեանցն ցուցին իմաստութիւնս, մինչ զի խառնելով ևս զքաղցր նուագերգութիւնս յարմարական, որով սփոփեալ զբնաւ վշտացեալ սգաւորացն միսիթարելով անձինս:<sup>13</sup>

Չունենք որևէ տվյալ, որ միտք տար փետրելու անտիկ թատրոնը III–IV դարերում: Բայց որոշակի է նրա գրական անդրադարձը ուսումնական սրահում: Եղել են, իհարկե, դրամա գրելու փորձեր. ընդօրինակվել է դրամայի արտաքին կերպը և չի գիտակցվել ներքին ձևը, չի տեսնվել տարբերությունը փիլիսոփայական տրամախոսության և դրամայի: Ընդօրինակվել է Պլատոնի «Խնջույքի» սիեմման, բայց նկատի չի առնվել սոկրատյան գիալորդի դրամատիզմը: Բացառվել է հոգեկան լարումը, և այլ մեկնություն է տրվել ճակատագրի գաղափարին: Մեթոդիոսի «Խնջույքում», օրինակ, հելլենական էրոսին փոխարինում է կուսության գաղափարը, և երկիխոսությունն ավարտվում է հանդիսավոր օրհներգությամբ ի փառաբանումն Քրիստոսի և եկեղեցու խորհրդանշական կապի: Փորձեր են եղել ընդօրինակելու Եվրիպիդեսին:

Ապոլինար Լառդիկեցին, ինչպես հայտնի է, գրել է ողբերգություններ դասական տիպով և քրիստոնեական բովանդակությամբ։ Այս փորձը, որ հետագայում կոչել են քրիստոնեական կլասիցիզմ, հետևորդներ չի գտել և մոռացվել է։ Զէր էլ կարող շարունակվել արտաքին ընդօրինակումը պատմականորեն հեռացած մի երկույթի։

Այսպիսով, դրամայի ճարտասանական մեկնությունը, հիպոկրիտիս և տրագոդոպոյիա անուններով, արմատավորվել է կրթական միջավայրում, ստեղծելով յուրահատուկ մի թատրոն՝ դրամատուրգիական խոսքի կամերային վերարտադրություն հասարակական ունկնդրության շրջաններից դուրս։ Եթե Հայ միջնադարյան բառապաշտով խոսենք, դա անվանելու ենք առապելափարժութիւն կամ, ինչպես հետագա հեղինակները՝ բեմբասացութիւն։ Սա ուշ հելլենիստական ավանդություն է, որ անցնում է քրիստոնեական կրթությանը, արմատավորվում վաղ միջնադարյան հունական ճեմարաններում ու վարդապետարաններում։

Քրիստոնյա վարդապետները պատրաստի գտան  
ալեքսանդրյան հոետորական դպրոցը: Էսքիլոսի, Սո-  
ֆոլեսի, Եվրիպիդեսի ու Արիստոփանի, փոքր-ինչ ուշ  
նաև Մենանդրոսի դրամատիկական երկերի մեկնու-  
թյուն-ընթերցանությունն իր մշակված սկզբունքներով  
մտավ քրիստոնեական ճեմարան: Բայց ուսումնական  
ճարտասաննությունը չէր սահմանափակվում միայն դրա-  
մայով: Նախապատվություն է տրվել Հոմերոսին ու  
Հեսիոդոսին, Եղովազոսի առակներին ու Գիդակտիկ գրա-  
կանությանը: Տրամախոսական ընթերցանությունը,  
որպես ուսուցողական եղանակ, գալիս էր ոչ միայն  
դրամայից, այլև փիլիսոփայական գրականությունից,  
մասնավորապես Պլատոնից: Ճեմարանը ոչ ձեւային, այլ  
իմաստային տարբերություն է դրել էպոսի և դրամայի,  
փիլիսոփայական տրամախոսության և դրամատուրգիա-

Կան տրամախոսության միջև: Ուսումնական լսարանում երկու դեմքով խոսելը սոսկ միջոց է եղել, բարյագաղաքարական և տեսական սկզբունքների համեմատության ու հակադրության մատչելի վիճակ ինչպես գրավոր, այնպես էլ բանափոր մեկնություններում: Ճեմարանականները հանդես են եկել պատմա-առասպելական դեմքերի ու հերոսների անունից (ըստ որոշ ենթադրությունների՝ պատմական զգեստով), վկայաբերելով անգիր հատվածներ ողբերգություններից ու ստեղծաբանելով (իմպրովիզացիա) առաջադրված թեմաներով: Հին հեղինակների ու բնագրերի նման ուսումնասիրությունը վերածվել է զրույց-բանավեճերի, զրուցարական դատողությունների, ուր դեր ուներ նաև գեղարվեստական երևակայությունը: Դերասանի արվեստը, որպես համեմատական, չի շեշտվում ճարտասանական ձեռնարկներում (Հերմոգենես, Ափթոնիոս), և թեոնի երկի 13-րդ դլուխը ներկայանում է եղակի ու կարծես մեկուսացած:

Բյուզանդական մշակույթի և գրականության վաղ շրջանին վերաբերող ուսումնասիրություններում կարծիք կա, որ ճարտասանական հիպոկրիսիալ ենթադրել է խաղային-հուզական պահեր, և այստեղից մի քայլ էր մնում մինչև եկեղեցական թատերականացված պերճախոսությունը։ Հովհան Ոսկեբերանի ճառերի տեսնդագին ոճը, ցուցադրական լարվածությունը ուսումնասիրողները կապում են Անտիոքի ճարտասանական դպրոցի թատերական դաստիարակության հետ։ Դա ուշ հելլենիզմի ավանդությունն էր՝ կանոնացված Թրակացու «Քերականության» հույն-բյուզանդական մեկնություններում։ Դրանց հեղինակները՝ Մելիամպուս, Դիոմեդես, Հելիոդորոս, Մարկիանոս, Բյուզանդացի և ուրիշներ, Թեոփանի հաջորդներն են՝ գրականության ու թատրոնի պատմության մեջ գրեթե չըրջանառվող անուններ։

Մելամպողոսը (II դ.) և Դիոմեդեսը Հիպոկրիսիսը  
բացատրում են միմησις (միմեսիս – նմանողություն, վեր-

արտադրություն) բառով: Իսկ Հելլիոդորոսն ասում է:

<...> պետք է կատակերգություն ներկայացնողը քաղցրաբարո եւ զվարթ դեմքով արտասանի. կամ ըստ իրականի նմանողության, որպեսզի, եթե խոսքը պատկանում է ծերունու, նմանեցնի (ձայնը) ծերունու ձայնի, եթե կոչ՝ նմանեցնի կանացի ձայնի:  
<...> ուրեմն՝ նմանվողը սրամտորեն, հրճվանքով ու ծիծաղով կամ կենցաղայնորեն (բարություն) ըստ կյանքի նմանողության, ըստ կերպավորվող դեմքի եւ վերաբարդրվող հարաբերությունների:<sup>14</sup>

Ոճ, գեմք, փոխհարաբերություն. պարզ նշմարվում է հելլենիստական կատակերգությունը: Պակասում է միայն Մենանդրոսի անունը, որ տրված է բնագրի ուրիշ հատվածներում այլ առիթով:

Բյուզանդացին (մոտ. IV դ.) բարություն բացարում է կարծես ավելի կոռնկրետ և գեմքերն ու փոխհարաբերությունները հանգեցնում է տիպերի համեմատության:

Երբ, ուրեմն, յուրաքանչյուրին ուզում ենք նմանվել, առաքյալին ներկայացնելիս խոսում ենք քննուչ ու պայծառ ձայնով, քանզի «երանելագույն առաջյալը բարիքն արհամարհելով, հետեւեց Քրիստոսին», իսկ Հուլիանոսին ներկայացնելիս դաժան եւ սուր ձայն ենք արձակում, քանզի «թշվառագույն Հուլիանոսն ուրացավ Քրիստոսին հանուն վաղանցուկ վայելքների»:<sup>15</sup>

Իրականությունն ըստ դիպվածի, հանգամանքների ու բնափորությունների վերաբարդելու պահանջը հանգում է տիպականացման ու հակադրության մի կանոնի, որ արդեն հելլենիստական չէ: Բնափորությունը վերածվում է միագույն դիմակի, և իրականությունը չեղոքացվում է

բարոյա-գաղափարական ծրագրով: Բյուզանդացու մեկնության չակերտներում տրվող խոսքերը թերեւ առնված են որևէ տրագոդիոպոյիայից կամ բարոյախոսական առակավոր բանից, ուր Հուլիանոսը հանդես է գալիս բանավեճով քրիստոնյա քարոզչի կամ առաքյալի հետ: Անտարակուսելի է, որ ճարտասանական դպրոցն ստեղծել է հոգեոր գրամայի մի տեսակ (կամ տեսակներ), գրամատիկական վկայաբանություն, գուցե արկմտաեկրոպական մորալիտեի (բարոյաբանություն) նախատիպը կամ եկեղեցա-դպրոցական դրամա:

Բյուզանդական գրականության մեջ գրաման որպես գրական տեսակ իշարկե փոքր կշիռ ունի: Նրա ձայնը հազիկ է լսվում: Ի՞նչ անհրաժեշտությամբ պետք է քրիստոնյա հեղինակները դիմեին դրամատուրգիական փորձերի, և ինչու պետք է կրկնվեր անտիկ դրաման, եթե չկար անտիկ թատրոնը, թատրոնական կազմակերպությունը, չկար հատակ պատկերացում նրա բեմադրական համակարգի կամ արիստոտելյան օպտիկի տեսարանակարգի մասին: Լաողիկեցին և գրական նույն միջավայրին պատկանող, այսօր մեզ անհայտ հեղինակները լավագույն դեպքում պետք է նկատի ունենային դպրոցական բեմբասացությունը, որ միակ ապաստանն էր անտիկ դրամայի խամրած ձևերի:

Պարզված է, որ մի շրջան (V դ.) հոգեոր ճեմարաններում արգելվել է բարձրածայն ընթերցանությունը: Հելլենիզմի շրջանից ավանդված հիպոկրիտիսը բնականորեն մերժվել է: Մերժվել է այն արվեստը, որին հաղորդակցվել էին Բարսեղ Կեսարացին, Հովհան Ռոկեբերանը, Գրիգոր Նազիանցացին: Բնական է, որ Էլիաս Արիստիդեսից (129–189) եկող հակաթատրոնական ճառելը, որոնց քրիստոնեական ուղղվածություն էին տվել Տերտուլիանոսն ու Կիպրիանոսը, դառնալու էին ավելի կրքոտ: Դրանք հիպոդրոմների և կրկեսային-միմական խաղերի դեմ էին, ոչ թե դպրոցի: Դպրոցն էլ ուներ իր

առաքելությունը. պետք է հետեւ վանական կենցաղին, ազատվեր հեթանոս ժառանգության այս գեղքում արտաքին նշաններից: Լուությունը, որպես քրիստոնեական բարձրագույն առաքինություններից մեկը, թվում է մտնելու էր ճեմարան: Բանավոր մեկնությունները դառնում են գրավոր, բեմական զրույց-բանավեճերը՝ գրավոր շարադրություններ: Մեզ հայտնի հոետորական արվեստի դասագիրքը՝ «Պիտոյից գիրքը» ոչ միայն և ոչ այնքան արտասանության տեսություն է, որքան պոետիկա՝ ճառ, ներքող, պատմություն շարադրելու կանոնիկոն: Այս, բայց հելլենիստական հիպոկրիսի հետքերն այնտեղ կան<sup>16</sup>, և դրանց կհանդիպենք: Ուրեմն, պետք է ընդունենք, որ հիպոկրիսի տեսությունը, թեոն Ալեքսանդրացուց մինչև Թրակացու քրիստոնյա մեկնիչները, վերաբերում է հիմնականում բյուզանդական դպրոցների վաղ շրջանին: Տրամաբանական է դառնում թեոնի երկի «Յաղագս վերծանութեան և վերծանման» հատվածի բացակայությունը մեզ հայտնի հունարեն բնագրում: Պովլոս դերասանի միմեսիմն ու հիպոկրիսիսը վանական ճեմարանում, թվում է, ոչ մեկին հարկավոր չէին: Բայց վկայությունները երբեմն այլ բան են ասում:

Ճարտասանական հիպոկրիսիսի արգելմանը կամ չտարածվելուն կարող էր նպաստել նաև պատկերամարտությունը, որ սրվեց հատկապես VIII դարում: Դժվար է ենթադրել, թե ինչ չափով կարող էր պատկերի ու նախատիպի փոխարարելության խնդիրը, որ բուռն վեճերի առարկա էր, տարածվել դպրոցական բեմբասացության վրա: Շատ բան չգիտենք և ենում ենք իրերի պատմական տրամաբանությունից, թեպետ լինում են նաև տրամաբանությանը հակառակ իրողություններ: Եթե թեոնի և Թրակացու երկերի հայերեն թարգմանությունները, ինչպես Մանաղյանն է գրում, պատկանում են V դարի երկրորդ կեսին<sup>17</sup>, հիմք ունենք կարծելու, որ հիպոկրիսիսը հայ կրթական միջավայր է թափանցել նախքան հունա-

ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՅ ՄԻԶՆԱԴԱՐՅԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ 85

կան դպրոցում ընդհատվելը: Թեոնի երկի թարգմանական օրինակը, որից ելնում ենք, հավանաբար ավելի հին է, և դուցե կիրառվել է իր մեզ հայտնի վիճակով:

## ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՅ ՎԱՂ ՄԻԶՆԱԴԱՐՅԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Նայելով թեոնի երկի հունարեն բնագրում բացակայող և հայերենում առկա հատվածին, 13-րդ պարագրաֆին, պետք է մտածենք, որ հայ թարգմանիչները դորձ են ունեցել ավելի վաղ օրինակի հետ: Հիպոկրիսիսն արդելող որոշումը (եթե եղել է այդպիսին) կարող էր Հայաստան չհասնել: Բայց դժվար է ասել, թե ճարտասանության արվեստը մեզանում բացարձակորեն նույն դերն է ունեցել և նույն եղանակներով է կիրառվել, ինչ հունական կրթության միջավայրում: Պարզ է, որ ազգային կրթությունն սկիզբ է առել գրերի գյուտով ու թարգմանություններով, և հելլենիստական ճարտասանությունը դրվել է բոլորովին նոր գործնական հողի վրա: Թրակացու «Քերականության» թարգմանությունն ու վաղ մեկնությունները բավական նյութ են տալիս մեր կոահյումներին: Բայց թերթենք «Պիտոյից գրքի» վերջին՝ հավելվածի բնույթ ունեցող գլուխը՝ «Մովսէսի Քերթողի արարողի Պիտոյիցս տառի խրատարամութիւն յորդորական առ Թէոդորոս ոմն աշակերտ. ներկրթիլ քաջ ուշիմն վարժիւք յիմաստ ճարտասանական արհեստիս»: Թարգմանական է սա, թե ինքնուրույն, կարեոր չէ: Կարեորը լեզվական ինքնատիպությունն է և բառապաշտարը, ուր կարծես նշմարվում է ճեմարանական «թատրոնի» պատկերը:

Աստուստ ի բարձրագոյնս վերաթեւելով գեղեցիկապէս գեղապարեսցես ընդ երջանիկ պարս պերճա-

ցելոցն երգաբանել ի պարերգական ճեմարամի: Յուրում բարեպաճոյն խոհականութեամբ արհեստավէս ճարտասանելով իմաստածեմեն երամոց, յաւէտ դրուատիսցիս ի քաջն հոգեպատումս ընթերցաւէր կրթականութեամբ հանդիպելով ի գուպարս բանամարտիցն, ըմբերանեսցես համարեղ բանիւ. զբանիւն պանծացեալս: Հասեալ ի բենազն աշտիճան ուր զկացրդոցն կատարելով եւ բարեպաշտ փութով տօնասէր անձանց՝ բարիոք յարմարեսցես գովասանական հանդէս:<sup>18</sup>

Հատվածի առաջին մասում ակնարկվում է ճեմարանական երգչախումբը, որ երգում է շարական, օրհներգություն կամ ներբողյան: «Փեղապարեսցես ընդ երջանիկ ... պարս պերճացելոցն» նշանակում է ոչ թե պար, այսօրվա իմաստով, այլ բեմական կարգավորում, երգողների ծիսական դասավորություն, մենակատարների ու խմբի բեմական դիրք: Դրամատիկական վիճակն ակնարկվում է «ի գուպարս բանամարտիցն» բառերով: Բայց սա ուսումնական սրահ չէ միայն: Ակնարկվում է ինչ-որ հրապարակային վիճակ. «բարեպաշտ փութով տօնասէր անձանց՝ բարւոք յարմարեսցես գովասանական հանդէս»:

Պատկերը հիմնավորապես տարբեր է թեոնի ներկայացրածից: Այս «թատրոնից» պատարագ է բուրում, բայց սա պատարագ չէ: Համեմատականներ չունենք պարզելու համար, թե ճեմարանային բեմը դրամատիկան գործողության ինչ կերպեր է նախատեսել, բայց տեսնում ենք, որ այստեղ չկա դրամա անտիկ և հելենիստական առումներով:

Մնում է անդրադառնալ թրակացու *V* դարի հայ մեկնիչ Դավիթի «Յաղագս վերծանութեան» հատվածին, որը համախոս է թեոնին:

Ըստ որում ապա զենթադրութիւնն (= զենթադատութիւնն) իմանալ է նմանութիւն ներքոյ կայ (= ներքսակայ) դիմաց ձևով և ձայնիւ նմանապէս, որ գործ է ընթերցողին (= գործէ ընթերցողն) ըստ քաջութեան հանդիսի, ի յանդնութենէ և յերկչութութենէ խոյս տալ և միայն միջակին սպասելով՝ յորժամ խրոխական գայցէ բան, և ձևն ըստ այնմ ընթեռնուլ. և եթէ խանդաղատական՝ զի այն տեղի և իւր և վասն որոյ բանն է, արութիւն ծանիցի:<sup>19</sup>

Որոշակի են հիպոկրիտիսի և միմեսիսի գաղափարները: Դավիթ քերականը ընթերցանությունը համարում է խոսքի ներքին իմաստի վերաբադրություն դեմքով («դիմաց ձեւով») ու ձայնով, հրապարակային վիճակում («քաջութեան հանդէս»): Քերականը մոտենում է նաև բեմական արվեստի բարձրագույն օրենքի՝ չափի գաղափարին. «խուսափել հանդգնությունից ու երկչութությունից և ձգտել միջակա դրության», երբ խրոխական [խոսքը] գա»: Թվում է, շատ բնական ու հասկանալի պահանջ է սա: Բայց չափի գաղափարը գտնում ենք մեկ էլ բեմական արվեստի ունենասնյան ըմբռնումներում: «Ամեն բանի մեջ չափավոր եղիր. որովհետեւ կրթի հեղեղի, փոթորկի և, այսպես ասենք, հողմապտոյտի մեջն անգամ պետք է սովորես մի տեսակ բարեխառնություն պահել...»<sup>20</sup>: Շեքսպիրի այս խոսքերում տեսնում ենք հռետորիկայի և հիպոկրիտիսի այն ըմբռնումը, որ նրա հնրոսը բերել էր ուշ միջնադարյան համալսարանից: Այս խնդրին կանդրադառնանք իր տեղում:

Կրկնում ենք մեր միտքը, որ հայոց վաղ միջնադարյան դպրոցում ճարտասանության նյութը դժվար է համարել անտիկ դրաման: Դավիթը թերեւս ամենից ավելի նկատի ունի տրամախոսական մշակման ենթարկված զրոյցները.

<...> զի քերդողութեան արուեստն պիտոյանայ ճարտասանականին պայծառ բանից, որք և հաւասարապէս վարին առասպելեաւք և խրատուք:<sup>21</sup>

Իսկ տրամախոսական ձեի ակնարկը տեսնում ենք քերականի «Յաղագս հագներդութեան» հատվածում.

<...> վասն այնորիկ բարժանմամբ (-ր) ճառիցն, զի բժշկեցին միտքն առ ի յամբողջ պատախանելոյ առ ի յարցմունս յորում է ճառին և մի վհատեալ պախեցէ անզիտանալով ի քաղցր շահէ ուսումնասիրութեան:<sup>22</sup>

Տրամախոսական բաժանումը («բաժանմամբ ճառիցն <...> առ ի <...> պատախանելոյ առ ի հարցմունս») կամ արտաքին-ձևական է՝ մասնատում մտքից միտք, կամ բովանդակային՝ դեմքեր ու կողմեր: Դերակատարի կամ կողմնավորի գաղափարը միանդամայն հստակ է մեզ հայտնի երկրորդ քերականի՝ Մովսես Քերթողի մեկնությունում: Մովսեսը (գուցե Խորենացին) ուղղակիորեն վկայում է ճարտասանական ենթադատության դրամատիկական բնույթը և դա կապում է հագներդութիւն (թափածնական) տեսակի հետ:

Հագներդութիւն է ելք չնչոյ հագագին, զոր երաժշտականաւն նուազէն ի տաղս պարանցիկ երգոցն ըստ հած և դիւրագիւտ բանիցն, զորս ձայնիւք (և կողմնաւորաւք) իւրաքանչիւրոցն (իւրաքանչիւր ոք) սովորեալ էին մեծաշանապէս յարմարել ձայնս իրը փողարական դոչմամբ առ լսելեացն հեշտութիւն:<sup>23</sup>

«Տաղք պարանցիկ երգոցն» թարգմանում ենք «պարային (շրջանաձև, խմբական կամ շարընթաց) երգեցո-

ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՅ ՄԻԶՆԱԴԱՐՅԱՆ ԴՊՐՈՑՔ 89

ղության տաղեր»: Սա պարերգական (խորային) դրամայի նախատիպ տարբերակներից մեկն է՝ «ցցոց և պարուց երգի» մի տեսակը կամ նրա երկրորդ անվանումը: Զեռագրերից մեկում հանդիպում է «ի խաղս պարանցիկ երգոցն» ընթերցումը, որ կարծես հաստատում է մեր կուահումը: Անկախ դրանից էլ Մովսեսի վկայաբերած զուգահեռը շատ կարեւոր է: Եթե հույն ճարտասանները մատնանշում են հելլենիզմի դարաշրջանից ավանդված դերասանական արվեստը, ապա հայ քերականը դպրոցական ճարտասանի ուշադրությունն ուղղում է դեպի ազգային ավանդական դրաման: Խոսքի դրամատիկական կերպը նա տեսնում է այստեղ. «Ճայնիւք (և կողմնաւորաւք) իւրաքանչիւր ոք»: Սա պարերգական տրամախոսությունն է խոսքային կամ երգային<sup>25</sup>: Շարունակությունը՝ «յարմարել ձայնս իրը փողարական գոչմամբ առ լսելեացն հեշտութիւն» նշանակում է խոսքի, երգի ու նվագածության տոնային ու կշռությային (որիթմական) փոխհամաձայնություն: Ճարտասանական տրամախոսությունը, թվում է, պարերգական չպետք է լինի, և պարերգականը բերված է որպես համեմատական: Բայց եթե վերադառնանք «Պիտոյից դրբե՛»՝ Մովսես Քերդողին վերագրվող հավելվածին («երգաբանել ի պարերգական ճեմարանի», «ի գուպարս բանամարտիցն»), կտեսնենք, որ իսկապես հոգեւոր ճեմարանի բեմը տարբեր է թենոնի վկայաբերած հելլենիստական թատրոնի բեմից: Շատ կարեւոր է նաև հագներդութիւն և կատակերգութիւննեղերի իմաստային համադրումը: Կատակերգութիւննը հասկացության առաջին նշանակությունն է (ինվարիանտ) և ընդհանուր նշանակյալը (դեսիգնատ), որ միջնադարում նույնանում է թատրոն հասկացության հետ: Այստեղ ոչ մի շփոթմունք չկա<sup>24</sup>:

Ճարտասանական արվեստի տեսակների բաժանման կետում ուշագրավ մի երանդ է ավելացնում Դավիթ Անհաղթը.

<...> ճարտասանականն սեռ գոլով յերիս բաժանի տեսակս. յատենականն, ի բաղխոհականն, ի կացրդականն:

Առաջին դեպքում խոսքը վերաբերում է անցյալ ժամանակին (պատմողական), երկրորդում՝ ապագային («վասն հանդերձելոյն խորհի»), իսկ

կացրդականն յաղագս ներկային գոյանայ, վասն զի զածումն առընթերակայից բարեացն ունի յինքեան:<sup>25</sup>

Կացրդականը խոսքի և ներկայացվող իրականության ներկա ժամանակն է և խոսողի ներկա վիճակը՝ «կացումն հանդիսական», թերևս փորձենք ասել՝ դրություն բեմական և կացուրդ, որ նշանակում է «հանդիս տեսարանաց»:<sup>26</sup>

Ճարտասանական արվեստին Ստեփանոս Սյունեցին (VIII դ.) տալիս է նոր ու ինքնատիպ անվանում՝ առասպելավարժութիւն, որ կարծես հիշեցնում է հունարեն մυթուուիտւուս (միթոպիթեսիս) բառը։ Իմաստն էլ մոտ է դրան։ Բայց հետաքրքիրը նրա ընտրած համեմատականն է։

Կատակերգութիւն աշխարհաւրին. այսինքն վատ կենցաղավարելոցն եւ անարի ծուլիցն եւ ընչափացն եւ ի վերայ այսպիսեացն զեպերականն եւ զհեգնականն առնել ճառս եւ սոխս, որպէս ռամիկքն սովորաբար ստեղծանեն առ այնոսիկ. սոյնալիսեաւ վարեսցիս եւ դու յընթեռնուլն զայնոսիկ։<sup>27</sup>

Ժողովրդական խաղային ստեղծաբանությունը դառնում է ճարտասանական ոճի ու եղանակի համեմատական-կողմնորոշիչ։ Այս ճարտասանությունն իսկապես

ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ 91

թատերական է։ Քերականը չի ասում խոսել, պատմել, մեկնել, այլ առնել և վարել։ Գործողության ակնարկը շատ պարզ է։ Վերջապես, նա հիշեցնում է առասպելավարժության ու ենթադատության նյութը՝ «զին և զնոր, զհեթանուսաց և զհրիեց և գքրիստոնէից»։ VIII դարի քերականը վկայաբերում է մի բան, որի բեմական շարունակությանը հանդիպելու ենք բավական ուշ՝ XVII դարում։ Պատկերը որոշ չափով կոնկրետացնում է Համամ Արևելցին (IX դ.).

<...> բարեացն յորդորականսն ըստ իւրաքանչիւրոցն ձեւացուցես. որպէս Կայենին եւ Սեթայն կամ Ղամեքայն եւ երիտասարդին հարելոյ ըստ արդարն եւ սուսն զոյգ ձեւացեալք ըստ ասացուծոյն եւ յընթեռնուլն։<sup>28</sup>

Հիշում ենք Հուլիանոսի և առաքյալի բեմական հակադրությունը, ըստ Բյուզանդացու։

Ծայրահեղություն կինի առասպելավարժութիւն կոչված ուսումնակարգը հանգեցնել ամբողջապես դրամատիկական զրույցների կամ հարց ու պատասխանի։ Այլաբանական զրույցները, առակները, աստվածաշնչային թեմաների բանափոր մեկնությունները կարող էին բնավ տրամախոսական չլինել, խաղային վիճակների չհանգեցնել։ Կամ՝ տարբեր վայրերում, տարբեր դպրոցներում կարող էին կիրառվել ճարտասանական ենթադատության ոչ համանման եղանակներ։ Գրիգոր Մագիստրոսն էլ է խոսում առասպելավարժության մասին, բայց նրա ակնարկն անորոշ է, և եթե չլինեին նրա բանաքաղական մեկնությունը, դրան նախորդող ու հաջորդող մեկնությունների «Յաղագս վերծանութեան» հատվածները, չէինք կարող կռահել, թե Մագիստրոսն ինչ նկատի ունի, երբ ասում է

<...> նախ պարտ է զքերականութիւնն հանդերձ թարգմանութեամբ ուսանել տիրապիչս մակստացականութեամբ, եւ զկնի այսր զհուետորականն երիւք հանդիսիւք ամսխալ տրոհութեամբ:<sup>29</sup>

Դժվար է որոշել՝ Մագիստրոսը բաժանո՞ւմ է միմյանցից ուսումնասիրությունն ու վերարտադրությունը, նա լուս ընթերցանությո՞ւնը նկատի ունի, թե՞ վերարտադրությունը:

Նախուստ քան զայսոսիկ կրթեցելովք ներկուռ վերծանութեամբ զհին եւ զնոր կտակարանս, եւ առասպելավարժութիւնս ի բաղում եւ զմանզան տեղիս զեղեալ զորքանութեամբ արտայայտել հաւանիմք...<sup>30</sup>

Այսպիսով, դպրոցական վերծանական քերթությունը մոտ է բեմականության որոշ թատերային տարրերով, և նպատակն է պատրաստել քարոզիչներ, ատենախոսներ ու պատարագիչներ: Սա հետագայում արմատավորվելու էր ուշ միջնադարյան դպրոցում և ավելի ուշ (XVII դ.) կոչվելու էր բեմբասացութիւն և խաղ՝ արդեն դրամատուրգիական ու թատերային տեսքով, թատերագիտական գրականության մեջ՝ եկեղեցա-դպրոցական դրամա:

#### ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Ճարտասանության միջնադարյան ձեռնարկները, հիմնականում «Պիտոյից գիրքը» և քերականական մեկնությունները, ընդօրինակվել ու յուրացվել են ուսումնագիտական կենտրոններում և տեսական, և գործնական նկատառումներով: Ճարտասանական արվեստի կամ բեմբասացության նկարագրություն մեղ հայտնի չէ: Մեր բոլոր դատողությունների հիմքը ժամանակին օրինակ-

#### ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ 93

ված և վիրստեղծված ձեռնարկներն են: Միշտ չէ, որ պետք է գործնական նպատակներ տեսնել միջնադարյան քերականական մեկնություններում: Դրանք միաբնույթու ու միատեսակ չեն: Ուշադիր ընթերցումը կարող է ի հայտ բերել նրանց մտահայեցական և առարկայական հիմքերը: Առարկայական հիմք ասելով չպետք է հասկանալ անպայման մեր փնտրած ճարտասանական տրամախոսության արվեստը: Վաղ միջնադարյան մեկնություններում տրամախոսության ակնարկները մասամբ վերաբերում են նաև XII-XIV դարերին, քանի որ ուշ շրջանի արտագրություններ են: Միջնադարյան դպրոցն ու վարդապետարանը, որպես պահպանողական հաստատություններ, հետեւել են ուսուցման ավանդական եղանակներին և օգտագործել են ավանդական դասագրքերը: Խնդիրն այն է, թե դրամայից ծագող վերծանական քերթության կանոնները ինչպես են ըմբռնվել կամ իրականացվել հետագայում:

Այսպես, Վարդան Արևելցին (XIII դ.)՝ Խորվիրապի վանական դպրոցի վարդապետը համառոտ ու հակիրճ է մեկնում հիպոկրիսիսի գաղափարը:

Քննի եւ զկերպէն տայ զպատասխանին եւ զխաւան գովեստ կամ ի պարսաւ:

Հաջորդ կետում մոտենում է վիճակի և բնավորության գաղափարին.

Եւ ահա աստ պարզէ զվերին յիշեալ ենթագատութիւնն, որ դատես եւ պարզես զբանն վասն ում որ լինի, եւ բաժանես ըստ մարդոյն ոճոյն՝ եթէ գոռող եւ եթէ ողոք:<sup>31</sup>

Վիճակի ու բնավորության խնդիրը Վարդան Արևելցու համար, դժվար է ասել, գործնակա՞ն, թե՞ տեսական նշանակություն ունի: Հպարտությունն ու հեղությունը,

Հոխորտանքն ու տրտունջը, ըստ վարդապետի, պետք է տարբերել ընթերցվող տեքստում, բայց պե՞տք է կերպավորել։ Վերոհիշյալ հատկանիշները բնավորության կամ բարքի դրսեռումն են, որ այստեղ որակվում են որպես «մարդոյն ոճ», բայց վարքագի՞ծ, թե՞ որակ, ընթացք, թե՞ վիճակ կամ պատրաստի դիմակ։ Այնուամենայնիվ, կենդանի վերարտադրության ակնարկ ունի Վարդան Արևելցին։

Խանդաղատելն «ողոքել» ասէ, որ ողոքականս ձայն է որպէս մայրն ընդ որդին, թէ՝ «Մի, իմ հաւատ», եւ կամ թէ՝ «Նը[ի], եկ իմ հոգի եւ այլ ասպիսիք։

Նախորդ գլխում կարդացինք «Աստվածածնի ողբը», որ իսկապես խանդաղատական ու ողոքական էր այս կանոնի առումով։ Տիրապետել վերծանական քերթությանը, ըստ Վարդան Արևելցու, նշանակում է վերարտադրել նաև դրությունն ու ոճը։

Եւ որ այսպէս չլինի, նա զքերթութեամ արուեստն ոչ պահէ եւ ոչ գիտէ զընտրութիւնն, այլ տապահէ եւ աւերէ զքերթածացն զգիւտսն եւ զքաջութիւնն զիտնականացն ծիծաղելիս առնէ։<sup>32</sup>

Վերծանական քերթության օջախներից մեկը, ըստ մատենագրական վկայությունների ու տվյալների, Աղբերց վանքի մենաստանն է, որ կրում է Գլաձոր անունը և 1291 թվից հիշատակվում է որպես համալսարան։ Համալսարանի առաջին բարունապետը (ուեկտոր) Վարդան Արևելցու աշակերտն է Ներսես Մշեցին։ Նրան ուղղված դրվագական չափածո մի խոսք է հասել, մեզ հետաքրքրող հարցի տեսակետից կարծես ուշագրավ։

Որ եւ Ներսէս Հոետոր,  
Կորովաբան, յիսուսական տեսարանացն  
Խոհեմ տեսաւղ անվրիպական,  
Ետ ինձ գրել վասն մանկանց  
Նոր Սիոնի, որ հմտանան։<sup>33</sup>

Զշտապելով եզրակացությունների դալ, ուշագրություն դարձնենք «Հոետոր», «յիսուսական տեսարանացն» և «գրել վասն մանկանց» խոսքերի վրա։ Խոսքն իհարկե ինչ-որ գասագրքի մասին է։ Բայց տեսնում ենք, որ Ներսեսը կորովի հոետոր է «Հիսուսական տեսարաններում»։ Քրիստոսաբանական ճառի մասին է խոսքը կամ որևէ կացրդականի՝ Հիսուսի կյանքին ու սքանչելագործություններին վերաբերող։ Գլաձորի համալսարանում ընդօրինակված ձեռագրերում տեսնում ենք «Պիտոյից գիրքը», քերականական մեկնություններ, վերջապես՝ Եսայի նչեցու և Հովհաննես Երդնկացի-Ծործորեցու բանագագարական և ինքնուրույն մեկնությունները, որոնք նոր երանգներ են բերում, հարստացնում մեր պատկերացումները միջնադարյան պոետիկայի, մասնավորապես նրա բեմական դրսեռումների մասին։

Գլաձորի համալսարանը, որին թերեւս նման են եղել միջնադարյան Եվրոպայի համալսարանները, հետեւ է հնից ժառանգված կարգին՝ «Յոթ ազատ արվեստների» ուսուցմանը, եռյակ և քայլակ բաժանումներով։ Ճարտասանությունը եղել է եռյակի մաս, նախ որպես քերականություն (լեզվագիտություն և պոետիկա), ապա որպես վերծանական քերթություն և բեմբասացության հիմք։ Ճարտասանության տեսությունը, ինչպես հայտնի է, ընդհանուր է եղել Եվրոպական բոլոր վարդապետարաններում ու համալսարաններում։ Եվրոպայում օգտվում էին լատինական ձեռնարկներից (Դոնատուս, Պրիսցիանուս), կարդում էին Հորացիուս, Վերգիլիուս, Պլավտուս և Սենեկա։ Պլավտուսը և Սենեկան, ինչպես

կտեսնենք, հետագայում հիմք են դարձել դպրոցական դրամաների: Գլածորում ընդունված էին «Պիտոյից գիրքը» և Թրակացու «Քերականությունը» իր մեկնություններով: Այստեղ կարդում ու մեկնում էին Պլատոն, Արիստոտել, Ս. Գիրք, ավանդական պատմություն, սրբոց վարքեր, բարոյախոսական զրույցներ: Սրբոց վարքերն ու բարոյախոսական զրույցները ծառայում էին գրական հիմք ենթադառնության արվեստի համար: «Եւ սոքա են, – շարունակում է եսայի Նչեցին հին մեկնիչների խոսքը, – հին եւ նոր, հեթանոսաց և հրէից և քրիստոնէից, զի ‘տեղեակ իցէ եւ ընդել այս ամենայն պատմութեանց»<sup>34</sup>: Այս ընթերցանության կամ ենթադառնության նպատակը մնում է նույնը, ինչ չնում ներդաշնակել պատմությունը և լեզուն՝ «կարգել զնագիտութիւնս և զի եղուս», քանի որ խոսքը չի պատկերացվում առանց մշակված, գրականության վերածված ավանդության կամ առանց գրական նյութի մեկնության ու վերարտադրության: Լեզվի և հին ավանդությունների փոխկարգավորումը մեզ կարող է թվալ արհեստական մի բան, բայց այդպես չէ: Ըստ միջնադարյան հայացքի, լոգոսը աշխարհի ու մարդու միասնությունն է, նաև պատմության ու անհատի կապը, որ արտահայտված է գրականությամբ: «Կարգել զնագիտութիւնս և զի եղուս» նշանակում է հաղորդակցվել մարդկայինի հավերժական, կայուն էությանը, կրել լոգոսը՝ Բանը: Ահա այս կարգավորումը բնականորեն հանգեցնում է բանավոր վերարտադրության, խոսքի կերպավորման գաղափարին.

<...> վասն զի նախակրթութիւն և ընտանութիւն հին պատմութեան ի մեզ տրամադրի եւ ապա վերծանութեան ասպարեզք:<sup>35</sup>

Վերծանության եղանակներից մեկն է, այսպես կոչված, զրուցատրությունը: Բառի բոլոր իմաստները վերաբերում են մեր հետաքրքրության առարկային:

<...> աւանդութիւն պատմական, մեկնարանութիւն, խօսակցութիւն, տրամաբանութիւն, տրամախօսութիւն, խօսակից լինել:

Զրուցատրությունը նչեցու բացատրությամբ նշանակում է տրամախոսական վերարտադրություն.

<...> զրուցատրութիւնն առնելի է ոչ ըստ սովորական ինչ խաւսից, այլ կամ զքերդողացն արարուածս, եւ կամ զիւրաքանչիւր ուրուք նոցին գաղափարաւք ձեւացուցանելով զրուցել:<sup>36</sup>

Բեմական-դրամատիկական տրամախոսության գաղափարը շատ հստակ է. ոչ թե սովորական խոսակցություն, այլ գրական նյութի հիման վրա, կերպավորված ըստ դեմքերի: Խոսքային վերարտադրության երկու եղանակ է նշում քերականը, ըստ հեղինակի երկի՝ «զքերդողացն արարուածս» և ըստ դեմքերի:

Եսայի Նչեցին շարունակում է վերծանական արվեստի հին ավանդությունը: Նրա դատողությունները զուտ անհատական չեն, հիմնված են նախորդ շրջանների տեսական փորձի վրա: Համամ Արևելցու «ըստ իւրաքանչիւրոցն ձեւացուցես, որպէս Կայենին և Սեթայն և Ղամեքայն, հարելոյ ըստ արդարն և սուտն» խոսքը Նչեցին մեկնաբանելով նրբացնում ու խորացնում է և մոտենում է գաղափարատիպի ըմբռնմանը՝ «զիւրաքանչիւր ուրուք նոցին գաղափարաւք ձեւացուցանելով», այն է՝ յուրաքանչյուր դեմք ըստ իր իմաստի կերպավորելով: Նույն միտքը փոքր-ինչ տարբեր երանգով է արծարծում Նչեցու աշակերտը՝ Հովհաննես Շործորեցին. «զիւրաքանչիւր ուրուք նոցին գաղափարաւք զրուցել»: յուրաքանչյուրին խոսեցնել ըստ իր իմաստի: Արիստոտելյան էթոսը փաստորեն հանգել է տիպի կամ մարդկային տեսակի գաղափարին: Արիստոտելը բերում էր էթոսի

դիալեկտիկական ըմբռնումը՝ մարդկային բարքը որպես իրադրություններից բխող և իրադրությունները պայմանավորող որակ: Միջնադարում այդ հայեցակետը վերանայված է կամ տարաբեկված. բարքը տրված է ի սկզբանե, իսկ գործողությունը փոխարինված է վիճակով, որ նշանակում է, թե դրաման վերածվել է առակի կամ փոխարինված է առակով: Առակը, որպես ներկայացվող վիճակ, անշարժ է, ենթադրում է, ոչ թե անձերի փոխարաբերություն, այլ գաղափարատիպերի պայմանաձեռն և համեմատություն-հակադրություն, բարոյական խրատի կամ եզրակացության տեսական բանաձեռ պատկերային-կենդանի առարկայացման ենթարկելու, պայմանաբար օրինակելու միջոց: Հետևաբար, զրուցատրությունն այստեղ ներկայանում է ոչ որպես գործողություն և ընթացք, այլ վիճակ, հատկանիշների այլաբանական դիմակայում: Սա տիպիկ միջնադարյան մտածելակերպ է: Վարդապետն աշակերտին առաջադրում է որևէ միտք-բանաձեւ, իհարկե, Ս. Գրքից, իսկ աշակերտը գտնում է դրան համապատասխան կյանքի փաստը կամ գրքային որևէ օրինակ՝ զրույց կամ առակ, ըստ իրադրության և ըստ իմաստի ու գաղափարատիպի: Սա միտք-բանաձեւի ճարտասանական մեկնությունն է, որ եղել է և գրավոր, և բանավոր, և գատողական, և խոսքային-խաղային: Իսկ ելակետ ծառայող բանաձեռ հայտարարվում է վերջում: Այս է ճարտասանական զրուցատրությունը, որ ինքնին հանգում է յուրահատուկ կամերային խաղի: Դպրոցական ճարտասանության այդ եղանակը ուշ միջնադարյան Եվրոպայում իսկապես հանգել է մորալիտե կոչվող դրամատիկական տեսակին:

Զրուցատրութիւն բառը մեր միակ հենակետը չէ: Նշեցին բերում է հիպոկրիսիսի և միմեսիսի գաղափարները և գրեթե նույնացնում դրանք:

Ենթադատութիւն է նմանաբանութիւն, յորժամ յընթեռնուլն նմանացուցանէ ընթերցաւղն զբանս բարուցն բարկացողին կամ ողոքողին կամ այլոց որակութեանց. քանզի զնմանութիւն առնու զներքսակայ դիմաց բանին՝ ձեւով եւ ձայնիւ նմանապէս:<sup>37</sup>

Թվում է, գնում ենք շատ ծանոթ մի արահետով: Նչեցին ելնում է հին աղբյուրներից: Հիշենք թեռն Ալեքսանդրացու դատողությունը, Պովոս դերասանին և Դավիթ քերականին: Բայց Նշեցու միտքը պարզելու համար պետք է փոքր-ինչ ճշտել բնագրի ընթերցումը:

<...> զնմանութիւն առնու զներքսակայ դիմաց բանին՝ ձեւով եւ ձայնիւ նմանապէս, որ գործ է ընթերցողի ըստ քաջութեան հանդիսի:<sup>38</sup>

Հնդգծված բառերը բնագրի բոլոր հայտնի տարբերակներում նույնն են, բայց ակամա տրամադրվում ենք այլ ընթերցման՝ «զոր և գործէ ընթերցողն ըստ քաջութեան հանդիսի»:

Թարգմանենք Նշեցու մեկնության այս հատվածը ըստ մեր ընթերցման, որպես մեկնության փորձ: «Ենթադատությունը նմանողություն է, երբ ընթերցման մեջ ընթերցողն [իր] խոսքը համապատասխանեցնում է բարկացողի կամ տրանջացողի կամ այլ վիճակի (այլոց որակութեանց) [մարդու] բնագործությունը (բարուցն), քանզի ստեղծում է դիմակայվածի խոսքի ներքին իմաստը (զներքսակայ) տեսքով (ձեւով) և ձայնով հավասարապես, որ և իրականացնում է ընթերցողն ըստ ցուցադրվող տեսարանի (ըստ քաջութեան հանդիսի):

Քաջութիւն բառն այստեղ տարբեր և փոխառնչված իմաստներ է ենթադրում: Եթե նշանակում է համարձակության, խոսքը այլ որակի համարձակության մասին է՝

«Գործ գովելի, առաքինութիւն», կարողություն, ձիրք: «Քաջութեան հանդէս» ասել է ներկայանալի, ցուցադրման արժանի, օրինակելի արարք, որ ունի դիտող և ունկնդիր, ինչպես, ասենք, Գրիգոր Մագիստրոսի ակնարկած «Հայկեան հանդէս եւ հիացուցանելի գործառնութիւն»-ը (թուղթ Ժթ), որ գուցե եղել է ասպետական տուրնիրի նման կամ անվրեպ նետաձգության ցույց: Ճարտասանական լսարանում դա պետք է նշանակեր դիտուկ և պատկերավոր դատողության բնորոշ օրինակ, առակ և գաղափարատիպ ստեղծելու մրցություն: Քաջությունը ճարտասանության մեջ նշանակել է նաև կողմնորոշում և չափ: Այդ է ասում նչեցու մեկնության շարունակությունը, որ, ինչպես նկատում ենք, քաղված է Դավիթ քերականից. «<...> յորժամ խրոխտական գայցէ բանն՝ և ձեւն ըստ այնմ ընթեռնուլ. եւ եթէ խանդաղատական՝ ըստ այնմ որպէս ասացի»: Այս միտքը, և դատողությունն ամբողջությամբ, ոչ նչեցունն է, ոչ Դավիթ քերականինը, ոչ էլ նույնիսկ Թրակացու հույն մեկնիչներինը: Սա շատ ավելի հին բան է: Դերասանի արվեստի մի հին կանոն, հավանաբար հելենիզմի շրջանում գիտակցված ու սահմանված, անցել է ճարտասանության տեսությանը և կտեսնենք, թե դեռ ուր է հասնելու: Եթե Թեոն Ալեքսանդրացին է այսպես խոսում, հասկանալի է, եթե վաղ միջնադարյան մեկնիչը՝ Դավիթը գալիս է Թեոնից, դարձյալ հասկանալի է նրա դատողության հիմքը, բայց նչեցին ու երգնկացին ավելի քան յոթ հարյուր տարով այս կողմ են: Ի՞նչ իրողություն է ենթադրվում նրանց տեսական գննումների խորքում, կամ ի՞նչ գրական նյութ նկատի ունեն...

Հետևելով քերականների բառերին, կարելի է մտածել, թե դատողությունները վերաբերում են հռետորի միայն խոսքային-ինտոնացիոն արտահայտչականությանը, և նմանաբանութիւն կամ ձեւացուցանել բառերը ոչինչ տեսանելի նկատի չունեն: Այս է տրամաբանական երեսում,

եթե խոսքն իսկապես պարզ ընթերցանության կամ ճառի մասին է: Պարզվում է, որ ոչ թեպետ քերական-ները շեշտում են ու կրկնում ընթեռնուլ և ընթերցող բառերը: Մրանք պայմանական եղբեր են մեզ համար և շատ դեպքերում համարժեք են առնուլ, ձևացուցանել բառերին: Ընթերցելն այս դեպքում անհամեմատ շատ բան է նշանակում: Դա նախ և առաջ զրուցատրութիւն է և ենթադատութիւն՝ դիալոգ և միմեսիս: Ինչպես վաղ շրջանի, այնպես էլ XIII դարի և ավելի ուշ շրջանի մեկնիչների համար տարբեր են ենթադատութիւն և առողանութիւն հասկացությունները: Առաջինը «զնմանութիւն առնուլ», երկրորդը ցույց է տալիս «զներքս պարունակեալ միտսն»:

Գրական բոլոր տեսակները չեն կարող տրամախոսության վերածվել կամ ներկայացվել երկու դեմքով «երկակի դիմաւք արարեալ»: Ողբերգությունն օրինակ հերոսական բանաստեղծություն էր (ինչպես Դավթակ Քերթողի «Ողբը»), տաղը՝ վիպական բանաստեղծություն, և դրանք կարող էին, ինչպես հնում, այնպես էլ այժմ մենախոսական եղանակով ներկայացվել: Խաղային տարբերքը կամ ձեւացումը կարող էր թերեւս տեղ չունենալ այստեղ: Բայց երբ խոսքը գալիս է կատակերգությանը, դարձյալ աշխարհիկ թատրոնը դառնում է համեմատության օբյեկտ.

<...> որպէս ռամիկք սովորեալ են առնել առ այսպիսի բանս իւրեանց ձայնիւ հեգնական: Սոյնպէս վարեսցես և դու յընթեռնուլն զայսոսիկ:<sup>39</sup>

«Սովորեալ են առնել», «վարեսցես». արդյո՞ք պատահականորեն ընտրված բառեր են, և խոսքը պարզ ընթերցանությա՞ն մասին է: Կրկնում ենք արդեն ենթադրված ու ասված մի բան, բայց այս դեպքում մեզ հետաքրքրողը համեմատության օբյեկտը՝ ժողովրդական կատակեր-

գական խաղը կամ աշխարհիկ-հրապարակային թատրոնը չէ, այլ նրա եղանակների կիրառումը ճարտասանական բեմբասացության մեջ: Համալսարանական մեկնության մեջ նույնպես չի մոռացված թատրոնը, որքան էլ նրա կերպը տարբեր լինի ժողովրդականից: Այստեղ համեմատության օբյեկտ է նաև ժողովրդական պարերգական կատակերգությունը, տրամախոսության պարերգական եղանակը.

<...> ասողին բառիւքն եւ ձայնիւն առնուլ, եւ ստորադրել, որ է ի ներքոյ դնել, կամ ըստ այլոց՝ պար առեալ երգել:<sup>40</sup>

Սա նշանակում է խոսք և խոսքի խմբական կրկնություն կամ խոսքի խմբական-երգային պատասխան: Ազգբունքը պատարագ է հիշեցնում, բայց գիտենք, որ ժողովրդական խաղի տեսարանակարգն է դա՝ գործողության տրամարանությամբ նման, բայց ոչ համարնույթ: Պարերգական տրամախոսությունը մի կողմից պատարագային է, մյուս կողմից ժողովրդական-խաղային: Դա չէր կարող տեղ ունենալ ճարտասանական լսարանում, բայց հեգնական ոճը՝ «ի գովեստ և ի պարսաւ» հասկանալի ու տրամարանական է երկում առակների կամ բարոյախոսական զրույցների կերպավորման ու մեկնության մեջ.

<...> զհեգնական ասացեալ ճառս ըստ ռամիկ աշխարհականացն ձայնիւ ձևացուցանել, որպէս նոցայն (=նոքայն) սովոր են առնել:<sup>41</sup>

Հայտնի է առակն բառի միջնադարյան իմաստը՝ ակնառու, տեսանելի փաստ, համեմատության ուղղակի կամ այլաբանական օբյեկտ, մտքի ակներե փաստարկում, կերպավորում, ցոյց, պայմանական դրույթ, ցուցա-

կան: Հիշենք Հովհաննես իմաստասերի (Սարկավագ) «ոտանաւոր և ցուցական ըստ քերդողացն տեսակի» խոսքը<sup>42</sup>: Քերականական նախորդ մեկնիչներից Ստեփանոս Սյունեցին, ինչպես նկատել ենք, արդեն բերել էր Ոլիմպիանոսի առակների օրինակը, հույն և հայ մեկնիչները անուղղակիորեն ակնարկել էին եղովագոսի առակները, բյուզանդական հոետորական դպրոցներում դրանց մեկնությունները մեծ տեղ ունեին, Համամ Արեւելցին մատնանշել էր Հին Կտակարանի թեմաների բարոյախոսական մեկնության օրինակները: Եսայի Նչեցին ու Հովհաննես երգնկացին շարունակում են նույնը.

Է եւ սա արարուածք քերդողական (գրական ստեղծագործություն – Հ.Հ.) երկակի դիմաւք արարեալ՝ բարի կենաց յաւծարութիւն եւ վատուց յանդիմանութիւն, որ խրատ բազում ունի յինքեան եւ պիտանացու յաշխարհական իրս՝ անարի ծուլիցն եւ ընչափրացն եպերանս, եւ արեացն եւ գեղեցկացն՝ դովանս...<sup>43</sup>

Կրկնության դիմեցինք (ինչպես քերականներն են մեկը մյուսին կրկնելով շարունակում), որպեսզի պատկերացնենք տրամախոսական՝ երկու դեմքով գրված («երկակի դիմաւք արարեալ») առակը: Միիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակները, որ նույնպես հոետորական մշակումներ են, գիտենք, բայց նրանք, հատկապես Գոշի առակները, չեն մղում դրամատիկական խաղի պատկերացման: Վարդանի առակների առիթով նման ենթադրության դիմել ենք, բայց չենք կարողացել պատկերացնել նրանց խաղային կերպը: Դա իսկապես այնքան էլ դյուրին չէ, ինչպես երբեմն կարող է թվալ առակի ու պիեսի սեռային տարբերությունները չտեսնողին: Բոլոր գեագերում պիեսն անդրադարձնում է խաղային վիճակներ և նախատեսում է ընթացք, վար-

քագծերի փոխարաբերություն, իսկ առակը որևէ ափորիզմի կամ մտքի անդրադարձումն է ըստ օրինակի և նախատեսում է այլաբանական տիպերի դիմակայություն: Փոխարաբերության ընթացք և վիճակների դիմակայություն. սրանք միանգամայն տարբեր դիրքեր են թեմատիկ նյութի և ենթադրվող սյուժետային վիճակների հանդեպ: Բայց առակի ու պիեսի միջև կա միջնադարյան գրական մի տեսակ, որին ասում ենք զրույց: Սա ուշ միջնադարյան նովելն է՝ գրամատիկական գործողության տարրերի ավել կամ պակաս առկայությամբ: Միջնադարյան նովելի և եվրոպական ունեսանյան կատակերգության կապը որոշակի ու ակներեւ է: Մեզ հայտնի եվրոպական (հատկապես իտալական) կատակերգություններում պարզ երևում են նովելային հիմքերը, բայց նովելների խաղային հնարավորությունները դյուրությամբ չեն տեսնվում. դժվար է տեսնել նովելի կամ զրույցի գրամատիկական պրոյեկցիան<sup>44</sup>: Ուստի, տրամաբանական է թվում առակների ու զրույցների մեկնողական վերաբաղրությունը մեկ ձայնով: Ճարտասանական լսարանը յուրահատուկ թատերակարգ է՝ ոչ հրապարակային: Տրամախոսությունն այնտեղ կարող էր հանգել երկու ձայնի, եթե նկատի ունենանք «երկակի դիմաւք» խոսքը և այն, որ դրա տեսարանակարգն անհամեմատ պարզ է երևում, քան պատարագինը կամ կացրդական տոնախմբությանը:

Հանդէս բառը, որին քերականները բավական հաճախ են դիմում, միշտ չէ, որ նշանակում է հրապարակային վիճակ. շատ դեպքերում դա ճառողի (մեկնիչ, պատմող, զրուցող) և ունկնդրի հարաբերությունն է՝ բեմ և հանդիսական անտինոմիան, անկախ հրապարակի ու միջավայրի չափերից: Այդ հանդեսը կարող էր տեղի ունենալ փոքրաթիվ ունկնդիրների՝ վարդապետների ու աշակերտների ներկայությամբ, վանական գրատներում, գավիթներում: Նկատի առնենք, որ լիթուրգիական դրաման

նույնպես ներկայացվել է եկեղեցիների գավիթներում, և դա հին ավանդություն է: Բոլոր դեպքերում գավիթը կամ ժամատունն է ճառի, մեկնության և ունկնդրության վայրը, որը պաշտոնական չէ ծիսակարգի ծառայելու համար, և աշխարհիկ էլ չէ: Գավիթը Աստծո բնակարան աշխարհի հետ կապող միջանկյալ դահլիճն է իր որոշակի կուլտուր-հասարակական գերով: Գավիթը կարող էր կատարել նաև ուսումնական ընդհանուր սրահի դեր, նման վանական սեղանատանը: Խմբական շփման վայրը, ուր կարող էր մուտք ունենալ նաև աշխարհականը, թերեւս պետք է տարբերենք ճեմարանական սրահներից, որոնք նախատեսել են մարդկային հաղորդակցման ավելի նեղ միջավայր՝ վանահայր ու վանական, վարդապետ և պահիր, վարդապետ և աշակերտ:

Աստվածաշնչային նյութի, մասնավորապես ավետարանական աֆորիզմների ու առակների գրական-ճարտասանական մեկնությունը, ինչպես և լսելի ու տեսանելի վերաբաղրությունը նախատեսել է մեկ կամ երկու դեմք: Քերականական մեկնություններում ակնարկ կա նաև «պէս պէս դիմաւք» խոսելու մասին, բայց դրանից իրավիճակը չի փոխվում: Թվում է, այնուամենայնիվ, որ կանոնականը երկու անձի խոսակցությունն է, զրույցը երկու անձով վարելը: Ըստ միջնադարյան հայացքի, իրականությունը երկրենու է՝ լույս և խավար, չար ու բարի, երկինք և երկիր, հոգի և մարդը այդ երկու սկզբունքների հակադրամիասնություն է կամքի ազատությամբ, այն է՝ ազատ ես ընտրության մեջ, բայց ճիշտը բարին է, երկնայինը, լուսավորը: Այս է, որին ասում են «երկակի դիմաւք արարեալ»: Միջնադարյան բոլոր զրույցները, կրոնական ու աշխարհիկ քերթվածները ներկայանում են ահա այդ սկզբունքով: Դա իրականության միջնադարյան մողելավորումն է, այդ մողելով է կառուցված դպրոցական-կամերային մեկնություն-ճարտասանությունը:

Արդ, ինչպիսի՞ն էր լինելու դպրոցական և համալսարանական բեմբասացության գրական նյութը, ինչպես պետք էր «ձեւացուցանել զբանն իրեւ ի հանդիսի», կարիք զգացվո՞ւմ էր գործող անձանց խմբի, թե՝ երկու դեմք և երկու ձայնը բավական էր: Պատարագում բեմավիճակը հստակ է՝ բոլոր ձայները համերաշխվում են, բոլոր դեմքերը նայում են մեկ կողմ, երկդիմի վիճակը բացառվում է: Լիթուրգիական դրամայում այդպես չէ. այնտեղ սկզբունքները ներկայանում են նախ երկատված (Քրիստոս-Պետրոս, Քրիստոս-Մարիամ, Քրիստոս-Հրեշտակներ), ապա միասնական: Այլ է զրույցների, քերթվածների կամ տաղերի բնույթը: Երկու դեմքի գաղափարն, այստեղ ափելի որոշակի է, և դա խոսելու ինչ-որ արտաքին կերպ չէ, գալիս է բովանդակային հիմքից: Այդ հիմքը տեսնում ենք նաև այն դեմքերում, երբ երկու դեմքով կարդալու անհրաժեշտություն չկա, այն է՝ երկու դեմքը առարկայական վիճակի նշան չէ, այլ անհատի ներքին դրամատիզմի: Մարդը տառապում է մարմնականի ու հոգեորի աններդաշնակությունից. այս է միջնադարյան մարդու դրաման և ճարտասանական տրամախոսության հիմքը, որ սահմանված է XII-XIV դարերի բանաստեղծ Կոստանդին Երզնկացու մի բանաստեղծության վերնագրում՝ «Բանք յերկու դէմս մտաց տեսութիւնք՝ ի Հոգի եւ ի մարմին»<sup>45</sup>:

Տրամախոսական ձեռվ կամ երկու դեմք ենթադրող զրույցներն ու քերթվածները չպետք է առանց վերապահության ընդունենք որպես բեմբասացության նյութ: Բայց միջնադարյան գեղարվեստական կամ ճարտասանական տրամախոսությունը կողմնորոշիչ է մեզ համար, և դրանով գտնում ենք դրամատիկական ձեր փոխակերպման միջնադարյան արահետը: Այդ արահետը լայն չէ, մանավանդ մեզ համար, և չպետք է փորձենք հարմարեցնել այդ մեր հայացքին: Դրամատուրգիական մտածողությունը գրականության մեջ կարող է լինել

խաղային վիճակների անուղղակի անդրադարձ, ինչպես և կարող է անկախ լինել խաղից ու թատրոնից, չնախատեսել ոչ մի կենդանի վիճակ և կերպավորում՝ ի հայտ գալ որպես մտածելակերպ: Այն օրինակները, որոնց ուզում ենք դիմել, դրամատուրգիական են ինքնին՝ ոչ անպայման հեղինակի մտադրություն, այլ թերևս օբյեկտիվ արդյունք: Խնդիրը զուտ այն չէ, թե ինչ նպատակով է գրված բանաստեղծությունը կամ զրույցը՝ նախատեսում է բանավոր վերարտադրություն, թե ոչ, այլ նաև՝ գրական ինչ միջավայրի ազդեցություն ունի և, թեկուզ անուղղակիորեն, որքանո՞վ է կապվում քերականների մշակած պոետիկայի և ճարտասանական կանոնների հետ: Հետամուտ ենք լինելու այն գրականությանը, որ ստեղծվել է միջնադարյան ուսումնագիտական կենտրոններով անցած հեղինակների ձեռքով: Բայց մեր ճանապարհին բառեր կան և մինչև վերջ չբացատրված հասկացություններ, որ չենք կարող շրջանցել:

### ԿԱՅՈՒՐԴ ԵՎ ԲԱՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Կրկնվում է մեկնություն խնդրող մի բառ՝ կացուրդ: Բացատրությունն է՝ «կացումն հանդիսական, հանդիսաբարանաց եւ տօնից, համախմբութիւն, ժողով, տօն ամենաժողով, նուագ երգոց ի տօնս, որպէս և ժամամուտ եղանակաւոր, եւ հարցնափառ եւ տաղ, որք կոչին և կարգ, որպէս և շարական...»<sup>46</sup>: Նույնն են ասում բայցական ձեւերը՝ կացուրդի, կացուրդիմ առաջին նշանակությունից ենող բացատրություններով՝ «իբր կացուցանիլ, դնիլ հանդիսապէս <...> ըստ ճարտասանից՝ ճառ ներբողական կամ պարսաւական ի հանդիսի <...> ի հանդիսատօնախմբութեան»<sup>47</sup>:

Բառի իմաստները բազմազան են և կարող են տարբեր մեկնությունների մղել, բայց նայենք ստուագաբա-

նությանը: Հստ Աճառյանի, կացը կայ-ի երկրորդ արմատաձևն է «կայան, կեցած տեղը, տեղ, վիճակ»<sup>49</sup>, լինել բայի երրորդ գեմքի ներկա ժամանակին համապատասխան: Դավիթ Անհաղթը, ինչպես նկատել ենք նախորդ գլխում, կացրդականը համարում է ճարտասանական եղանակ «յաղագս ներկային»: Հավանաբար, բառի ծիսական իմաստն ավելի շին է, քան քերականական իմաստը: Մեր խնդրի տեսակետից ուշագրավ է ծիսական-թատերակարգային հասկացությունների գործադրումը քերականության մեջ: Եթե Դավիթ Անհաղթի նշած իմաստը համադրենք Գրիգոր Մագիստրոսի «Պամպարափայլ կացրդական տօնախմբութիւն» (թուղթ ԺԱ) վկայության հետ, թերեւս ինչ-որ կերպ շոշափենք առարկան: Ենթադրվել է, որ Մագիստրոսն ակնարկում է կրոնական տոնախմբության մի եղանակ՝ միստերիալ թատրոնի թերեւս նախնական մի ձև: Ենթադրությունը, թեպետ հապճեպ ու չփաստարկված, չի հակառակ վերը հիշատակված լեզվական վկայություններին ու նշանակություններին: Կացուրդ և կացրդական բառերը և՛ այստեղ, և՛ այլ բնագրերում ունեն ծիսային և ճարտասանական նշանակություն: Այստեղից է արտածված առարկայական վերաբերություն ունեցող իմաստը՝ հոգեոր երգ, շարական: Անտրամաբանական չէ, եթե ենթադրվող առարկայի համար ընտրում ենք նորագույն, մեզ համար ըմբռնելի բեմադրություն և բեմադրական բառերը:

Ճարտասանական լսարան և ամբիոն, աղոթարան և բեմ. ահա կացրդական ճառի և կացրդական տոնախմբության ասպարեզները: Բառն այլ զուգորդումների ու պատկերացումների չի մղում: Իհարկե, կրոնական տոները ենթադրում են նաև բացօթյա հանդիսանքներ: Փաստերը հայտնի են: Եկեղեցու գավթում, բակում, գետափին («Ձրօրհնեք»), թե այլուր, էությունը նույնն է: Պետք է կարծել, որ Մագիստրոսը պաշտոնական ծիսակարգերը նկատի չունի: Ոչ պատարագը, ոչ էլ մեր

իմացած լիթուրգիական դրաման գրականության մեջ կացուրդ չեն կոչվում: Կացուրդը կատարողական արվեստի մի պայմանաձև է, եթե նկատի առնենք «Պիտույթից գրքի»՝ Մովսես Քերթողին վերագրվող հատվածի մեզ հայտնի տողերը: Ծիսական իմաստ է հուշում բառարանի ցույց տված կարգ հոմանիշը, որ համերաշխ է Մագիստրոսի վկայությանը: Մնում է ենթադրել, որ կացուրդը ծիսական երգի կամ հոգեոր բանաստեղծության թատերակարգային ավանդման եղանակ է (թերեւս պարերգական), որ չի պահպանվել, վկայվել է անունով և որպես երգ:

Երբեմն կացուրդ բառի հոմանիշն է թվում կցորդը: Այս նույնացումն անհասկանալի է, և գուցե դրա արդյունքն է կցուրդ ձեւը: Նայելով բառի կառուցվածքին ու իմաստին և համադրելով կացուրդի մեր ենթադրած իմաստին, տեսնում ենք, որ այստեղ ինչ-որ բան անտրամաբանական է լեզվական առումով և տրամաբանական նշանակյալի առումով: Կցորդի արմատն է կից, այն է՝ մոտ, միասին, մերձ: Իսկապես՝ ոչ մի առնչություն կայ և կաց արմատաձևերի հետ: Բայց նայենք բառի նշանակությանը՝ «որ կից գտանի իւկը ընդ այլում, մասնակից, Հաղորդ, Հաւասարորդ, գործակից, կենակից, ձայնակից»: Եվ ըստ այսմ՝ կցորդութիւն. «Հաղորդութիւն, մասնակցութիւն, ձայնակցութիւն, գործակցութիւն, միաբանութիւն»: Կցորդ բառի նշանակությամբ է խոսում կցուրդը. «կցուած երգոց կամ սաղմոսաց, տուն մի սաղմոսի կցեալ ի խորհուրդ աւուրն, որում կցի եւ սկիզբն նորին զինի եւ յաւելուած երգոց, երգաբանութիւն»<sup>50</sup>: Տարբերությունը մեկ տառի՝ ու-ի մեջ է, և այդ էլ կացուրդ բառից է: Վերջապես, կցորդը բերվում է նաև որպես կացուրդի հոմանիշ՝ «կացուրդ, Համդէս, պաշտօն»:

Ինչպես է ստեղծվել այս տարանշանակությունը: Կացրդական հանդեսում անհատական մասնակցությունը կամ ձայնակցությունը (պատարագում՝ «ի ձայն») կոչվել

Է կցորդութիւն։ Կացուրդը հանդեսն է կամ «բեմադրությունը», կցուրդը՝ խոսքային-երգային առանձին հատվածը, կցորդը՝ մասնակիցը (հմմտ. լատ. *partis* – մաս, անդլ. *part* – դեր)։ Եթե նոր բառերով խոսենք, պետք է ասենք պարտիա (օպերայում՝ դեր) և պարտնյոր (խաղակից, զրուցակից, ձայնակից)։

Խոսքը զրուցակցության և երգակցության մասին է, որը (եթե գարձյալ հիշենք «Պիտոյից գրքի» Մովսեսին վերագրվող հավելվածը) ճեմարանում երգաբանութիւն է և բանամարտ (դրամատիկական տրամախոսություն), ծիսակարգում՝ պաշտոնակից վիճակ՝ հաղորդակցություն միմյանց հետ և Աստծո հետ։ Այս ձայնակցության մեջ դրամատիկական հակադրություն չկա։ Սա հոգեոր կցորդություն է։ Այս իմաստն ունի Ներսես Լամբրոնացու խոսքը. «զմարդիկ ի կցորդութիւն օրհներգութեանն իւրեանց ժողովել»<sup>49</sup>։ Մոտենում ենք ձայնակցության անտիկ խորային իմաստին. սինոդոսի – միասին երգողներ, ուղեկիցներ։ Ուշ հելլենիզմի շրջանում այսպես են կոչվել դասական ողբերգություններ ներկայացնող թափառական գերասանական խմբերը։ Խաղակից ու ձայնակից լինելը (ոչ անպայման հակադրությամբ) բեմական պարտնյորության հնագույն ավանդությունն է, որ անցել է ճեմարան (ըստ «Պիտոյից գրքի» վկայության) և եկեղեցական ծիսակարգ, ինչպես ցույց է տալիս պատարագը։ Դերի և գերակատարի միասնականացում կամ գերաբաշխում՝ խոսքի բաժանում ըստ գործող անձանց դրամատիկական փունկցիաների հին հունական թատրոնում չի եղել, և հելլենիզմի շրջանի սինոդոսները, ինչպես վկայում են որոշ տվյալներ, պահպանել են այդ հին ավանդությունը։ Տեքստային-երգային հատվածները (միջնադարյան տերմինով՝ կցորդները, ժամանակակից օպերային տերմինով՝ պարտիաները) բաժանվել են երեք գերասանի ու խմբի (խորոս) միջն ոչ ըստ պերսոնաժների (պերսոնաժի ըմբոնումը գերասանի հետ չէր կապ-

վում), այլ ըստ արտիստական պաշտոնակարգի, որը բերում էր իր հետ քրմական նվիրակարգի (հիերարխիայի) հիշողությունը։ Անտիկ թատրոնում գործող անձանց փոխհարաբերությունները չեն դրսեորվել բեմական-գերասանական փոխհարաբերության տեսքով։ Ներկայացումը եղել է յուրահատուկ երաժշտական-դեկլամացիոն ձայնակցություն։ Յուրաքանչյուր սինոդոս «գործիքավորել» է պիեսը ըստ իր կատարողական հնարավորությունների ու ձայնական պաշտոնների (ամպլուաներ), ըստ կատարողի՝ սինոդոսում ունեցած զիրքի։ Հունական եկեղեցին ժառանգել է դրամատիկական ներկայացման այս ծիսային սկզբունքը, որի գրական արտահայտությունը մենք տեսանք Բարսեղ Կեսարացու Պատարագում։

Այսպիսով, կացուրդ, կցուրդ և կցուրդ բառերը հատկանշում են վաղ և դասական միջնադարի ծիսակարգը, որի հիմնական սկզբունքը երգակցությունն է ըստ աստիճանի ու պաշտոնի։

Բայց V դարից վկայված մի բառ էլ ունեն՝ բանագործութիւն, որի համար նոր հայկապյան բառարանի հեղինակներն ընտրել են հունարեն ծրամառություն (դրամատուրգիա) համարժեքը և բացատրել՝ «բանահիւսութիւն, ձեւացուցանել զբանն իբրև ի համդիսի, առած, առակ»<sup>50</sup>։ Դրամատուրգիան այստեղ ծցգրիտ համարժեք է այնքանով, որ բառի առաջին վկայությունները թարգմանական գրականության մեջ են (Ոսկեբերան)։ Բայց դա մոտավոր է այնքանով, որքանով բանահյուսությունն ու առակն էլ են բանագործութիւն կոչվում։ Մոտավոր լինելն ունի իր պարզ պատճառը։ Թրակացու երկի մեկնություններում, նկատված բան է, դրամատիկականի և էպիկականի տարբերակում չկա, ավելի ճիշտ՝ այդ տարբերակումն անվանական է։ Գրական սեռի հարցը, որ ծագում է Արհստոտելի «Պոետիկայից», միջնադար չի անցել։ Միջնադարյան գրագետի համար այդ հարցը

գոյություն չունի: Ճարտասանական մեկնության ու վերարտադրության նյութերն էլ չեն ենթարկված նման բաժանման: Առասպեկտավարժությունը ներառում է և դրամատիկականի (հունական միջավայրում), և էպիկականի ընթերցում, և պերսոնաժի կերպավորում (իհարկե՝ պայմանական ու ընդհանրացված, սիմվոլի ու դիմակի վերածված), և առակի այլաբանության կոնկրետացում, ըստ նմանողության (միմեսիս): Դրամատուրգիայի, որպես գրական սեռի, իմաստը բանագործութիւն բառում շատ մոտավոր է գիտակցված: Դրամայի ճարտասանական յուրացումը կամ դպրոցական ընթերցումը, ինչպես նաև եկեղեցական ծիսակարգի ոչ կերպարային-խաղային բնույթը բնականորեն չէին կարող հանգեցնել գործողությամբ արտահայտվելու այն պատկերացմանը, որի հիմքը անտիկ տեսարանակարգն էր:

Ժամանակին նկատել ենք, որ բանագործութիւն անունով գրական տեսակ միջնադարում վկայված չէ: Բայց նկատող է եղել, որ բառը կարող էր չվերաբերել գրական տեսակի, այլ նշանակել այն, ինչ ասված է բառարանում. «Ճեւացուցանել զբանն իբրև ի հանդիսի», այսինքն՝ խոսքի բեմական իրականացման եղանակ, վերարտադրություն, ներկայացում<sup>57</sup>: Տրամաբանական է գուցե, որ բանագործութիւնը գրական եղը չէ: Բայց ծիսական բառապաշարում էլ այն չկա, քերականական բառապաշարում էլ չկա: Քերականական մեկնություններից ոչ մեկում այս բառին չենք հանդիպում: Այս եղբը չի միասնականացվել: Կարգը միասնականացված եղը է և ունի նաև գեղարվեստական ստեղծագործություն իմաստ («...զամենայն ինչ ըստ կարգի (τάξις) առնէ»): Համենայն դեպս, եթե ծիսակարգն արվեստ է (և իհարկե արվեստ է), ծիսական բառապաշարում ընդունված է ոչ բանագործութիւն, այլ կարգ եղբը: Հնարավոր է, որ դպրոցական ճարտասանական արվեստում ընդունված ոչ բոլոր եղբերն են քերականորեն միասնականացվել:

Բանագործութիւնը դուրս է մնացել ճարտասանների տեսական բառապաշարից գուցե այն պատճառով, որ թրակացու երկում չկա դրամատուրգիա բառը: Բայց հունական մեկնություններում կա: Մեր բառը հասել է IX դար. գործածում է թովմա Արծունին, բայց նրա կոնտեքստն այն չի ասում, ինչ փնտրում ենք:

Այսպիսով կացուրդ և բանագործութիւն բառերը իրենց իմաստային հիմքում եղերգում են, միտում թատերակարգային մի հասկացության: Հակվում ենք ենթադրելու, որ առաջինը ծիսական տերմին է, երկրորդը՝ ճարտասանական, մեկը պաշտոնականացված, մյուսը՝ ոչ: Բայց երկուսն էլ ասում են, որ միջնադարում եղել է գրական տեքստի հանդեսի վերածելու եղանակ և եկեղեցում, և ճեմարանում: Ճարտասանական մեկնության նյութերը դպրոցում չեն ենթարկվել սեռային տարբերակման: Ուսումնական ամբիոնը չէր կարող մղել նման անհրաժեշտության, թեպես բանավոր խոսքի մշակման պահանջը ինքնին հանգեցնում էր տրամախոսության, միջնադարյան տերմինով ասած, դիմառնութեան գաղափարին: «Պիտոյից գիրքը» պարզ վկայում է այդ (<<...> զբարսն միանգամայն զդէմսն ստեղծանեմք»): Իսկ գրամատիկականի և էպիկականի տարբերությունը մենք ենք տեսնում, ենենելով հելլենիստ գրամատիկոսի տերմիններից ու նրանց հայերեն թարգմանությունից: Սա զուտ անվանական (նոմինալ), ոչ թե իրական (ռեալ) վիճակ է: Այսպես էլ դրամատուրգիայի, որպես գրական սեռի, իմաստը բանագործութիւն բառում հստակորեն դիտակցված չէ:

Այստեղ թերևս հաճելի է փնտրել բեմական գործողության գաղափարը: Բայց դա նոր գաղափար է՝ հաստատված արիստոտելյան սկզբունքի հեգելյան մեկնության հիմքի վրա, այն է՝ «գործողությունը որպես իրականացվող կամք»: Դրամա բառը միայն բեմական արվեստի նոր և նորագույն տեսությունների լույսի տակ

կարող է համատեղվել մաքուր գործողություն հասկացության հետ: Այստեղ իրավիճակն այլ է: Բանագործութիւն և բանահիւսութիւն բառերը պետք է ընդունենք որպես հոմանիշներ, որպես մեկ հասկացություն երկու պայմանաձևով, եթե իսկապես ուզում ենք մեր պատկերացումները չպարտադրել միջնադարյան գրագետներին: Դրամայի ճարտասանական յուրացումը, ինչպես նաև եկեղեցական ծիսակարգի ոչ կերպարային-խաղային բնույթը չէին կարող հանգեցնել գործողության այն պատկերացմանը, որ փնտրում ենք կամ ուզում ենք տեսնել մեր նպատակների տեսանկյունից: Զհեռանանք, ուրեմն, ճարտասանական «խաղի» հիպոկրիսիս-ենթադատութեան գաղափարից, գրական նյութի դպրոցական մեկնության եղանակն ըմբռնելու նպատակից: Սա նշանակում է ամենից առաջ գործել զբան՝ վերստեղծել խոսքը կամ նրա ներքին տարերքը ուսումնական սրահում և քարոզխոսության բեմում: Քերականները դրան ասում են ենթադատութիւն, «Պիտոյից գրքի» թարգմանիչը՝ դիմառնութիւն: Նրանք ելնում են իրենց հույն նախորդների հիպոկրիսիս, ոչ թե դրամա և դրամատուրգիա բառերից: Շատ նուրբ կետ է: Բյուզանդական հռետորական դպրոցում ստեղծվել է հռետորական հիպոկրիս գրական տեսակը, որ երբեք թատրոն չի մտել, մնացել է լսարանում, որպես դրամայի յուրահատուկ կամերային տիպ: Բանագործութիւն եղը մնում է ուշագրավ լեզվական փաստ, որի ստույգ նշանակյալը դեռ չի երևում, եթե իհարկե տարբեր է դիմառնությունից ու ենթադատությունից:

Դրամա կոչվող գրական տեսակի դերը թերևս այնքան էլ հական չէ ճարտասան-մեկնիչի համար, քանի որ նա ենթադատության նյութ է դարձնում նաև բարոյախոսական զրույցը, վիպական ու քնարական բանաստեղծությունը: Հույն քերականները Սոֆոկլեսին ու Հոմերոսին ճարտասանական լսարանում դնում էին նույն

հարթության վրա, ինչպես և հայ քերականները նույն պայմաններում էին ընթերցում առակը, առասպեկտ ու վիպական քերթվածը: Եթե ճարտասանական ընթերցման մեջ պատումի և տրամախոսության, մեկ ձայնի և երկու ձայնի խնդիրը երկրորդական է, ապա հռետորական հիպոկրիսը պետք է համարել միջին մի տեսակ (կամ սեռ): Այս տեսակի անունը հայ մատենագրության մեջ չենք գտնում: Հնարավոր է, որ դպրոցական բեմբասացությունը չի ստեղծել կամ չի որոշակիացրել ինքնուրույն գրական մի տեսակ, և ավանդվել է չմիասնականացված մի հասկացություն բանագործութիւն բառով: Կանգ ենք առնելու միասնական ու ընդհանրական մի պայմանաձևի վրա: Դա կարգն է, որ նոր հայկազյան բառարանի հեղինակները տալիս են մեծատառերով, որպես կացուրդ բառի ապահով բացատրություն: Կարգը միասնականացված եղը է և եկեղեցական-ծիսական, և գեղագիտական-փիլիսոփայական իմաստով. «արուեստ <...> զամենայն ինչ ըստ կարգի առնէ», — ասում է Դավիթ Անհաղթը, օգտվելով պլատոն-արիստոտելյան ռազմական կոմպոզիտունից: Վասկացությունն ունի վերսալ է, ուստի ծիսական բառապաշարում ընդունված է որպես ավելի տարողունակ: Բանագործութիւն ասվածը մասնակի է և մոտ է կացրդականին: Մատենագրական որոշ վկայություններ (Գրիգոր Աստվածաբան, Հովհան Ռոկեբերան, Սամվել Կամրջաձորեցի, Թովմա Արծրունի) բանագործութիւնը մոտեցնում են բեմբասացութեան («Տօնական ճառք և բեմբասացութիւններ»), որի իմաստը և դպրոցական է, և մասամբ եկեղեցական: Ուսումնական երկույթ ակնարկող բառը մտել է գրականություն, ծառայել թարգմանական-գրքային ինչ-ինչ հասկացությունների, բայց չի դարձել ոչ քերականական, ոչ էլ ծիսական միասնականացված եղը: Դրանով էլ բանագործութիւնը եղը չէ, այլ մի հոմանիշ:

Այսպիսով, կացուրդ և բանագործութիւն բառերը

եղերվում են առարկայական վերաբերության սահման-ներում և միտում քեմական մի հասկացության: Առաջինը սակայն որոշակիորեն ծիսական տերմին է, երկրորդը՝ ճարտասանական, մեկը պաշտոնականացված, մյուսը ոչ: Երկուսն էլ ասում են, որ միջնադարում եղել է գրական տեքստը հանդեսի վերածելու եղանակ և եկեղեցում, և ճեմարանում: Եկեղեցական հանդեսի դրամատուրգիական և թատերային պատկերը գիտենք, ճեմարանական հանդեսինը ոչ, բայց նրանց տեսությունն ընդհանուր է քերականական մեկնություններում:

Գրիգոր Մագիստրոսը հուշում է պատարագից ու ժամերգությունից անկախ հանդեսների գոյությունը (իհարկե, դարձյալ կրոնական բովանդակությամբ ու նպատակով): Ի՞նչ հանդեսներ են եղել դրանք: Միստերիալ ներկայացումնե՞ր: Եկեղեցո՞ւ կազմակերպած, թե՞ այլ միջավայրում ստեղծված: Մագիստրոսի այն թղթում ժԱ, որ ուղղված է թոնդրակեցիների դեմ, գործածվում են վարդապետութիւն, ճեմարան, դավանութիւն բառերը: Եկեղեցուց ու ճեմարանից բացի այլ մշակութային կազմակերպություն մեզ հայտնի չէ, դատում ենք միայն բառերի, տեքստերի, լավագույն դեպքում եկեղեցու ծիսական ավանդությունների հիման վրա: Գրական վկայություններն ավելի ճիշտ կողմնորոշիչներ են, քան հայ եկեղեցական ծիսակարգի մեզ հասած պատկերները, որոնք աղավաղված ու քայլայված են: Մեզ մնում են միայն ծիսական բնագրերը: Բայց դրամատուրգիական նշանները բավական չեն ծիսակարգի բնմական-թատերային պատկերն ստեղծելու համար, մանավանդ, որ դրանք չեն թելադրում գործողության տեսանելի վիճակներ: Բնմասացությունը հնում քանի անձով է ներկայացվել, հայտնի չէ. տեքստերում չի երեսում մասնակիցների քանակը և իսկապես կարող է չերևալ: Եթե էսքիլոսի ու Սոֆոլկեսի ողբերգություններում գործող անձանց թիվը (հինգից յոթ) կապ չունի դեմքերի անուններից խոսող

հիպոկրիտեսների թվի հետ, որը չի եղել երեքից ավել (չհաշված խորհատիսների խումբը), եթե այնուեղ մեկ դերասանը կարող էր ներկայանալ երկու-երեք դերով, առանց քրմական հանդերձը փոխելու, պարզ է, թե այս դեպքում, երբ աղոթքը կարդացվում է երկու ձայնով ու խմբերգով, կամ՝ երկու անձի (Քրիստոս և Մարիամ) երգային-ուշիտատիվ տրամախոսությունը մեկ ձայնով, որքան դժվար է պատկերացնել մեր փնտրած կացրդականի ու բեմբասացության թատերային արտաքին կերպը: Կա մի բան, որ մեզանից ու մեր ըմբռնումից շատ հեռու է, մի բան, որի վկայությունը միայն անվանական է: Պատրաստի համեմատականներն ուրիշ աշխարհում են՝ XIV–XIV դարերի արևմտաեվրոպական կաթոլիկական եկեղեցում, Արևմուտքի քաղաքային-բյուրգերական միջավայրում: Բայց արդյո՞ք դա համեմատական է, երբ խոսքը վերաբերում է հայոց միաբնակ եկեղեցուն:

Նայենք պատմական տրամաբանությանը: Բոլոր միստերիաները հիմնված են (որպես բնմական համակարգ և տիեզերքի մոդել) Պատարագամատույցի վրա: Պատարագամատույցն ամենանախնականն է, որպես դրամատուրգիական անտիկ ձևի քրիստոնեացված պատկեր, միստերիալ թատրոնի ընդհանրացված, թատերական հին համակարգերից դուրս բերված մոդել և այս է մեր կողմնորոշիչը դրամայի միջնադարյան ձևերի որոնումներում:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱԿԱՆ ԶԵՎԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Թատերական տարրի առկայությունն ավետարանների էջերում պատմական հիմք ունի: Պատմությունը «խաղցել» է մի մեծ միստերիա, արյունալի ողբերգություն, ուր քանից զոհվել է Քրիստոս ի գեմս բազում մարտիրոսների: Հռոմեական պրոսքհնիումը սիմվոլացիոն է թատրոնի ու Ավետարանի՝ որպես միստերիալ մի հին խորհրդի միասնությունը: Այդ պատմական հիշողության լույսի ներքո Քրիստոսի կյանքի ու սքանչելագործությունների տեսարանաշարքի վերածումը գրքում, երեմն հռոմեական սցենայի որոշակի ու ակնհայտ տարրերով, դառնում է հասկանալի<sup>1</sup>: Ավետարանն, այսպիսով, մի մեծ, խորհրդապաշտական դրամայի անուղղակի անդրադարձն է: Ուզում ենք ենթադրել, որ արևմտաեվրոպական հոգեկոր դրամային նախորդող երեսույթներ մեզանում եղել են կացուրդ և կացրդական անուններով, որպես կրոնական ավանդությունը և հոգեոր գաղափարները ներկա ժամանակով («կացրդական յաղագս ներկային գոյանայ») հաղորդելու միջոց: Դրանք, ենթադրում ենք, չպետք է լինեն այնքան կերպարային ու առարկայական, ինչպես ուշ միջնադարյան Եվրոպայում:

Կարող էին տրամախոսությամբ բանագործվել տեսարաններ, կարդացվել ու երգվել աղոթքներ, կամ գուցե խևկապես հրապարակային տաղավարներում կարող էր դրվագ առ դրվագ, պայմանականորեն անցկացվել Քրիստոսի սքանչելագործությունների շարքը տեղից տեղ՝ մի տաղավարից մյուսը, դամպարների լույսով, քշոց ու ծնծղայով, խունկ ծխելով, շարականներ ու կցուրդներ երգելով: Երեակայական ու հավանական է այս պատկերը, եթե մանրանկարները համարենք ավետարանական գաղափարների անուղղակի ակնարկ: Նկարը կարող էր թերեւս մի ելակետ լինել, գրքային նշան, բայց ոչ երևույթի արտացոլում կամ արդյունք: Կա այստեղ մի հարաբերություն, որի պատմական հիմքը հասկանալի է, բայց անորոշ է մեզ համար նկարային ու բեմական պայմանաձևերի խնդիրը: Որտեղից է ի վերջո բացվում եկեղեցական թատրոնի դուռը՝ ա՞յս, թե՞ այն: Գրիգոր Մագիստրոսի վկայությունը մնում է անտարակուսելի: Նա բերում է ոչ թե գրքային հիշողություն, այլ իր ժամանակի կոնկրետ փաստ, որի մանրամասները վերականգնելու հնարավորություն առաջին չունենք:

Մեր երեակայած կացրդական տոնախմբություններում որոշակիորեն բացառվում է մեկ հանդամանք՝ Քրիստոսի հայտնվելը, նրա մարդկային, կենդանի վերաբրադրությունն ի տես հասարակության: Կացրդական տոնում չէր կարող պաշտոնական պատարագին հակառակ մի բան ներկայացվել: Հայոց միաբնակ եկեղեցին չէր կարող թույլ տալ տրանսցենդենտ գաղափարի կենդանի մարդկայնացում: Մարդկություննը հազարամյակի վերջում պատրաստվում էր Աստծո որդու երկրորդ գալստյան. եկեղեցիներ ու մատուռներ էին կառուցվում, զոհողություններ ու նվիրատվություններ էին արվում, օրավուր ածում էր անապատականների դասը, փրկության սպասող ֆանատիկոսները քաշվում էին վայրերն ու մենաստանները: Կյանքի այս պայմաններում թյուրի-

մացության մեջ գցել ամբոխին Քրիստոսի կեղծ հայտնությա՞մբ... Միջնադարի մարդը կրոնական խորհուրդներն ընդունում էր որպես ուսալություն, նույնացնում էր առարկան, անունը, նշանը, այլաբանությունը և տեսնում էր Աստծո պատկերը հաղորդության խորհրդում: Քրիստոսը հառնում էր պատարագում որպես անդրանցյալ (տրանսցենզուս), և ոչ մի անհրաժեշտություն չկար եղծելու այդ գաղափարը:

Կրոնական տոննը, ինչպես էլ այն անվանենք՝ կացուրդ, թե միստերիա, ինչպես էլ կոչենք խոսքային-միստերիալ ներկայացում՝ բանագործութիւն, թե տօնական բանք, թատերային է և շատ ուշագրավ X-XI դարերի Հայաստանում, երբ եկրոպական աշխարհում դեռ չկար միստերիալ թատրոնը:

### ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՅՈՒ ԿԱՅՐԴԱԿԱՆԸ

«Բարեբանութիւն ներբողական գովութեամբ ի Համբարձումն տեառն Յիսուսի Քրիստոսի յերկինս»: Այսպես է կոչվում Ներսես Լամբրոնացու ճարտասանական քերթվածը, Աբեղյանի տված անվանումով՝ «Համբարձման ներբողեան»: Սա գրական ինքնատիպ մի փաստ է ծիսական գրականությունից ելնող, ըստ հորինվածքի դրամատիկական, արտաքին ձևում՝ ոիթմական արձակ, որին պայմանականորեն տալիս ենք կացրդական անունը: Գուցե և անվանենք տօնական բանք: Եթե լիթուրգիական ցիկլով կողմնորոշվենք, Լամբրոնացու այս ներբողական ճառը պետք է համարենք «Աստվածածնի ողբի» սյուժետային շարունակությունը և, ըստ բնույթի, գուցե անցում ծեսից գեպի դրամա: Բոլոր գեպքերում ակներեւ է ծիսական թեմայի դրամատուրգիական ազատ մեկնությունը:

Բայց XII դարի հեղինակից դրամա պահանջելուց

առաջ նկատի առնենք, թե քանի՞ դրամա կար գրված (կամ քանի՞ մն է մեզ հայտնի) նրա ժամանակ, և ի՞նչ էր նշանակում այդ ժամանակը մեր պատմության համար:

XII դարից հասած հոգեսոր դրամաների քանակը, ըստ հայտնի ուսումնասիրությունների, շատ քիչ է: Առաջինը բյուզանդացի անանուն հեղինակի «Զարչարվող Քրիստոսը» ողբերգությունն է՝ բանաբաղություն Եվրիպիդեսից ու Ավետարանից, իր զուգահեռը չունեցող, միակ ու մեկուսացած, տարապայման ձեւերի հարակցում, որի հեռավոր թիկունքում ատտիկյան դրամայի ճարտասանական մեկնությունն է: Դրամայի և ավետարանական հատվածների ձեւական հարակցումը քրիստոնեական գրականության մեջ կանխվել է Բարսեղ Կեսարացու պատարագով: Բայց իրողություն է, որ Քրիստոսին դրամայի հերոս ներկայացնելու միտումը հասել է XII դար: Դա կարող էր լինել ոչ ծիսական, այլ թերևս ուսումնական անհրաժեշտությամբ: Ի տարբերություն պատարագի, գաղափարն այստեղ անձնավորված է: Ներկայանում է Քրիստոսը որպես գեմք: Դա տեսնում ենք նաև XII դարի Փրանսիացի անանուն մի հեղինակի «Փրկչի հարությունը» դրամայում, որից հասել է մի քանի էջ: Այս և նման գործերը հայտնի են և դարձել են գրեստումատիկական նմուշներ:

Այսպիսով, Լամբրոնացու ժամանակից հայտնի է Քրիստոսի թեման շոշափող երկու դրամա: Ինչ վերաբերում է միստերիայի գաղափարին, ապա դրա իրականացումը տեսնում ենք երեք պիեսներում: Ալեքսեյ Վեսելովսկին հիշատակում է Աբելյարի աշակերտ Գիլարիուսի «Սուրբ Նիկողայոս» միրակլը: Դրա կողքին է Փրանսիացի անանուն մի հեղինակի «Ադամի տեսարանը»՝ կատարելապես մշակված չափածո դրամա: Դարավերջին՝ 1200 թվին հրապարակ է եկել ժամանակակից «Սուրբ Նիկողայոսի հրաշքը» միրակլի դասական օրի-

նակներից մեկը: Նույն շրջանում, թերեւս փոքր-ինչ ուշ Անգլիայում գտնում ենք «Սուրբ Կատարինե», իսպանիայում «Երեք մողեր» անանուն հոգեոր դրամաները: Պարզ երևում է, որ Եվրոպայում հոգեոր դրաման կազմավորվում է XII դարում: Դրա մշակութային միջավայրը եկեղեցին ու դպրոցն էին, դրական ակունքը՝ լիթուրգիական դրաման (IX դ.)<sup>2</sup>: Աշխարհիկացում բացարձակ իմաստով տեղի չի ունենում, այլ խախտվում է ծիսական կանոնը, և ստեղծվում է մի բան պաշտոնական ծիսակարգից դուրս:

Լամբրոնացու «Համբարձման ներբողեանը» պատմականորեն վերաբերում է այս շրջանին և համընկնում է Հայ միջնադարյան քաղաքային կյանքի ծաղկուն շրջաններից մեկին, որն իր խորքում ուներ նաև կրոնաքաղաքական դրամատիզմ:

Կիլիկյան թագավորության ծաղկումը (XII–XIII դդ.) ստեղծում էր քաղաքական, հոգեոր, տնտեսական, դասային-սոցիալական այն պատկերը, որին ասում ենք դասական միջնադար և միջնադարյան քաղաքակրթություն: Արևմուտքում սկսվել էր եկեղեցու տնտեսական ու քաղաքական հզորացման, ուղղմա-վանական միաբանությունների, ասպետների ու տրուբադուրների դարը: Կիլիկյան անմիջական հարեւանն էր, դաշնակիցն ու մրցակիցը խաչակրաց կոմսությունների ու թագավորությունների: Նրա ուղղմական-պետական-իրավական դիմագիծը տարբեր էր Հայոց-ավանդականից, և հոգեոր խորքը՝ ազգային: Քաղաքային կյանքը դառնում էր պերճաշուք, հոգեոր-մշակութային և գեղարվեստական ձգտումներն ստանում էին նոր բովանդակություն, որի հեռանկարը շատ լուսավոր էր երևում: Պատմության տրամաբանությունը մեզ հաղորդակից էր դարձնելու վերածնվող դասականությանը, բայց կար նաև ուրիշ մի տրամաբանություն՝ արևելյան քամին: Կիլիկյան թագավորությունն ընկավ (1375), երբ Արևմուտքում սկիզբ

էր առնելու ռենեսանսյան հումանիզմը: Մեզ մնում է այդ չիրականացած հեռանկարը տեսնել Կիլիկյան Հայաստանի արվեստում, մասնավորապես մանրանկարչության մեջ, նաև կացրդական տոնախմբություններում:

Հայ հոգեորական-մտավորականի հունասիրությունը, որ Հին ու ամուր ավանդություն էր, Կիլիկիայում վերածում է արևմտասիրության: Մագում է եկեղեցիների միության խնդիրը: Դրա ջատագովներից էր Ներսես Լամբրոնացին: «Ուսումնասիրելով օտարների մեջ ափրող եկեղեցական կարգ ու սարքը, – գրում է Օրմանյանը, – Լամբրոնացին սկսում է սիրահարվել ուրիշների մոտ տեսածին»<sup>3</sup>: Բացատրությունը թեպետ խորը չէ, բայց էական է: Լամբրոնացին ծիսակարգային նորամուծություններ է անում, որոնք, ինչպես հայտնի է, դգոհությունն են առաջ բերում արևելահայ վանական միջավայրում: Այդ նորամուծությունների առարկայական պատկերը մեզ հայտնի չէ, բայց «Համբարձման ներբողեանը» փորձում ենք կարդալ այդ լույսի տակ:

Լամբրոնացու ներբողական-դրամատիկական ճառը կամ քերթվածը չափազանց պատկերավոր ու դինամիկ է ծիսային լինելու համար, թեպետ բովանդակությունը համապատասխան է որոշակի ծիսակարգի: Ճարտասանական խոսքի ամենաբազմազան եղանակներում, որ գործադրում է հեղինակը, գերակշռում են դրամատիկական տարրերը՝ դիմում, կոչ, հեղնանք, ձայնարկություն, հարց, հիացում, և ըստ այդմ էլ «Համբարձման ներբողեանի» տոնը հրապարակային, հանդիսավոր ու թատերային է: Հանդիսավորությունը, կիրքը և հոետորական-տոնային երանգների բազմազանությունը համախոս են բյուզանդական հիմներին ու ասորական սողիտաներին<sup>4</sup>, բայց Լամբրոնացու քերթվածը շատ տարբեր մի բան է՝ ճարտասանական ոճի և միստերիալ տրամադրության համատեղում, որի ենթադրվող կամ «բեմադրական»

Հանգամանքները ծիսային են: Լամբրոնացին գուցե և լատինական եկեղեցու արարողությունների թատերայնության ու կերպարայնության տպավորության տակ է: Բայց նրա դրամատիկական ճառը կրքու է և դրանով տարբեր լատինական լիթուրգիայից: Իսկ ինչո՞վ է նման: Արեւմտյան եկեղեցիներում լիթուրգիական ցիկլերը մշակվել են տրամախոսությունների հավելումով, որոշ գեղքերում՝ կերպարայնության ու կոնկրետության ձգտումով, որի նշաններն այստեղ ակներեւ են: Արեւմտքում լիթուրգիական դրաման իսկապես մոտենում էր թատրոնի: «Համբարձման ներբողեանն» այս առումով բացառիկ մի գործ է, պատարագից շատ տարբեր իր հուզական-բանաստեղծական շեշտերով, բայց հիմքում անդրանցական, կրոնական գաղափարի ոչ առարկայակերպ, այլ տրանսցենդենտ իմաստավորումով: Մի նրբերանգ կա սակայն: Ի տարբերություն պատարագի և ի նմանություն լիթուրգիական դրամայի, այստեղ գեմքեր ու դերեր են ակնարկվում ու առանձնացվում, որպես կցուրդներ, և ներբողական ճառը միտում է դրամատիկական գործողության:

Լամբրոնացու քերթվածն, այս առումով, կարող ենք անվանել հոգեկոր դրամա:

Այս գործի դրամատիկական առանձնահատկությունների վրա ուշադրություն է հրավիրում Արեղյանը: «Ներսես Լամբրոնացին, – գրում է նա, – Ներբողյանի բուն մասի մեջ զվարթ եղանակով նկարագիրներ է անում, բեմ հանում գործող անձեր և խոսել տալիս միմյանց հետ: Հիսուսի մայրը, Պետրոս առաքյալը, մյուսները, ինքը Հիսուս, հրեշտակներն իրենց դասերով փոխ առ փոխ երեւան են գալիս ունկնդրի աչքի առաջ, հարցումներով դիմում իրար, պատասխանում, հիացմունք հայտնում, խոսում մեծ ցնծությամբ ու հավատով: Տեսարանները հետզհետե փոխվում են, ամեն ինչ շարժվում է, կարծես՝ մի վեպ է պատմվում դրամատիկ

ձեռվ. ամբողջը կազմում է մի մեծ գործողություն, արագ ու եռանդուն ընթացքով»<sup>5</sup>:

Արեղյանի տպավորությունն իհարկե պատահական չէ: Դրամա չորսներով միջնադարի դրականության մեջ, նա բնավ չի կասկածում այս գործի դրամատիկական լինելուն: Արեղյանն այստեղ խոսքի ու վիճակների բեմական իրականացում է տեսնում: «Ճառախոսը, – շարունակում է նա, – վառում է ունկնդիր ժամագորների երեակայությունը, նրանց տեսնել է տալիս իր պատմածը և լսել է տալիս գործող անձերի խոսքերը: Ահա թե ինչ է նրա արվեստի բնորոշ կողմը – ազդել ժամագորների երեակայության վրա, առաջ բերել ողերություն ու ցնծություն տոնի առթիվ»<sup>6</sup>:

Լամբրոնացու ծիսական քերթվածում կրոնական գաղափարն իրականանում է գեղարվեստորեն, կրոնական զգացմունքը ողեկոչվում է գեղարվեստական զգացմունքի միջոցով: Եթե եվրոպական լիթուրգիական դրամայի աշխարհիկացումը նրա տեսանելի ձևերի ընդգծումն ու հարստացումն էր, մարդկայինի կերպարային իրականացումը, ապա այստեղ տեսնում ենք բանաստեղծական հուզերի դրամա: «Համբարձման ներբողեանը» և պատարագային է, և դրամատիկական ու բեմական: Նախ դրամատիկական է հեղինակի դիրքը: Նա սկսում է իր խոսքը, եկեղեցու բեմը պատկերացնելով որպես Զիթենյաց լեռը, որտեղից բացվում է երկնքի ճանապարհը:

Ցնծա այսօր, հարսն ողջախոհ, եկեղեցի հեթանոսաց, ի պատիւ յիշատակի փեսային քո Քրիստոսի խորհրդոց: Պարեցէք, ով մամկունք առագաստի, այսօր ուրախութեամբ, զի հաստատեցաւ սիրտ ձեր ի համուշ փառաց նորա մեծութեան: Զուարճացեալ խրախոյս խնդութեան հարէք ի մէջ տաճարիս, դասապետք դասուց հանդիսի ժողովոյս:<sup>7</sup>

Հեղինակի այս վերջին խոսքն ընդունում ենք որպես բեմադրական վիճակի պայմանական հիշեցում. նախատեսում է տաճար և կացրդական վիճակ, ծիսականդասային կարգավորում՝ «ժողովրդոց, երախայից, ապաշխարողաց, սարկաւագաց, անագանոսաց, քահանայից» և այսպես մինչև նվիրապետության բարձր աստիճանը՝ բեմ, որտեղ կանգնած է ճառախոս-բեմբասաց եպիսկոպոսը (ըստ Աբեղյանի, ինքը՝ Լամբրոնացին), որպես նավապետ: Նա կոչ է անում ունկնդիրներին երևակայորեն բարձրանալ երկնքի սանդուղքներով դեպի ամենաբարձր կետը՝ Բարձրյալի աթոռը, որի աջ կողմում նստած է Ռոդին:

Այսօր եկայք բարձրացիք սլացեալ ընդ նմին թեօք հաւատոց ի փառս երկնաւորս, յոր մտեալ նստալ ընդ աջմէ հօր, առհաւատչեայ եւ ճանապարհ ամենեցուն ձեզ:

Նավը լողում է երկնային օվկիանոսով «թեօք հաւատոց», և նրա ճանապարհի արդելքներն ու խութերը ուղեղի երկրային կրքերն են: Ճառախոս-բեմբասացը խոստովանության հառաջանք է արձակում.

Այլ աւա՛ղ, զի հեղգութիւն մեր ծանրացեալ ի զբաղմանէ մարմնոյ...

Դրամատիկական զգացմունքի միջնադարյան պայմանաձևն է սա՝ հոգու բախումը հավատի թևերը կաշկանդող, մարդուն ներքև ձգող երկրային կրքերի հետ: Երկրորդ հակոտնյան երկնքի ճանապարհը փակող հրեշն է՝ Ակիլլայի, Քարիբդայի կամ Պոլիփեմի հավաքական մետամորֆոզը՝ Սատանան, որին անմիջապես մարտահրավեր է նետում նավապետը.

— Ո՞ւր ես, անզեղջդ ի չարիս բանսարկու. ո՞ւր դու զրպարտիչ դատախաղ. եկ այժմ կաց մեղ առընթեր, ոչ իբրեւ զսիրելի, այլ իբրեւ զթշնամի:

Պրոտագոնիստը (հիշենք այս բառի «առաջին մըցորդ» իմաստը) բեմ է հրավիրում իր ախոյանին, թե եկ, կանգնիր իմ դիմաց, քեզ ոչնչացնեմ: Սա իսկապես արտառոց նորամուծություն է, լիթուրգիկական կարգի աշխարհիկացման նշան: Ի՞նչ գործ ունի սատանան դասական պատարագում կամ ժամերգության մեջ, թեկուղ որպես երևակայիշ-չկերպավորվող դեմք: Այստեղ ախոյանի դաղափարը բացառված պետք է լիներ: Լամբրոնացուց բավական հետո՝ գրեթե մեկ հարյուրամյակ անց եվրոպական լիթուրգիկական դրամաներում (ավելի ուշ՝ միստիկաներում) հայտնվում են անդրաշխարհային հրեշներ և նույնիսկ ստանում զերասանական կերպավորում: Սա արդեն բեմական աշխարհիկացում է: Լամբրոնացուներբողյանում տեսնում ենք զուտ խոսքային աշխարհիկացում:

Ներբողյանի առաջին մասը կամ սկիզբը ծավալվում է ոչ տրամախոսությամբ, այլ մենախոսության ձեռով և իհարկե դինամիկ, հագեցված դրամատիկական զգացմունքներով, զրությունների տրանսցենդենտ-երևակայական պատկերացումով: Շարունակության մեջ բեմ է մտնում (թերեւ պայմանականորեն՝ որեէ դպիրի ընթերցումով) Աստվածամայրը ոչ թե ողբով, այլ արդեն միխթարված: Նա զիմում է Որդուն, որը հառնել է գերեզմանից ու կանգնել է Զիթենյաց լեռան վրա, երկնքի բացվող դռների առջև.

— Այսօր սիրտ իմ հաստատեցաւ, եւ բերամ իմ հարձակեցաւ ի վերայ թշնամեաց, ով անդրամիկ իմ եւ տէր, որ կափուցեալ տատանէր ի քո յանձառն խոնարհութենէ: Այսօր բարձրացուցեր զգլուխ մօր

քոյ փառօք, որդի իմ եւ աստուած, որ լուռթեամբ կորանայը ի բամբասելն զկուսութիւն իմ յուռթի բժժանօք: Այսօր պայծառացուցեր զդէմս իմ՝ նշուլից հետոց ոտինդ ճառապայթիւք, որ ի ժամ չարչարանաց քոց զգեցաւ սուզ՝ մթին ստուերօք...

**Աստվածամոր խոսքերն ընթերցողի առջև** (կամ կողքին) կանգնած է երգող սարկավագների խումբը (ոչ բեմում, այլ սրահում), որ ներկայացնում է հրեշտակների դասը: Մարիամը դիմում է հոգեպես ներկա Պետրոս առաքյալին, կոչ անելով Հաղորդակցվել ի պարս հրեշտակաց և իր ցնծությանը.

— Ով Պետրէ, ընդէ՞ր լուս. ահա հրեշտակք ակումբ առեալ եղանակին շուրջ զվարդապետան քո օրհնութիւնս. առ զգունդ քո եւ խառնեա ի պարս նոցա, երգակցեա, տալով օրհնութիւն այնմ՝ որ օրհնեաց զերկիրս գալստեամբ իւրով, եւ պայծառացոյց զերկինս ընթացիւք իւրովք...

**Առաքյալների դասը,** որ տեսարան է մտնում ոչ անմիջականորեն, այլ պրոտագոնիստի պատմողական խոսքով, սթափված ու հրացած է և ամոթիսած: Նրանց են դիմում երկու հրեշտակներ: Խումբը բաժանվում է երկու մասի, և սկսվում է խմբերգային տրամախոսություն հրեշտակների ու առաքյալների դասի միջև:

— Արդ գալիլեացիք, — ասում են հրեշտակները, — այժմ զի՞ կայք հայեցեալ ընդ երկինս անջրպետութեամբ ամպոյդ որոշեալք ի սիրելւոյն: Այս Յիսուս որ վերացաւ ի ձենչ՝ սոյնպէս դարձեալ եկեսցէ: Արդ դարձիք սպասեցէք սորա կրկին դալստեամն...

— Եվ զինչ լիցուք աշակերտքս, — պատասխանում են առաքյալները, — յանկարծ բաժանեալք ի վարդա-

պետէն <...> Մեզ զի՞նչ տայք մխիթար, ով զուարթունք, ի արտմութեան եւ ի ցնծութեան միջի վարանեալ աշակերտացս. ցնծութիւն՝ զի տեսաք զնայնպիսի փառս ճոխացեալ, եւ տրտմութիւն՝ զի ստորեւ ի նմանէ եղաք աստ մնացեալ:

— Արք գալիլեացիք, — շարունակում է հրեշտակների խումբը, — մի հիմնայք, ցնծացէք, զի գայ համբարձեալս ի յերկիր, եւ պսակէ զամենեսեան զձեզ ի նորոգութիւն...

Եվ այսպես, դաս առ դաս՝ երկնային նվիրապետության աստիճաններով բարձրանում է Որդին դեպի Հոր աթոռը և առաջին ու միակ բարձրացողն է այդ ճանապարհով: Հետագայում այդ ուղին էր երկակայելու ֆլորենտացի Դանտեն, նրան առաջնորդելու էր իր լուսատու աստղը՝ Բետորիչեն, ու երկնային թագավորության յուրաքանչյուր հրեկում դիմադրելու և իր գիրկն էր առնելու լույսը: Լամբրոնացու կացրդականում Քրիստոսին դիմադրում են բարձրագույն դասի հրեշտակները, ապա ճանաչում և բողոքում.

— Տէր ամենակալ, մինչև ե՞րբ ոչ ողորմիս վերին երուսաղէմի, եւ քաղաքացն դրախտին, ուստի արտաքս ձգեցեր գերի զբնակիչն Աղամ...

**Հիսուսը պատասխանում է.**

— Փրկեաց զնոսա բազուկ իմ, եւ սրտմտութիւն իմ միայն զդէմ կալաւ:

**Ասում ու առաջ է անցնում և պատասխան տալիս վերին դասի հրեշտակներին:** Եվ խոսում է հպարտ ու հաղթական, ամենին ոչ նման Ավետարանի Հիսուսին:

— Ես եմ որ խօսիմ զարդարութիւն եւ իրաւունս  
փրկութեան.  
Ես եմ որ իրաւամքը եւ արդարութեամբ յաղթեցի  
եւ կոխան զթշնամին հավառակամարտ արարի.  
Ես եմ որ զգերեալ ազգ մարդկան փրկեցի,  
եւ դարձեալ զյոյս նոցին յերկինս ուղղեցի.  
Ես եմ որ զթշնամութիւն ի մարմին իմ սպանի,  
եւ խաղաղութիւն յերկինս եւ յերկրի արարի:

*Հողովածում* է դարձյալ «թշնամի» բառը, որ հասուկ չէ ծիսական գրականության ոճին: Հիսուսի հպարտ տոնից հրեշտակները դառնում են հեզ ու հիացող.

— Եւ զի՞ կարմիր են, ասեն, պատմուճան քո եւ Հանդերձ քո՝ իբրեւ զհնանահարի լիոյ հնանի կոխելոյ <...> յայտնեա իշխանութեանց եւ պետութեանց երկնայնոց զնորոգ արուեստի քոյ իմաստու, Աստուած մեր եւ Տէր:

Ո՞ւր մնաց այլեւս իր աշակերտների ոտքերը լվացող խոնարհ վարդապետը, երբ հրեշտակների հիացումին պատասխանում է էլ ավելի հպարտ: Վերջապես նա մտել է իր թագավորության սահմանները, խոնարհվելու կարիք չունի և կանխում է երկնայինների հիացումը, ինչպես ֆեռդալն իր սպասավորների.

— Ոչ թէ որպէս դուք կարծէք, ասէ, աստուածային զօրութեամբ իմ, ով երկնաւորք...

Քրիստոսը կանգնած է հպարտ ու հաղթական և ընդգծում է իր գործած սքանչելիքի արժեքը, նսեմացնելով նսեմացնում իր առջև խոնարհվող երկնային ծառաների դերը.

— <...> ի գլուխ ածեալ զմարդկան փրկութիւն ուղղեցի, եւ ոչ թէ կառք եւ երիվարք հրեշտակացդինձ ի մարտս պաշտպանեցին <...> այլ փրկեաց միայն բազուկ իմ, եւ սրտմտութիւն արդարութեան մարմնոյս իմոյ միայնակ առանձինն կացեալ ընդդէմ՝ կոխեաց զթշնամին:

*Մարդկային* ու մարտական է այս հերոսը և շատ է վստահ իր բազկի զորությանը, հիացած ու սքանչացած իր տիեզերական հաղթանակով և մարդկայնորեն ոխակալ է՝ չի մոռանում իր պարտված թշնամուն: Ճիշտ է, մի անգամ ասում է «զին ոչ առի ի ձեռս զհրեղէն ձեր սուր», բայց հիշեցնում է իր մարդկային փորձությունները, Փիզիկական չարչարանքներն ու խաչ ելնելը և դրանով է արդարացնում ու հաստատում իր իշխանության իրավունքը.

<...> կամաւոր մահուամբ զմեղաց մարդկան զմուրհակն պատուցի. եւ այժմ ելամեմ նստել ընդ աջմէ հօր, բարեխօս եւ քահանայ հօտին իմոյ, զոր պատուական արեամբ իմով գնեցի:

Երկնայինները զարմանք են ապրում, որ նա մարդկային վիճակով հաղթել է սատանային և սկսում են «նոր եղանակաւ զերգս նմին վերերգել եւ զմարդիկ ի կցորդութիւն օրհներգութեամնն իւրեանց ժողովել»: Քրիստոսը տիեզերական պարերգության կենտրոնում է դյուցազնական կեցվածքով: Սա բանաստեղծական իրականացումն է կամ երևակայումը այն ահեղ դատավորի, որին հետագայում տեսնելու ենք Միքստինյան մատուի Միքելանջելոյի որմնանկարում: Զհեռանալով Լամբրոնացու ժամանակից, այստեղ կարող ենք տեսնել նաև ասպետական դարի հերոսին, որ ֆեռդալ-ասպետն է՝ դեպի Արևելք արշավող, սարակինոսներին ջարդող խաչակիրը.

մեկը հարյուրի դեմ՝ իր հոգու արդարությամբ ու բազի զորությամբ՝ նույն դարաշրջանի եվրոպական ասպետական վեպերի իդեալը, մինչ կհասներ Սերվանտեսի անհող հերոսին:

Լամբրոնացու քերթվածի բովանդակությունն ու գաղափարական միտումը որքան էլ կրոնական լինի (դա այդպես է), այնտեղ թափանցել է մարդկային կիրք, աշխարհիկ զգացմունքի լույս: Դա հեղինակի անհատականությունն է ծիսական բանաստեղծության շրջանակում: Դա ինքը քսաներկու տարեկանում եպիսկոպոս ձեռնադրված Լամբրոնացին է՝ անհանդուրժող, կրքոտ փիլիսոփան, եպիսկոպոսական պարեգոտով և ասպետական խիզախությամբ:

Այս երկը ունեցե՞լ է արդյոք բեմական-ծխասական իրականացում, թե՞ զուտ գրական-կարինետային մի փորձ է: Երկու գեպքում էլ արժեքը չի փոխվում: Բեմական իրականացում ստանար, թե ոչ, միևնույն է նախատեսվել է բեմի համար: Աբեղյանը (նրա հետ թերևս պետք է համաձայնել) բեմից անկախ չի պատկերացնում այս գործը և անհամեմատ բարձր է դնում նախորդ և Լամբրոնացու ժամանակի ճառային գրականությունից: Թվում է նաև՝ այստեղ պետք է տեսնենք Լամբրոնացու ծիսային նորամուծությունների բոլոր նշանները: Իսկ դրանք տանում են դեպի միստերիա, այս հասկացության թատերական իմաստով: Իր արտաքին կառուցվածքով և ներքին դրամատիզմով ներբողյանը, եթե Մագիստրոսի լեզվով խոսենք, «Պամպարափայլ կացըդական տօնախմբութիւն» է՝ իր տոնական-հաղթական տրամադրությամբ, ձայնակցումներով, երգակցություններով՝ կցուրդներով: Այստեղ համատեղված են ճարտասանությունն ու պատարագը և անդրանցական ձեռում գործում են դրամայի Արիստոտելի նշած վեց մասերը՝ առասպելը (միթոս), բնակորությունը, միտքը, խոսքը, երաժշտությունը, տեսարանը: Կերպարը (էթոս) սկզբում

ներկայանում է որպես տրանսցենզուս, վերջում մոտենում է բնավորության: Հեղինակի գեղարվեստական բնագդը առաջ է ընկել կրոնական զգացմունքից, և կրոնական գաղափարն էլ ստացել է բանաստեղծական-դրամատիկական լուծում: Հեղինակի վճիռը կրոնական է, արտահայտության կերպը բացարձակորեն գեղարվեստական:

«Համբարձման ներբողեանը» իր տիպով բացառիկ մի ստեղծագործություն է և բեմական ու դրամատիկ, եթե ենենք պատարագային բեմականությունից և դրամատիզմի միստերիալ ըմբռնումից:

Այստեղ գործում է հիպոկրիտիսը, բայց մարդկայինի տեսանելի առարկայացումը՝ միմեսիսը չի երևում: Դա այդպես էլ պետք է լիներ: Գեղարվեստական արտահայտության միջնադարյան սկզբունքը Լամբրոնացին բավական հստակ ձևակերպել է իր «Ատենաբանութեան» մեջ:

Զորօրինակ՝ թէ ախորժէ ոք գծագրութեամբ դեղոց պատկեր նկարագրել, զպէսպէս երանգս դեղոցն ի կիր ածէ. եւ ջանայ ուշիւ իմաստիցն զնա ի տիպ եւ ի հասակ եւ ի ձեւ կենդանեաց յօրինել, զի հաճելի եւ ցանկալի որպէս զկենդանի թուեսցի տեսողացն՝ անկենդանին: Իսկ մարդ կենդանի՝ որ կրի հոգւով մարմինն, ոչ այսոցիկ ճշգրտութեան երանգոց կարօտի՝ առ ի հրատարակել զիւրն կենդանութիւն. այլ բաւական է միայն հոգին ներդործող զշարժումն անդամոցն զայս հոչակել:<sup>8</sup>

Ներբողյանում շարժումը խոսքային դրամատիզմի մեջ է, և շարժման աղբյուրը Սուրբ Հոգին: Հետեաբար, «Ճեք և նիւթք մարմնականք՝ նմա առ ի՞նչ պիտոյանան»: Այս սկզբունքը հայտնի էր դեռ պատկերամարտության դարերից: Ճարտասանության տեսությունը

բնականորեն հետևում էր դրան: Լամբրոնացին հավանաբար ծանոթ էր և ինչպես կարող էր ծանոթ չլինել Եվստաթիոսի (XI դար) «Հիպոկրիսիսի մասին» արակտատին: Ճարտասանության հին (հելենիստական) եղանակները բյուզանդական կրթական միջավայրում VI-VIII դարում մերժվելուց հետո, ինչպես ցույց են տալիս Եվստաթիոսի դատողությունները, հետագայում դարձալ կյանքի էին կոչվել: Լամբրոնացու ժամանակակիցը անտիկ դրամատիկական գրականության հիմնական տեսակների՝ ողբերգության, կատակերգության և սատիրական դրամայի կողքին դնում է ճարտասանական ենթադատութիւն (Հռետորիկոս Հիպոկրիսիս) տեսակը և այնուամենայնիվ այն համոզման է, որ Հիպոկրիսիսը փոքր տեղ պետք է ունենա կամ առհասարակ տեղ չպետք է ունենա ճարտասանության մեջ: «Նա, ով նպատակ է դնում նկարագրել Հիպոկրիսիսի բնույթը, — գրում է Եվստաթիոսը, — ոչ միայն վարպետ, այլև շատ վատ (Հիպոկրիսիսի), նա պետք է վճռականորեն դատապարտի նրա կեղծությունը: Հիպոկրիսիսի գյուտը հնում ծառայում էր առաքինությանը և օգտավետ էր կենցաղում, իսկ ուշ ժամանակներում առաքինության դեմ թակարդ լարող և ստորամիտ դեերը դարձրել են այն վնասակար և հոգու համար կործանարար»<sup>9</sup>: Անտիկ ողբերգություններում Եվստաթիոսը տեսնում է սխրանքների ու առաքինությունների օրինակներ և հին դերասանների արվեստը համարում է «իմաստությունը զարդարող» գործ, դրվագում է հելենիզմի շրջանի դերասանների վարպետությունը, նրանց «միմեսիսի հայելատիպ ճշգրտությունը»: Բայց ճարտասանական արվեստում նա համարում է դա ավելորդ: Պատկերամարտության դարերի հայացքը չի մոռացվել, և բնավագատական չէ, որ Միքայել Խրթնաբանի (Փուելոս) ճարտասանական տրակտատում բերվում են ինտոնացիոն միջոցների բազմապիսի ու բազմազան երանգներ,

դրվում է անգամ հոգեբանական ճշմարտության պահանջ, բայց Հիպոկրիսիսի խնդիրը շրջանցվում է, ավելի ճիշտ՝ մեկնաբանվում է զարտուղի եղանակով: Հնչող խոսքի գիտականորեն մշակված համակարգ է սա, ոճերի նրբագույն տարբերակումներով, հոգեվիճակի ու խոսքի ներքին կապի խորը մեկնություններով: Այս ամենը գալիս է ուշ հելենիզմի շրջանի ճարտասանությունից և Հիպոկրիսիսի վաղ բյուզանդական տեսությունից, թեպետ Հիպոկրիսիս բառից հեղինակը կարծես թե խուսափում է: Դա նշանակություն չունի: Միքայել Խրթնաբանի դատողություններն ավելի հեռու են գնում Եվստաթիոսից և իրենց օբյեկտիվ արժեքով դերասանի արվեստի տեսություն են<sup>10</sup>:

Լամբրոնացու կացրդականը իր գրական մշակվածությամբ, առնային երանգներով, դարձումներով ու կոնտրաստներով հեռվից խոսում է ուշ հելենիստական ճարտասանական արվեստի հետ, որը Բյուզանդիայում մաքրվել էր Հոգեբանական շերտերից, միջնադարում զավկել ու կանոնացվել: Լամբրոնացու կացրդականը չի հուշում կերպավորման արտաքին ձևեր, թեպետ միտում է խաղային տարերքի, չի թելադրում առարկայական վիճակներ, բայց մղում է ներքին լարման: Լամբրոնացու երկը միստերիալ դրամա է, իհարկե, ենթադրում է ներքին հիպոկրիսիս, ոչ թե տեսարան և խաղ: Ուստի, ավելի հարմար է թվում գործածել այստեղ բառի հայերեն համարժեքը՝ ենթադատութիւն,

<...> Քանզի ընտրութեամբ մտացն քննէ եւ զգաւրութիւն ներքսակայ ծանուցանէ յընթեռնուլն, որ են ձևք բանին... (Հովհաննես Շործորեցի):

## ԿԱՏԱԿԵՐԳԱԿԱՆ ՄԻՐԱԿԼ

Կանոնական ավետարաններից հայտնի է «Անդամալույթի բժիշկումը» սքանչելիքը: Անդամալույթին մահճով բերում են Քրիստոսի մոտ, անդամալույթը բուժվում է Քրիստոսի «առ զմահիճս քո եւ գնա» սքանչելափործ խոսքով: Ջրույցն ավանդված է երեք ավետարաններով (*Մատթ.*, թ, 1–8, *Մարկ.*, թ, 3–12, *Ղուկ.*, ե, 17–27), ունի իր պարականոն տարբերակները, տրամախոսական մշակման է ենթարկվել *XII* դարի կաթոլիկական ճեմարաններում և ի վերջո գուրս եկել ճեմարաններից, վերածվել կատակերգության ու ֆարսի: Կատակերգությանը նյութ են տվել իհարկե պարականոնները: Դրանցից մեկում ոչ թե անդամալույթին են բերում Քրիստոսի մոտ, այլ Քրիստոսն է նրան հանդիպում երուսաղեմի փողոցներից մեկում, և բուժված անդամալույթը ներկայացնում է ծաղրածուական պանտոմիմ<sup>12</sup>: Սա արդեն թատրոն է, ոչ թե ուսումնական մեկնություն: Բայց մինչև թատրոնի վերածվելը մեկնությունն անցել է գրական մշակման ճանապարհ, վերածվել չարամիտ ու զվարթ զրույցի, որի հետքերը տեսնում ենք *XIII–XVII* դարերի հայերեն ձեռագրերով ավանդված տարբերակներում:

Խնդիրն այն է, թե Ավետարանից կամ պարականոններից առնված թեման գեղարվեստա-ոճական ինչ մեկնարանության է ենթարկվել, ինչ սեռի և ինչ ժանրի է վերածվել: «Աշխարհական եղանակաւ» պատմված կրոնական զրույցը դժվար է այլևս ծիսական համարել: Գեղարվեստա-ոճական նկարագրի փոփոխությունը խախտում է զրույցի նաև թեմատիկ-աշխարհայացքային հիմքը, մասնավանդ եթե կենսական-հոգեբանական տարր է մտնում, եթե զրույցունները հանդեցնում են բնավորությունների բացահայտման: Բայց կա զրույցի կամ թեմայի մշակման մեկ աստիճան ևս, որ պարականոնից էլ հեռանում է,

ենթարկվում հեղինակի անհատականությանը, ստանում կենսական լիքը, ենթարկվում խաղային տարերքի:

Ջրույցը մեզ հայտնի է երկու հիմնական տարբերակով. առաջինը ավանդված է *XIII* դարի կիլիկյան ճեռագրով (1297)<sup>13</sup>, երկրորդն անկախ ստեղծագործություն է, որտեղ զրույցը վերածվել է զրուցատրության ու խաղի: Այս տարբերակը, ինչպես կտեսնենք, ակնհայտորեն տարբեր է առաջինից և վկայված է *XIV–XVII* դարերի մի քանի օրինակումներով<sup>14</sup>:

Առաջինը՝ *XIII* դարի տարբերակը, թվում է, պարականոնն է, որ կա, համենայն դեպս մոտ է պարականոնին, եթե ոչ շարագրման եղանակով, գոնե ժամանակով: Սա վերագրված է Հովհան Ոսկերերանին. շատ անհավանական բան, ինչ-որ հին շփոթմունք, որ ասում է, թե գրական ավանդությունը շատ ավելի հին է, քան այս ճեռագիրը: Երեք՝ կանոնական ավետարանների ավանդությունը հայտնի է. ոմն անդամալույթի մահճով բերում են Քրիստոսի մոտ, Քրիստոսն ասում է «Թողեալ լիցին քեզ մեղք քո» (*Ղուկ.*, ե, 20): Այս խոսքի վրա անդամալույթը բուժվում է տեղն ու տեղը: Հստ Ոսկերերանին վերագրվող զրույցի, Քրիստոսն անդամալույթին հանդիպում է փողոցում, պատի տակ նստած, և նրանց մեջ տեղի է ունենում մի զրույց, որի ընթացքում Քրիստոսը ձեանում է «ի Հնդկաց» եկող բժիշկ, աշակերտ Աթանազինե բժշկի, մյուս կողմից էլ միամտություն է խաղում, դիտավորյալ շփոթում Աստծո որդու և նրա մարդարեի՝ Հովհաննես Մկրտչի ավետարանական ավանդությունները, շփոթեցնում է անդամալույթին, նրանից մեծ վարձ պահանջելով և այս կերպ ստուգում է նրա հոգու տեսողությունը, համոզվում, որ Փիղիկապես պատժվածը հոգով աներեր է, պատրաստ է զինվորագրվելու իր խաչին, և ասում է մոգական խոսքը՝ «առ զմահիճս քո եւ գնա»: Կույլը բացում է աչքերը, ոտքի է ելնում և գնում աշխարհով մեկ պատմելու, թե խոսել

Է Աստծո հետ «որպէս ընդ բարեկամի» և պատրաստ է քարոզելու Ավետարանը:

Այս զրույցը կարելի է անվանել մատչելի քարոզ: Տրամախոսությունը, որ ընդմիջարկված չէ ոչ մի կետում, ավետարանի ճշմարտությունն ըմբռնելի դարձնելու միջոց է, ճարտասանական եղանակ, որ հանգեցնում է իրադրության ու խաղի: Թեմայի հիմքում ոսկայն դրված է միթոլոգիական մի շատ հին պայմանաձև. մարդը կույր աչքերով հանդիպել է ճշմարտությանը և կոխվ է տալիս: Էդիպի առասպելը միջնադարում յուրացվել էր իրենեռու քրիստոնեական մեկնությամբ.

Արդ ընդունայն են եւ արդարեւ թշուառականք, որք <...> փախչին ի լուսոյն ճշմարտութենէ եւ կամ իբրեւ զողբերգական ըստ վիշապոտինն եւդիպութայ զանձինս կուրացուցանեն:<sup>14</sup>

Զրույցում գործում է ավետարանական այլաբանությունը, որը հետագա մշակողին մղել է կատակերգական և խաղային ստեղծաբանության: Սա արդեն զրույցի երկրորդ տարբերակին է XIV դարի ճառընտիրից հանվածը, որը, ինչպես նկատել է հրապարակողը՝ Ներսես Անդրիկյանը, «շատ նրբամիտ ու չարաճճի կտոր մըն է: Գրիչն իր բոլոր զգացումներն ու տարակույսները ճարտարությամբ Քրիստոսի բերան դրած է»<sup>15</sup>: Բանասերն այն մտքին է, որ իր գտած զրուցատրության հեղինակն ինքը գրիչն է՝ Ներսես արեղան Կիլիկիայի ծովեղրյա Կրակա գյուղաքաղաքից: Ներսես արեղային թերեւս համարենք պայմանական մի անուն, բայց ով էլ լինի այս կատակերգական զրույցի հեղինակը, գրական վառ անհատականություն է՝ օժտված դրամատուրգիական երևակայությամբ, խաղային իրադրությունների սուր զգացումով:

Երուսաղեմի փողոցներից մեկում, պատի տակ նստած է կույր ու կաթվածահար մուրացիկը և երեսունութ-

տարի սպասում է Աստծո ողորմությանը: Կարծես կրկնվում է Հին կտակարանի Հորի վիճակը, բայց այն տարբերությամբ, որ Աստծուց պատժվածը, ինչպես պարզվում է զրույցի ընթացքում, չի կարողացել կատարելապես հաշտ լինել իր Փիզիկական թշվառության հետ՝ աղոթում է սպառված համբերությամբ: Եվ ահա հայտնվում է անծանոթ մի անցորդ՝ երկնքից իջած Քրիստոսը և դավադիր հարցերով փորձում է մերկացնել նրա հոգին: Նա գիտի իր խաչի զորությունը և առաջին իսկ խոսքից բռնում է զրուցակցի հոգու թույլ լարը. կոչ է անում անվերջանալի համբերության:

Ասէ Յիսուս.

— Որ համբերէ իսպառ՝ նա կեցցէ:

Անդամալոյծն՝

— Մինչեւ ե՞րբ համբերեմ. առակ նշաւակի արար դիս Քրիստոս ամենայն ազգաց:

Ասէ Յիսուս.

— Զոր սիրէ տէր, խրատէ:

Անդամալոյծն ասէ.

— Զիս խրատեաց Քրիստոս, այս որ արժան եմ ես, բայց զքեզ կամիմ հարցանել, թէ ո՞վ ես դու, որ զայդ ամենայն ընդ իս ասես:

Ասէ Քրիստոս.

— Ես մարդ եմ, որպէս զքեզ...<sup>16</sup>

Համբերության կոչը՝ լսված անծանոթ ու անտարբեր մարդուց վրդովեցնում է կույրին, բայց նա զսպում է իրեն, երբ լսում է այդ մարդուց Ավետարանի ճշմարտությունը: Անծանոթը կանխում է նրան, ներկայանալով որպես «շատաշրջիկ մարդ, ճանապարհորդ», բայց շարունակում է հոգեբանական գրոհը: Զրույցի շարունակության մեջ էլ երեւում է, որ անդամալոյծը անհաշտ բնափորություն է, անհավասարակշիռ, և զրուցակցիցն էլ

Նրան մղում է հոգեկան մեղանչման: Նա անսպասելիութեն դցում է իր կարծես ամենափորձված կեռը՝ բուժման վարձ է պահանջում ոչինչ չունեցող մարդուց.

— Զի՞նչ տաս, որ բժշկեմ զքեզ:

Անդամալոյն ասէ.

— Այլ ո՞վ ոք բժշկէ զիս, բայց միայն աջն Քրիստոսի:

Փորձն անհետևանք է անցնում: Կույրը կարծես չի էլ նկատում անձանոթի բարոյական ոտնձգությունը: Քրիստոսը տեսնում է, որ մարդու հույսն այս աշխարհից չէ, և հարձակվում է հավատացյալի հավատի վրա՝ հեղնում է նրա քրիստոսասիրությունը.

— Երբ դու այնչափ յուսացեալ ես ի Քրիստոս, ընդ Է՞ր ոչ բժշկեաց զքեզ: Մի՞ թէ անհաւատ ես եւ չարաչար մեղուցեալ:

Յայնժամ բարկացաւ անդամալոյն եւ ասաց.

— Որո՞վք իւիք եմ մեղուցեալ, երբ գործիս մեղաց ոչ ունիմ. աչս կոյր է եւ ձեռքս թոյլ. ոտքս տկար եւ խոցովս ապականեալ. իմ բան եւ գործս այն է, որ գիշեր եւ ցորենկ զՔրիստոս աղաջեմ վասն շինութեան եւ խաղաղութեան աշխարհիս, եւ մանաւանդ վասն ողորմածացն իմոց եւ վասն ցաւոց իմոյ:

Ասէ Քրիստոս.

— Ապա ընդ Է՞ր այդպէս չարչարիս, եթէ չես մեղաւոր, զի Քրիստոս զարդարն սիրէ եւ զմեղաւորն ատէ, զարդարն բժշկէ եւ զմեղաւորն չարչարէ:

Առաքելական քարողի խոսքերը մի պահ սթափեցնում են անդամալույծին. Նա հարցնում է, թե արդյոք անձանոթը Քրիստոսի աշակերտներից չէ՝, բայց ստանում է հիասթափեցնող պատասխան.

Ոչ աշակերտաց նորա եմ եւ ոչ քարողութիւն նորա լուեալ եմ:

Քրիստոսը փակում է կույրի առջև բոլոր ուղիները դեպի իր անձը: Իսկ կույրը սկսում է նրան դաս տալ՝ ճարտար լեզվով, վարժ ու հմուտ պատմում է ավետարանը, հիշում է Քրիստոսի սքանչելագործությունների շարքը, անցնում հավատո հանգանակին.

— <...> խաչեցաւ, թաղեցաւ, եւ յարեաւ ի մեռելոց, համբարձաւ փառօք յերկինս եւ նստաւ ընդ աջմէ հօր ի բարձունս, եւ դալոց է ի դատել զկենդանիս եւ զմեռեալս եւ հատուցանել ըստ իւրաքանչիւր գործոց:

Նա ոգենորվում է ինչպես մի առաքյալ ու քարողիչ, բայց Քրիստոսին չեն կաշառում նրա աստվածաբանական գիտելիքները: Դա շատ քիչ է. անաստվածն ու հերձվածողն էլ կարող է շատ բան իմանալ: Գիտելիքն ու տաղանդը չէ, որ պետք է փրկեն մարդուն: Զարչարանքն էլ քիչ է. պետք է կույր հավատ, դատողություն ու տրամաբանություն չընդունող անձնազոհություն: Եվ Քրիստոսը ծալլում է անդամալույծի գիտելիքն ու ճարտարախոսությունը.

— Երբ դու էնց ճարտար ես, զքեզ ընդ Է՞ր ոչ առաքեաց Քրիստոս ի քարողութիւն Աւետարանին իւրոյ:

Անդամալոյն ասէ.

— Ինձ զցաւս մարմնոյս եւ զկուրութիւն աչացս վիճակեաց:

Ասէ Յիսուս.

— Դու զայդ արժես:

Այս անսպասելի ու դաժան վճիռը կարծես մտրակի

Նման գարկվում է կույրի ականջին: Կույրը բարկանում է, բայց չի չփոթվում, գտնում է պատասխանը.

— Ես յիրաւի այսոր արժան եմ, այլ դու ոչ մնաս առանց պատուհասի:

Անծանոթն ավելի ծանր հարված է հասցնում տառապյալին. ուզում է վերջնականապես քաշել հոգեկան մեղքի փոսը, բայց կույրը մնում է անխոցելի:

Ասէ Յիսուս.

— Այդ լեզուովդ ես որ այդ չարեացդ ես դիպել: Անդամալոյցն ասէ.

— Ես զիմս առեալ եմ ըստ արժանեաց իմոց, եւ քոյն գալոյ է ըստ արժանեաց քոց:

Ասէ Յիսուս.

— Դու ի սուտ խօսելն սովորեալ ես: Լեզուդ ճարպիկ է եւ երեսդ անամօթ, աչքդ չի տեսանել, որ երեսդ ամաչէ...

Նա ծաղրում է մարդու ֆիզիկական կուրությունը և շատ դաժան ակնարկով. ամոթխածության համար տեսողություն է պետք, իսկ կույրը զուրկ է ամոթից: Այս խոսքից անդամալույժն իրեն զգում է անօդնական ու դիմում է իր հասկացած ճշմարտությանը.

— Եղուկ թէ ճարպիկ մարդ ես դու, եւ հերձուածող քան զԱրիոս: Ի բաց դնա յինէն, զի Աստուած դատելոց է զքեզ ընդ սատանայի:

Ասէ Յիսուս.

— Ես գիտեմ եւ Աստուած, այդ չէ քեզ հոգս:

Ասել է, թե Աստծուն հանգիստ թող, տեղի-անտեղի Աստծո անունը բերան մի առ: Կույրն այլևս խոսել չի ուզում, բայց անծանոթը չի հեռանում, չոքել է նրա

շնչին: Մի կողմ է դրել Աստված, հավատ, խիղճ և հիմա էլ վարձ է պահանջում՝ փորձում է մարդու երկրային առաքինությունն ու համբերության չափը.

— <...> թէ կամիս ողջանակ՝ տուր ինձ, զոր ունիսդ եւ ես բժշկեմ զքեզ:

Անդամալոյցն.

— Զինչ կամիս առնուլ յինէն, զի ես ոչինչ ունիմ:

Ասէ Յիսուս.

— Գիտեմ, որ շատ ոսկի դեկան ծրաբեալ ունիս ի քուրձդ քո. զայդ յիս տուր՝ ողջացնեմ զքեզ ի չարաչար ցաւոցդ:

Անդամալոյցն.

— Քեզ հայնց կեանք, զինչ ինձ ոսկի դեկան կայ:

Ասէ Յիսուս.

— Թէ ոսկի չունիս դու, արծաթ տուր:

Անդամալոյցն.

— Ոչ, արծաթ չունիմ:

Ասէ Յիսուս.

— Ունիս, ունիս, բայց ագահ ես, տալ ոչ կամիս:

Անդամալոյցն ասէ.

— Ասացի, թէ քեզ հանց կեանք և աւուրք, զինչ ես արծաթ և ոսկի ունիմ:

Ասէ Յիսուս.

— Ապա ի՞նչ ունիս:

Անդամալոյցն.

— Քրիստոս է վկայ, չորս փողի պլիկ ունիմ և կտոր մի հաց և երկու լումայս, ահա առ զայն ի քեզ և բժշկեա զիս:

Անծանոթն արհամարհում է մուրացիկի կարողությունը, ծաղրում է նրա աղքատությունը և շատ դաժան. նսեմացնելով նսեմացնող համեմատություն է անում.

— Երբոր տանն աւել ածեն, երկու եւ երեք լուման եւ այլ աւելի հետ աւելին երթայ, եւ զկտոր հացն շանն ձգեն:

Անդամալոյն.

— Երկու լումայն գրաստու մի վարձ է, եւ զկտորն մուքերիկն (*խոհարարի օգնական – Հ.Հ.*) ուտէ:

**Անծանոթը շարունակում է սակարկել՝ երկու լուման շատ քիչ է յոթ ցավ բուժելու համար:** Անդամալույթը նրան անվանում է ագահ, ընչասեր և Հուղայի ազգական: Անծանոթը պատասխանում է, որ բոլոր մարդիկ մեկ ազգ են, և «իւրաքանչիւր ոք ըստ գործոց իւրոց առնու զհատուցումն»: Անդամալույթը համոզված է, որ մահից հետո լինելու է դրախտում «ի գոգն Արքահամու»: Բայց ստանում է այնպիսի մի պատասխան, որ միայն Քրիստոսը կարող էր տալ.

— Եւ աստ բարի կացեալ եմ եւ անդ կալոց եմ ի վեր քան զգոգն Արքահամու, եւ դու վասն չարեաց քոց աստ տանջիս եւ անդ տանջելոց ես:

Անդամալոյն.

— Դու զքեզ մեծ սիրելի գիտես Աստուծոյ, այլ զխաւարն աղջամդջին եւ զհուր գեհենին պատրաստեալ է զքեզ Քրիստոս:

Ասէ Քրիստոս.

— Ես զայն ոչ պաշտեմ, որ զիս ի խաւարն արտաքին եւ ի գուր գեհենին արկանէ:

**Միայն Քրիստոսը կարող է ասել,** թե չի պաշտում Քրիստոսին: Բայց նրա այս խոսքից անդամալույթը անհուսալիորեն շփոթվում է և աղաղակ է բարձրացնում.

— Ի զատ երթ եւ ի բաց դնա յինչն, այրդ ոտանակոտոր, զի ահա ուրացար զՔրիստոս, ի զատ

դնա յաղքատէս, այսօր հաներ զիս ի մուրալոյս զայդ ճոռոմ լեզուդ որ ունիս, ի դիւանի թագաւորաց խօսիս եւ աշխարհի աւեր ածես. երթ, գնա ի բաց ի տառապելոյս եւ գիտ քեզ զրուցնկեր ի հրապարակի քաղաքիս:

**Սա ամենազրամատիկական պահն է. մարմնով պատուհասվածը նաև բարոյական հարված է ստացել. նրան վիրավորել են, անարգել են հավատը:** Անդամալույթն այժմ սարսափում է մեղքից, սարսափում է Քրիստոսին ուրացող անծանոթի ներկայությունից, քանզի այս զրուցը նրան դնում է մեղավոր վիճակի մեջ: Բայց մարդը կանգնել է ու չի գնում և շարունակում է հեգնել.

— Հանց կու պարծիս դու ի Քրիստոս, որ թուի թէ Քրիստոսի հորեղբոր որդի ես, եւ կամ մեծ երախտաւոր Քրիստոսի: Դու ի՞նչ ես, որ քո երախտիքդ ինչ լինի մոտ ի Քրիստոս:

Անդամալոյն ասէ.

— Ես ի Քրիստոս աստուածն իմ հաւատացեալ եմ եւ ունիմ առ նա յոյս՝ գտանել ի նմանէ ողորմութիւն. թէեւ ես մեղաւոր եմ, նա քաւիչ մեղաց է. թէեւ ես կորուսեալ եմ, նա գտիչ կորուսելոց է. թէեւ ես անարդ եմ, այլ նա անարգամեծար է. թէեւ ես ապականեալ եմ, այլ նա նորոգող է, թէեւ ես մեռեալ եմ, նա կենսատու է:

**Անծանոթը վիրավորանքից ու մեղքի զգացումից փրկություն չտեսնելով, աղոթում է, բայց չի կարողանում քավել իր զայրույթը, չի կարողանում հոգին հանգստացնել և նորից դիմում է իր հավատն անարգողին.**

— <...> քեզ՝ որ ուրացողդ ես կայ եւ կմնայ հուր գեհենին, եւ խաւարն արտաքին, լալ աչաց եւ

կրծտել ատամանցն ի տարտարոսն ներքինն եւ ի սառնամանիքն անդնդայինն:

Ասէ Յիսուս.

— Ես ուրացող չեմ, այլ զճշմարիտն ասեմ: Բայց դու տգետ ես եւ անխմայ. թէ ի քեզ իմաստութիւն կայր կամ թէ գիտութիւն ունէիր, մինչեւ ի յայս դու բժշկած էիր: Ապա ոչ ի քեզ հաւատ կայր եւ ոչ յառաքեալքն զօրութիւն բժշկութեան:

Հիմա էլ առաքյալների անունն է շոշափվում, առաքյալների գործն է նսեմացվում: Անդամալույթը պատասխանում է, որ առաքյալները Քրիստոսի անունով ու զորությամբ էին գործում իրենց սքանչելիքները, ինչպես ցույց են տալիս ավետարանները և «Գործք առաքելոց»-ը: Անդամալույթը կարծես ուզում է ցույց տալ, որ ինքը տգետ չէ և միաժամանակ պաշտպանվում է սուրբ Քրքով: Իսկ Քրիստոսի համար՝ ի՞նչ ավետարան, ի՞նչ առաքյալներ և ի՞նչ ջերմեռանդություն ու աղոթք, որով ապրում է այս կույր ու հիվանդ մուրացկանը: Բայց նրան պետք է բուժել և դուրս բերել ի Քրիստոս խենթացյալ վիճակից: Այն անսպասելի խոսքը, որով Քրիստոսը ծաղրում է առաքյալների գործն ու վկայությունները, թվում է, իսկապես գրչին է պատկանում:

Ասէ Քրիստոս.

— Առաքեալքն պարապ եւ անբան մարդիկ էին. թուղթն շատ եւ թանաքն յոլով՝ զոր ինչ եւ կամեցան զայն գրեցին:

Այս խոսքն ամենաանսպասելին է անդամալույթի համար և հասցնում է նրան հուսահատության ամենավերջին կետին: Բայց նա Աստծուց չէ հուսահատ, այլ իր այս անտանելի վիճակից՝ պատուհաս դարձած անծանոթի համառությունից ու հանդգնությունից: Նրա միտքը

կանգ է առնում, լեզուն պապանձվում, և գիմադրելու ուժից ընկած, բռնաբարությամբ մեղքի մեջ քաշված մարդն արդեն ոչ թե աղաղակում է, այլ հառաչում ու ողոքում:

Անդամալոյծն ասէ.

— Զիարդ լուսացաւ ի վերայ մեր օրս այս, որ տեսի զանաշար զայրս այս հայհոյիչ: Ի բաց գնայինքն...

Ահա այս մարդկային խոսքը, հավատացյալի հոգու հառաչանքն էր ուզում լսել Քրիստոսը: Վերջապես մարդն արդարացրեց իրեն՝ ցույց տվեց, որ հավատն ավելի զորեղ է, քան սուրբ Գիրքը, ավելի խոր, քան միտքը, և անզարդ ու ծշմարիտ, ավելի համոզիչ, քան գրքով ու առաքյալների վկայություններով կրթված, ճարտարախոս լեզուն: Վերջապես Քրիստոսը գտնում է իր խաչին արժանի զինվորին և ասում իր մոգական խոսքը՝ «առ զմահիճու քո եւ գնա»: Մարդը բացում է աչքերը «ի խաւարէ ի լոյս», որտեղ է կանգնում առողջ ու ամուր, բայց՝ որտեղ՝ է անծանոթը, ո՞վ էր նա: Այն, ինչ տեսնում էր փակ աչքերով, աստվածային լույսն էր, իսկ հիմա տեսնում է աշխարհի լույսը: Իսկ որտեղ՝ է Աստված: Խոսում էր Հիսուսի հետ, բայց ո՞ւր է նա...

Միջնադարում երբեք գրված ամենագրամատիկական, ամենաբեմական, ամենախաղային գործերից մեկն է սա, և որտեղից է գալիս Ներսես աբեղայի դրամատուրգիկական մտածելակերպը: Նա կրթվել է կիլիկյան որևէ ճեմարանում, որտեղ անծանոթ չէին լատիներենին, և մատենադարաններն էլ XII-XIII դարերում հարստացել էին լատինական ամենատարբեր բնույթի գրական երկերի թարգմանություններով: Երկու եղբակացության կարելի է գալ: Ներսես աբեղան կամ ծանոթ էր լատիներենից թարգմանված միրակլների (գուցե և այս գործը թարգ-

մանական է), կամ ենում էր դպրոցական ճարտասանության թատերական եղանակներից, որոնց տեսական անդրագարձումը մենք արդեն գիտենք: Գրական փաստը երկու դեպքում էլ ուշագրավ է և համապատասխանում է մի կողմից միրակլի կանոնին՝ վիճակի թյուրիմացություն և հրաշք, մյուս կողմից՝ կատակերգության միջնադարյան ըմբռնումին ու քերականական կանոնին:

Թվում է, ավելորդ է հարց տալ՝ խաղացվել է, թե ոչ: Գուցե ավելի հարմար է հարցի մյուս եղանակը՝ նախատեսել է խաղ, թե ոչ: Սա բացարձակորեն նույն հարցն է, որ *XIX* դարում ծագել է երմանացի բանասերների մեջ Հրոտսվիթայի պիեսների առիթով: Այդ հարցին պատասխանելը շատ դժվար է, և վկայություններից առաջ վագելու անհրաժեշտություն չկա, բայց անկախ արտաքին նշաններից, մենք գործ ունենք կատարելապես դրամատուրգիական երկի հետ, որին կարելի է տալ ժանրային երկակի անվանում՝ կատակերգություն կամ կատակերգական միրակլ:

### ԱՌԱՔԵԼ ԲԱՂԻՇԵՑՈՒ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՔԵՐԹՎԱԾԸ

Ուշ միջնադարում գրված դրամատիկական բանաստեղծությունների շարքում առանձնանում են Առաքել Բաղիշեցու «*Ճաղ Յովասափու*» և «*Ճաղ աւետեաց*» դրամա հիշեցնող քերթվածները: Կա տեսակետ, որ դրանք դրամատիկական պեեմներ են, նույնիսկ դրամաներ: Եթե չընդունենք էլ, չենք կարող անարամարանական համարել այս ենթադրությունը: Հովասափի ավանդաբանական զրոյցը, որ բագում մշակումներ ունի Արեելքի ու Արեմուտքի գրականություններում, ուշ միջնադարում որպես դրամա խաղացվել է եվրոպական կաթոլիկական դպրոցներում, նաև Լեհաստանում, Ուկրաինայում ու Ռուսաստանում: Ավետման թեման մշակ-

### ԱՌԱՔԵԼ ԲԱՂԻՇԵՑՈՒ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՔԵՐԹՎԱԾԸ 149

վել է որպես լիթուրգիական դրամա և «Համբարձման» հետ միասին ներկայացվել է 1439 թվի Փլորենտյան ժողովում<sup>17</sup>: Այս թեմաների դրամատիկական մշակման ավանդությունը վաղ միջնադարյան է, թե ուշ, չենք փորձել վճռել, բայց տրամադիր ենք այդ իրողության լույսով կարդալու Բաղիշեցու «*Ճաղ աւետեաց*» քերթվածը:

Բաղիշեցու նախորդ գործի «*Յովասափու*» տաղի վերջում կա մի հիշեցում, թե գրչի խնդրանք, որ ուղղակիորեն ասում է, թե տաղը գրված է երգով ներկայացվելու համար. «Արդ աղաչեմ զձեղ, որք եղանակէք եւ քաղցրածայն լեզուաւ սիրով զայս երգէք...»<sup>18</sup>: Պատումը ներկայացնում է մեկը մյուսին ագուցված սյուժետային համաշափ դրվագների շղթա, որը չունի ամբողջացում՝ միասնական բարձրակետ (կուլմինանտ) և ավարտակետ՝ դրամատիկական այն վճիռը, որ տեսնում ենք բոլոր ժամանակների դրամաներում, ներառյալ միջնադարյան միրակլներն ու միստերիաները: Դերերի բաժանումը հստակ չէ. ենթադրվում են կցուրդներ: Ներկայացում չի պատկերացվում, և այդ պատկերացման համար չունենք որևէ համեմատական: Բայց փաստ է հեղինակի հիշեցումը (թեկուզ և գրչի խնդրանքը), որ նշանակում է, թե ժամանակին հասկանալի է եղել նմանատիպ քերթվածների երգային-երաժշտական վերարտադրությունը մեկից ավելի ձայններով, ինչպես հուշում է բնագրի ծավալն ու կառուցվածքը: Մեր միակ տիպարանական զուգահեռն այս գերւըում լիթուրգիական դրաման է: Բայց ո՞ւմ է ուղղված հեղինակի խնդրանքը, որտեղ էր երգվելու այս քերթվածը: Ժողովրդական երգիչներն ու թափառող գուսաններն իրենց երգերն ունեին և գրականությունից չեն ենում: Եկեղեցին էլ ուներ իր ծիսակարգը՝ կանոնական տեքստերով ու եղանակներով, «Յայսմաւուրց» ընթերցումներով, դավթում ներկայացվող լիթուրգիական ցիկլով: «Յովասափու» տաղը կիսաշխարհչիկ է և

չի պատկերացվում ոչ մի ծիսակարգում: Բայց ուղղված է ո՞ւմ, անգրագետ աշխարհականների<sup>18</sup>ն (նրանց մեջ հազվագետ էին գրագետները ուշ միջնադարում), թե՛ գրագետ եկեղեցականներին, երաժիշտ-եղանակողներին, որոնց գործունեության ասպարեզը, եթե եկեղեցին չէր, ապա գպրոցն ու ճեմարանն էր: Միայն այստեղ կարող էր իրականացվել ոչ ծիսակարգային, կրոնական կամ կիսաաշխարհիկ, երգային-տրամախոսական վերարտադրություն նախատեսող բանաստեղծությունը:

Հեղինակի հիշեցումն ավելի է պատշաճում իր մյուս քերթվածին, որ կոչվում է «Տաղ աւետեաց»: Այստեղ չափածոյի է վերածված երկու զրույց՝ «Հովակիմ և Աննա», և «Ավետում», որպես մեկը մյուսի շարունակություն՝ ավանդաբանական մեկ ցիկլից: Հեղինակի կամ գրչի հիշեցումը հիմք է տալիս նկատի առնելու թեմայի և արձակ, և չափածո մշակումները: Այդ հիմքն ավելի է հաստատվում Բաղիշեցու տաղի երկրորդ տարրերակով (որ գուցե և առաջինն է). «Տաղ բլբուլի և վարդի»: Ավետման գաղափարին այստեղ տրված է այլարանական մեկնություն: Սոխակի ու վարդի, որպես թե Գաբրիել հրեշտակապետի ու Աստվածամոր, զրույցը վերածված է երգային քառյակների: Սա բանաստեղծության այն տիպն է, որ տեսանք մեր շարադրանքի նախորդ հատվածում:

Բլբուլն ի վարդն ասաց.— Իմ բանիս լսէ,  
Որ քո սիրադ իմ սիրոյս այսպէս վկայէ.  
Ես ցող բերեմ յերկնից, որ զքեզ զարդարէ,  
Յայնժամ իմ սէրս եւ քոյդ միաբանեալ է:

Վարդն ի բլբուլն զայս պատասխան առնէ.  
— Վախեմ, թէ հետ ցօղոյն կայծակ իջանէ  
Եվ զիմ պայծառ տերես հրով այրեսցէ,  
Ծաղկանց ամենայնի նախատինք առնէ:<sup>19</sup>

Հրեշտակապետը խոսում է երկնային տիրոջ անունից, և նրա ընթացքն ու դիրքը հուշում են անմիջական սիրաբանություն, ասպետի այլաբանական խոստովանություն, երկնային կամքի խորհուրդ: Բացվում է մի հին խորհուրդ՝ սիրահարը որպես Աստծո դեսպան: Դարձյալ երկնքի ու երկրի հաշտեցման գաղափարն է՝ վարդի ու սոխակի միջնադարյան շատ տարրածված խորհրդանիշով: Նա այստեղ դարձյալ չի մոռանում հիշեցնել, որ գրել է երգային կատարման նկատառումով:

Զձեզ աղաչեմ՝ ով ոք բանիս հանդիպի,  
Եղանակէք սիրով, ձայնիւ բերկրալի.  
Յիշէք զիս եւ ասէք՝ Աստուած ողորմի,  
Եւ դուք արժան լինիք տեսոյն Յիսուսի:<sup>20</sup>

Այսպիսով, «Տաղ աւետեաց» քերթվածը կամ միջնադարյան պոեմը գրվել է որպես երաժշտական դրամա, միանգամայն անկախ խոսքի գրամատիկական կառուցման մեր պատկերացրած ձևերից: Տարակուսանք է առաջացնում երկու սյուժետային միավորների հարակցումը, որը, ինչպես նկատել է Հրապարակողը, թույլ կապ է, և խոսք կարող է լինել միայն գաղափարական միասնության մասին:

Ունկնդրի հայացքի առջե երկու ընտանեկան դրամաներ են, և երկու դեպքում էլ կնճիռը լուծվում է Տիրոջ հրեշտակի հայտնությամբ: Առաջինը՝ «Վասն Յովակիմայ եւ Աննայի» պարականոն զրույցը պայմանականորեն կարելի է ընդունել որպես հիմնական թեմայի նախերգանքը: Անզավակ Աննան կոծում է իր վիճակը և քառասուն օր ապաշխարում մինչ կզա Աստծո բանբերն ու կասի՝ «ով կին դու, լոււաւ Տէր աղաչանաց քոց...»: Ամուսինն էլ՝ Հովակիմը իր աղոթքի խորանը դրել է անապատում մինչ բանբերը կասի՝ «Յովակիմ, լոււաւ Տէր աղաչանաց քոց...»: Ու ծնվում է Մարիամ աստվածամայ-

Բը: Բուն դրաման՝ «Ավետումը» երկրորդ մասում է:  
Զըույցի սյուժեն ունի դրամայի բոլոր առանձնահատ-  
կությունները, իսկ տեքստը մշակված է չափածո քառ-  
յակներով, ըստ երգային տրամախոսության օրենքների՝  
փոխադարձ կցուրդների հաջորդականություն, ինչպես  
զուգերգ: Հրեշտակապետը հայտնվում է մարդկային  
կերպարանքով.

Միայն դու ընտրեցար ի յորդոց մարդկան  
Անտանելի լուսոյն արժան օթարսն:<sup>21</sup>

Շփոթված Մարիամը նրան ընդունում է որպես երկ-  
րային մի ծառայի և երկրային տրամաբանությամբ  
հարցնում է.

Ասէ, թէ.— Տէրն քո ի յո՞ր աշխարհ է,  
Կամ որո՞ւմ նահանդի իշխանաւոր է,  
Կամ ո՞րպէս զքեզ առ իս նա յուղարկեալ է  
Զի նա յինէն անտես եւ անծանօթ է:

Կարող է շատ պարզունակ թվալ հերոսուհու առօրե-  
ական հայացքը, նրա ողջամիտ պատասխանը, լույսով  
բեղմնավորվելու գաղափարը չըմբռնելը. «ո՞վ է տեսել  
զկոյսն ծնեալ ինքնագոյն»: Բայց միջնադարյան աստվա-  
ծաբան-բանաստեղծն անսխալ է գործադրում սիմվոլները  
և երկրային տրամաբանությունը մեկնում է բնության  
առարկայական նշանների միջոցով: Երկինք ու երկիր  
պիտի ամուսնանան, և երկու նախասկզբունքները պետք  
է հաստատվեն, պետք է մարմնանա Սուրբ հոգին մարդ-  
կային կերպարանքով՝ տառապելու համար որպես մարդ:  
Ուրեմն, չմոռանալով ավետարանական խորհրդակերպու-  
թյունը, բանաստեղծը մեկնում է այդ իր «անփորձ ի  
մարդկանէ» հերոսուհու անունից:

Արդ, ո՞ր արտ ետ ցորեան՝ առանց ցանելոյն,  
Կամ ո՞ր ծառ ետ պտուղ՝ առանց տնկելոյն,  
Արդ, ո՞ր որթ ետ ողկոյզ՝ առանց գործելոյն,  
Այդ չէ եղեալ երբէք ի ստեղծանելոյն:

Երկնայինի ու երկրայինի փոխհարաբերությունը բա-  
ցահայտվում է դժվար, իսկապես դրամատիկորեն: Ասպարեզ է բերգում Հովսեփի խանդը մարդկային ճշմա-  
րիտ տառապանքի տեսքով ու նշանակությամբ և ուս-  
լիստորեն:

Արդ, եմ տարակուսեալ ի յերկրի վերայ,  
Վասն է՞ր զքեզ թողի՝ և ի գործ ընթացայ,  
Արդ, ո՞վ եմուտ առ քեզ, զճմարիտն ասա,  
Կամ ո՞վ զքեզ խաբեաց, որ ես չիմացայ:

Այստեղ էլ Հովսեփը չի ըմբռնում Մարիամի երկրա-  
յին փաստարկները և շարունակում է իր դրամատիկա-  
կան արիան երգել.

Եթէ ի սուրբ հոգոյն ես դու յղացեալ,  
Ես չեմ արժան գործոյդ այդմ սպասաւոր կալ.  
Եւ թէ ի խարմանէ մարդկան ես փորձեալ,  
Ինձ չէ օրէն ծննդոց ծառայ կեալ:

Արդ, զայս կամիմ առնել, զոր իմ իսկ խորհեալ,  
Հանել զքեզ ի տանէս իմոյ ծածկաբար.  
Զի մի զիս նախատեն ով ոք զայս լուեալ,  
Ըստ օրինաց՝ վճիռ մահու ինձ հասեալ:

Այս կցուրդը (եթե երաժշտական-երգային վերաբառ-  
դրություն ենք պատկերացնում) ենթադրում է դրամա-  
տիկական լարվածություն, երկրային զգացմունքի պոե-  
տականացում: Սա դրամատիկական կումինանտն է, որ

կամ աղետի է միտում, կամ գուշակում է մարդկային կրքերը շիջող երկնային անձրև՝ քրիստոնեական քավություն։ Դա պետք է իրականանա մի նոր դիպվածով։ Դիպվածը կարող է ուշանալ (հիշենք Շեքսպիրի «Օթելոն») կամ ոչ, միևնույն է՝ երկինքը մոտենալու է երկրին։ Դիպվածը անտիկ դրամայի *deus ex machina*-ն է՝ Աստծո միջամտությունը, որ այստեղ ներկայանում է իր իմաստի բառացի ճշգրտությամբ, բայց առօրեականորեն ըմբռնելի եղանակով։ Ճշմարտությունը կարող է ապացուցել միայն առարկայական վկայությունը կամ ճշմարիտ վկան, որ երկնքում է։ Եվ ահա հրեշտակը նորից է Հայտնվում, բայց ոչ այնպես, ինչպես Հայտնվել էր Մարիամին։ Հովսեփը հրեշտակին տեսնում է երազում, և բարի լուրը (իսկապես՝ ապաթոս անգելոս) լույս է ծագեցնում տարակուսյալի հոգում։ Ծագում է արևը տանջալից գիշերվա ու բարի երազից հետո։ ծնվում է Հիսուս, երկրագում են մոգերը, երգում են հրեշտակները։

«Աւետեաց տաղի» դրամատուրգիան երաժշտական արտահայտություն է խնդրում։ տրամախոսությունը կառուցված է ոչ այնքան ըստ գեմքերի, որքան ըստ կցուրդների՝ բանաստեղծական-երգային միավորների։ Սա հիշեցնում է անտիկ թատրոնի դերաբաշխումը և տրամաբանական է, եթե նկատի առնենք պատարագը։ Թվում է՝ այստեղ պետք է լինեին անհատական ու խմբական հատվածներ, խմբերգային ու մենակատարային կցուրդների փոխհաջորդականություն։ Քերականական մեկնություններին նայելով պետք է թերես կարծել, որ երաժշտական վերարտադրություն նախատեսող այս կարգի քերթվածները կատարվել են «ի տաղս պարանցիկ երգոցն»՝ խոսքի ու խմբերգի տրամախոսական զուգորդումներով, այն է՝ «ասողին բառիւքն եւ ձայնիւն առնուլ, եւ ստորադրել, որ է ի ներքոյ դնել, կամ ըստ այլոց՝ պար առեալ երգել»<sup>22</sup>։

Տաղին եղանակն շարայրմար պիտի լինի, որ քաղցր գայ եւ են եւ էջն՝ ի տեղի եւ ուղղորդ, եւ զբան՝ չափաւոր ըստ չորք արուեստին, — ասում է Վարդան Արևելցին։— Եւ յորժամ բառն եւ եղանակն եւ միտքն եւ տամացն չափն ի յոճի լինին՝ նա ապա լինին տաղքն պատշաճագոյնք եւ դիպաւորք։<sup>23</sup>

Բաղիշեցու քերթվածները, անկախ նրանից՝ եղանակվել ու ներկայացվել են, թե ոչ, համապատասխան ու ներդաշնակ են երևում տաղի կանոնին։ Որոշակի կապ նշմարվում է դպրոցական ճարտասանության կանոնների և Բաղիշեցու վիպական-դրամատիկական բանաստեղծությունների միջև։

Ինչ լիթուրգիական դրամա է ներկայացվել 1439 թվի ֆլորենտյան ժողովում «Ավետում» անվան տակ, չգիտենք։ Զգիտենք Բաղիշեցու ժամանակներում գրված եվրոպական լիթուրգիական դրամաներից որևէ մեկի բանաստեղծական-երաժշտական պարտիտուրը, չունենք որևէ օտար կողմնորոշիչ։ Բաղիշեցու բանաստեղծական կառուցյը բավական նուրբ է ու հետաքրքիր, գեղարվեստական չափի գիտակցումով, պոեզիայի և ճարտասանության, երգի ու դրամայի գեղեցիկ համադրումով։ Եվ դա ունի իր տեսական հիմնավորումը քերական մեկնիչների դատողություններում վաղ միջնադարից մինչեւ ուշ միջնադար։ Իսկ եղանակվել ու ներկայացվել է արդյոք։ Դա կարեոր չէ. գրվել է ներկայացվելու համար։ Հայեկեցական ավանդությունը տեղեկություն չի պահել (կամ գուցե տեղեկություններն ուրիշ տեղ պետք է փնտրել) Բաղիշեցու քերթվածի եղանակվելու կամ ներկայացվելու մասին, թեպետ ավետման խորհուրդը հայտնի է ծիսակարգերից, և թեման էլ գրանկարչական բազում մեկնություններ ու տարբերակներ ունի<sup>24</sup>։

Եվ գարձյալ (մտադրված, թե անմտադիր) վերադառնում ենք մեր, արդեն կանխադրույթի ձև ստացած

ենթադրությանը։ Որտե՞ղ է լինելու դրամատիկական բանաստեղծության թատերական իրականացման կամ բեմականացման միջավայրը, եթե ոչ ճեմարանն ու վարդապետարանը։

«Աւետեաց տաղը», իր ձեւական արտահայտությամբ, թվում է երկրորդ մի աստիճան եկեղեցական թատրոնի և հոգեոր դրամայի ճանապարհին, տարբեր Լամբրոնացու «Համբարձման ներբողյանից», պակաս հուզական, պակաս դիմամիկ, բայց դրամատիկորեն ավելի կազմակերպված և ամենակարևորը՝ չափածու։ Բոլոր դեպքերում սա եկեղեցական պաշտոնական ծիսակարգից գուրս է (շատ կարեւոր հանգամանք) և հավանաբար նրան զուգընթաց երևույթ է։ Թերեւս ավելորդ չէ դիմել այստեղ մի չփաստարկված, բայց հիմնավոր երեացող կարծիքի։ «Միջին դարերում, — գրում է Կ. Մելիք-Օհանջանյանը, — եկեղեցական պաշտոնական ծիսակատարության զուգընթաց զարգացած են եղել նաև դրամատիզացիայի ենթարկված քարոզները, ներբողյանները, որոնց մեջ դիմառնական եղանակով՝ աշխույժ դիալոգի և խորիմաստ մոնոլոգների միջոցով՝ ներկայացված են լինում բազմաթիվ գործող անձինք...»<sup>25</sup>։ Այստեղ եկեղեցական դրաման ներկայանում է անհամեմատ շքեղ, քան վկայում է մեզ հայտնի գրական նյութը։ Այսպիսին է XIV—XVI դարերի արևմտաեվրոպական միստերիան, որը մեր երեակայության կողմնորոշչէ չի կարող լինել։ Դժվար է պատկերացնել հոգեոր դրամայի երեսույթը XIII—XIII դարերի քաղաքային կյանքում։ Միջինասիական անպատճերից եկող քամին կասեցնում էր կյանքի բնականոն ընթացքը։ Այո, «դրամատիզացիայի ենթարկված քարոզը աշխարհիկացման գծով մի քայլ առաջ է գնում լիթուրգիական դրամայից»<sup>26</sup>, բայց պետք է նկատի ունենանք նաև հայոց միաբնակ եկեղեցու ձգտումները, նաև՝ հակազդումներն ընդգեմ լատինադավանության։ Մասամբ ճիշտ է, թե հնարավոր էր հոգեոր դրամայում

«իրական կյանքում դիտած հատուկ տեսարաններ նկարագրել, վառ երանգներ քաղել ասոկրիֆներից, կամ երգիծական ու կոմիկական միջաղեպեր վերցնել ժողովրդի կյանքից ու նրա բանավոր ստեղծագործություններից»<sup>27</sup>։ Այս երեսույթը շատ վառ էր արևմտաեվրոպական կաթոլիկական եկեղեցական միջավայրում և այն էլ ուշ՝ XV—XVII դարերում։ Անվիճելի է սակայն Կ. Մելիք-Օհանջանյանի թույլ ակնարկը, որ դրամատիկական մշակման ենթարկված քարոզը եղել է ոչ ծիսակարգային, այլ զուգընթաց երևույթ։ Այդպես էլ պետք է լինել։ Եկեղեցու բեմը չէր կարելի խաղավայրի վերածել և ոչ էլ կարելի էր Քրիստոսի դերակատար քահանային կամ եպիսկոպոսին ավանակի վրա նստեցրած մտցնել եկեղեցի։ Մի բան է Ծաղկազարդի շարականը՝ խոսքային ու երգային պատկեր («...նստեալ ի նորոյ աւանակի»), մի բան է «Մուտք երուսաղեմ» նկարը Հաղպատի ավետարանում (1211), ուր Քրիստոսն ավանակին նստած ուղղված է դեպի եկեղեցու դուռը, և բոլորովին այլ բան՝ թեմայի կենդանի ներկայացումը, որ պատմականուրեն բացառվում է<sup>28</sup>։ Արևմտաեվրոպական ուշ միջնադարյան միստերիաների պատկերը հայ իրականություն տեղափոխելու կամ հայացնելու ոչ անհրաժեշտություն, ոչ էլ հիմք ունենք։ Եթե համանման երեսույթ լիներ հայ միջնադարում, ավանդությունը ինչ-որ տեսքով մեզ կհասներ։ Եկեղեցին ավանդապահ հաստատություն է և չի կարող արարողությունը հիմնովին մոռացության տալ։ Այս, ինչ եղել է լատինական եկեղեցում ու վերածվել հրապարակային թատրոնի, դժվար է պատկերացնել հայոց եկեղեցական միջավայրում։ Պետք է մեկընդումիշտ ընդունենք, որ դրաման միջնադարում եկեղեցու կողքին է՝ գավթում, ճեմարանում, բակում, դռան մոտ, բայց ոչ բեմում։ Պատարագը բեմական և պաշտոնական փաստ է և այն էլ՝ ոչ տեսլարանային, այլ լսողական-վերացական-տրանսցենդենտալ աշխարհ։ Պատարագը ելակետն է և

կողմնորոշիչը գաղափարա-գեղագիտական առումով։ Եթե լիթուրգիական դրամայի տեղը գավիթն էր, ապա մյուս կարգի՝ պաշտոնակարգից ու կանոնից դուրս ծեսերը կամ ընթերցումները գավիթից էլ դուրս պետք է լինեին։

Աստվածաշնչային և ավետարանական թեմաների բանաստեղծական-դրամատիկական մեկնությունները, տեսանելի ու լսելի օրինակների վերածելը սկզբից իսկ ուներ կրթական նպատակ, սկսվել էր կրթական միջավայրում և այնտեղ էլ պետք է շարունակվեր։ Այս է երկույթի տրամաբանությունը։ Երկույթի ուշ դրսեռումները գուցե և իրականացում չեն ստացել, բայց անտարակուսելիորեն ծագում են նույն անհրաժեշտությունից։ Հայոց ուշ միջնադարում հատկապես չենք կարողանում տեսնել դրամատիկական բանաստեղծության, որպես թատերակարգային երկույթի, հասարակական հողը։ Բայց մտավոր-կրթական միջավայրը կար, վանքերը գործում էին, վանականները կարդում, օրինակում ու մեկնում էին հին մատյանները ու երազում կյանքի կոչել հին տեսիլքները։

Դպրոցական ճարտասանությունը, որքան հեռանում ենք դասական միջնադարից, այնքան հեռանում ու խամրում է։ Վկայությունները չեն երկում։ Առաքել Սյունեցին, օրինակ, գրել է քերականական մեկնություն և վերարծում է ճարտասանական կանոնները, բայց կա՞ արդյոք առնչություն նրա այս գործի և տրամախոսությամբ գրված «Աղամգրքի» միջև։ Իրողությունն այն է, որ «Աղամգրքի» երկրորդ տարբերակը արտաքին ձևով ավելի վիպական-բանաստեղծական է, քան դրամատուրգիական։

Թրակացու միջնադարյան վերջին մեկնիչը՝ Դեյթունցին (XVII դ.) նույնպես անդրադառնում է մեզ ծանոթ կանոններին, բայց ճարտասանական լսարանի գոյությունը XVII դարի հայ միջավայրում տարակուսելի

է։ Դպրոցի ու կրթության նկարագիրը փոխվել էր. բարձրագույն ճեմարաններն ու վարդապետարանները վերացել էին, վանական դպրատները հասել ծխական դպրոցի մակարդակի։ Ուշ միջնադարյան քերականական մեկնությունները կրկնում են վաղ միջնադարից ավանդված կանոններն ու դրույթները, բայց ճարտասանական արվեստի վաղ միջնադարից ավանդված միջավայրը չի երևում։ Կանոնների նշանակությունը կամ գրքային-տեսական էր, կամ դրանց ուսուցումը թերևս հեռուն չէր գնում անդիր արվող խոսքերից ու ձեւական օրինակներից։ Մեկնություններն արտագրվում են, ընթերցումները շարունակվում, գրական փորձերը մշակվում, իսկ լսարաններն ու ունկնդրության միջավայրը փոքրանում է, ճարտասանությունը գուրս չի գալիս հասարակական հրապարակ, չի վերաճում թատրոնի, չի կատարվում այն, ինչ կատարվում էր եվրոպական աշխարհում։

Ուշ միջնադարում ենթագառութիւն բառի առարկայական նշանակությունն ա՞յն էր, ինչ ժառանգված էր ուշ հելլենիստական դպրոցից և հասնում էր մինչև Գլաճորի ու երգնկայի համալսարանները։ Տաթևի համալսարանում, թվում է, պետք է շարունակվեր այդ ավանդությունը, բայց Առաքել Սյունեցու քերականական մեկնությունը, որ ստեղծվել է այդ միջավայրում, տարբեր է եսայի Նչեցու, Ծործորեցու և Պլուզի մեկնություններից և շատ դժվար է պատասխանում մեր հարցին։

Մեր դրույթին, այսպիսով, տալիս ենք հարցական տեսք՝ այլ մեկնությունների գոները չփակելու նպատակով։

Ուշ միջնադարում տեսնում ենք ճարտասանական կանոններին աղերսվող գրական իրողություններ, որոնց դրդիչները կամ առաջացման պատճառները սկզբունքորեն նույնն են, ինչ եվրոպական աշխարհում։ Տարբեր են սակայն դրսեռման ձևերը։ Թեմայի կամ բարոյախո-

սական դրույթի դիդակտիկ մեկնությունը մի դեպքում առակային-զրուցատրական է, մյուս դեպքում դրամատիկական-թատերային, մի դեպքում պատարագային-կացրդական, ինչպես Լամբրոնացու «Ներողեանը», Երզնկացի-Պլուզի «Աստվածածնի ողբը», մի դեպքում երգային-«օպերային», ինչպես Բաղիչեցու «Աւետեաց տաղը», մյուս դեպքում ռեալիստական-դրամատիկական պատկերների կապակցում, ինչպես հին ֆրանսիական «Փրկչի Հարությունը», այլ դեպքում՝ խաղային տարերքով հագեցված, սուր դրամատիկական, ինչպես «Յաղագս անդամալուծին» զրույցը: Վերջապես, տարբեր են ստեղծման պայմանները: Լամբրոնացին նկատի է ունեցել եկեղեցու բեմը, XII դարի ֆրանսիացի անհայտ հեղինակները՝ և ճեմարանի բեմ, և հրապարակային ներկայացում, Բաղիչեցին դիմում է եղանակող երգիչ-երաժիշտներին, իսկ Կրակայից երուսաղեմ եկած ներսես աբեղան զրում է վանական խցում, բայց բերում է հրապարակային խաղի կենդանի թրթիո:

Բեմադրական նպատակներ հետապնդող դրական ստեղծագործություններին, եթե զեկավարվենք արևմտաեվրոպական օրինակներով, որպես կանոն, հատուկ է հեղինակային ռեժարկը, երբեմն ընդարձակ հիշեցումներն ու բեմադրական ցուցումները: Այս ամենը կա նաև պատարագային տեքստերում, որ նշանակում է, թե միջնադարին բնավ խորթ չէ, այսպես կոչված, «հեղինակային ռեժիսուրան»: Այդ ակնարկները չկան հայ միջնադարյան դրամատիկական բնույթի զրույցներում ու բանաստեղծություններում, եթե նկատի չառնենք Լամբրոնացու ծիսական նպատակները և Բաղիչեցու հիշատակարանային բնույթի ակնարկը: Առայժմ պետք է հաշվի նստենք դրական իրողությունների հետ, միշտ իմանալով, որ հայոց ուշ միջնադարում մտքի ու ոգու դրսերման ասպարեզը վանքերն ու ճեմարաններն են, և հասարակական հրապարակը նեղ է դրական դրամայի

համար: Այդ ասպարեզը լայն է արևմտաեվրոպական, մասնավորապես ֆրանսիական քաղաքային միջավայրում: Կա միաբնակության ու երկարնակության խնդիր, որ հոգեոր դրամայում նույնն է, ինչ գաղափարականության և առարկայականության խնդիրը: Հայ եկեղեցին գաղափարական է, հայ ճեմարանում դրամատիկականի ըմբռնումը վերացական է, և բախումը կամ փոխհարաբերությունը հանգում է դրությունների ու սկզբունքների պարզ դիմակայության: